



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա. ՎԱՆՔՐԵԱՆ

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՊՕԼՇԵՒԻԶՄ

Յառաջարկ

Ռ. ԴՅՐՈՒՆԵԱՆԷ






1922

Տպարան «Հայրենիք»

Պոստրև







Ընդամենը 329.14 (479.25)

Հունիս 26-1-95

Հունիս

A II  
81184

202

Առաջին հայ ընկերվարական, հայ աշխատաւորութեան ազգային ֆաղափական ու տնտեսական անկախութեան անխոնջ մարտիկ, հայկական ուրոյն ֆաղափակրթութեան մուեռանդօրէն հաւատաւոր Եւ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր Երեւ Մեծ Հոգիներուն՝

~~565~~

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

ՌՈՍՏՈՄԻ

ԶԱԻԱՐԵԱՆԻ

~~7~~  
~~23~~

նուիրական եւ յարէտ անմոռանալի յիշատակներուն :

Երկիւղածօրէն՝

Ա. ՎԱՆԱՐԵԱՆ





Գրադարան  
ՊԵՏԱԿԱՆ ՍՍ.ԳԳԱՂ.ՆՅՆԻ  
Հայկա

## ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ընկերվարութիւնը մեր մէջ ուսւ քաղաքական  
մտքի տիրական ազդեցութեան կնիքը կը կրէ եւ  
խոշոր չափով նաեւ անոր արդիւնքն է :

Մեր երիտասարդութիւնը տասնեակ տարիներ  
սնուեր է ուսւ յեղափոխական մտաւորականութեան  
զաղափարներով, իտէալներով ու երազներով :

Պոկուած իր մայրենի երկրէն ու ժողովուրդէն  
եւ ինկած օտար աշխատեցող միջավայրերու մէջ, հայ  
երիտասարդը բնականօրէն յաճախ կորսնցուցեր է  
իր հեռաւոր հայրենիքի դաժան իրականութեան  
հաստատուն գետինը իր մտքի բնականօրէն զարգաց-  
ման համար, ներշնչուեր է առաջաւոր երկիրներու  
յոյզերով, իտէալներով եւ, շատ մը առողջ, պիտա-  
նի ու կենսական զաղափարներու հետ միասին, իւ-  
րացուցեր է նաեւ վատառողջ ձգտում մը, հիւան-  
դագին սէր մը դէպի այն ամէնը, որ օտար է, մեզ  
համար անիրական է, վաղաժամ է, երազական է . . .

Ռուս առաքելական ողին իր խորը դրոշմը դրած  
է մեր մտաւորական սերունդներուն վրայ, անդի-  
մազրելիօրէն համակելով դանոնք եւս այն անսահ-  
ման հաւատքով, թէ Արեւելքի մէջ հայը կոչուած է



արեւմտեան քաղաքակրթութեան եւ լոյսի ջահը լինելու :

Ժամանակակից գիտական սոցիալիզմը Արեւմուտքի դրամատիրական տնտեսութեան զարգացման արդիւնքն է : Սոցիալիստական շարժման նուաճումները եւ վերջնական յաղթանակը մեծապէս պայմանաւորուած են դրամատիրական տնտեսութեան անարդել զարգացումով , որ իր ծոցին մէջ պիտի պատրաստէ , հասունցնէ ապագայ , աւելի կատարելագործուած եւ աւելի արդիւնաւէտ նոր հասարակարգը , — սոցիալիստականը :

Արեւելքը տակաւին կ'ապրի նահապետական տնտեսութեամբ : Քաղաքակրթութիւնը , տնտեսական առաջդիմութիւնը այնտեղ ամենէն առաջ եւ ամենէն աւելի կը պահանջէ լիակատար մղում դէպի դրամատիրական տնտեսութեան , կապիտալիզմի զարգացումը , առանց որու սոցիալիստական գաղափարներու անդգոյշ , անվերապահ պրոպագանդը անխուսափելիօրէն կը դառնայ սերմերու ապարդիւն ցանում մը աւազոտ գետնի մը վրայ եւ կամ ծապլվարեան քանդիչ գործ մը Արեւելքի ուժասպառ եւ քայքայուած երկիրներու մէջ :

Կապիտալիստական տնտեսութիւն չեղած տեղը սոցիալիստական գործ չի կարելի ընել : Իսկ , եթէ այնու ամենայնիւ կատարուի այդպիսի գործ մը , անիկա իրերու երկաթէ անհրաժեշտութեամբ պիտի տայ միմիայն բացասական հետեւանքներ , ինչպէս որ մենք տեսանք այդ՝ Ռուսիոյ մէջ :

Պուշեւիկները կոյրերուն եւ խուլերուն իսկ հասկնալի դարձուցին , թէ ո՛րքան վտանգաւոր եւ վնասակար բան է սոցիալիստական փորձեր ընել անպատրաստ , կապիտալիստօրէն անմշակ , յետամնաց

իրականութեան մը մէջ: Երբ ընկերվարական գա-  
ղափարի իրականացման համար անհրաժեշտ տնտե-  
սական, ընկերային եւ կուլտուրական հողը չկայ,  
բռնութիւնը անխուսափելի կը դառնայ իր բոլոր  
աւերումներով եւ վայրենութիւններով:

Սոցիալիզմը հայ ժողովուրդի եւ երկրի համար  
այս պահուստ քաղաքական հրատապ հարց մը չէ, այլ  
գերազանցապէս գաղափարական, տեսական, եթէ  
կ'ուզէք, բարոյական խնդիր մը: Անիկա հեռաւոր  
խտէալ մըն է լաւագոյն հասարակարդի մը մասին,  
որ ունի ժամանակակից քաղաքակիրթ մարդկու-  
թեան ամենէն մաքուր, անձնուէր ու գաղափարա-  
պաշտ մասը:

Մեր մտաւորականութիւնը, մեր երիտասարդու-  
թիւնը, որ այնքան դիւրագոյն է մարդկային վսեմ  
գաղափարներուն հանդէպ, անյաղթելի հակում մը  
ցոյց կուտայ նաեւ դէպի սոցիալիստական խտէալ-  
ները: Ատիկա շատ բնական է եւ հասկնալի:

Հայ քաղաքական գործիչը հայ լինելէ զատ ան-  
գամ մըն է ժամանակակից միջազգային քաղաքա-  
կիրթ հասարակութեան եւ, իբրեւ այդպիսին, ան-  
խուսափելիօրէն մասնակից է անոր մտաւորական  
կեանքին, ձգտումներուն ու աշխատանքին:

Սոցիալիզմը բնկերային ձգտում մըն է տնտե-  
սական կեանքին մէջ մարմնաւորելու հասարակա-  
կան գերագոյն արդարութիւնը:

Հայ մտաւորականը չի կարող անտարբեր լինիլ  
նաեւ դէպի հանրային արդարութեան ազադակող  
պահանջը քաղաքակիրթ մարդկութեան առաջաւոր  
տարբերու կողմէ: Եւ իր սրտին մէջ պինդ պահե-  
լով ընկերվարական խտէալը, իր ամբողջ հողով լի-  
նելով անոր դրօշակակիր միջազգային առաջաւոր

տարրերուն հետ միասին՝ հայ գործիչը միաժամանակ իր ուղբերուն տակէն չպիտի կորսնցնէ երբեք հայրենի երկրի իրական հողը եւ անսահման համբերութեամբ, տոկունութեամբ ու հետեւողականութեամբ, ամէն բան մէկդի թողած, պիտի կերտէ, ստեղծէ հայ ազգի քաղաքական ազատութեան այն շէնքը, որու միջոցով միայն անիկա կրնայ յետոյ նախապատրաստել իր տնտեսական եւ ընկերային իտէալներու ապագայ յաղթանակը:

Մեր երիտասարդ ընկեր Ա. Վանարեանի այս դրքոյկը փորձ մըն է հանրամատչելի ձեւով ներկայացնելու հայ ընթերցողին Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարական աշխարհը, ընկերվարական իտէալները եւ ըմբռնումները: Գրքոյկը, որ նախապէս հրատարակուած է յօդուածաշարքի ձեւով «Հայրենիք»ի մէջ, պատասխան մըն է Դաշնակցութեան գաղափարներու գուհիկ քննադատներուն թէ՛ աջէն եւ թէ՛ ձախէ:

Այն գաղափարները, որ կը պաշտպանէ մեր երիտասարդ ընկերը, ներկայացուած են Հ. Յ. Դաշնակցութեան որոշ տարրերու ըմբռնումներուն համաձայն եւ կ'արտայայտեն մեր կուսակցական երիտասարդութեան որոշ շրջանի մտայնութիւնը:

Համաշխարհային պատերազմը, ռուսական եւ գերմանական մեծ յեղափոխութիւնները, տնտեսական եւ ընկերային աննախընթաց տագնապը, որ կ'ապրի այսօր մարդկութիւնը, եւ վերջապէս բանւորութեան ու ընկերվարական բանակի պառակտումներն ու հակամարտութիւնները անհրաժեշտ կը դարձնեն հիմնական վերագնահատութեան աշխատանքը նաեւ ընկերվարական ծրագիրներու, գաղափարներու եւ գործելակերպի մասին:

Հ. Յ. Գաշնակցութիւնը իբրեւ ընկերվարական ծրագիր ունեցող կուսակցութիւն, հարկադրուած է նոյնպէս մասնակցիլ վերագնահատման այդ աշխատանքին՝ ճշդելու համար իր դիրքը մտքերու այն ահռելի քաղսին մէջ, որ կը տիրէ այսօր ընկերվարական բանակին մէջ:

Ընկեր Ա. Վանարեանի նպատակը եղած է աւելի համեստ. — ներկայացնել ընկերվարական այն ըմբռնումները, որ 1904 թուէն ի վեր ապրելը են մեր երիտասարդութեան մտքի մէջ եւ ձեւակերպուել են 1907 թուին Հ. Յ. Գաշնակցութեան ծրագրի մէջ:

Կենդանի լեզուով եւ փոլեմիկ ձեւով դրուած այս գրքոյկը ընթերցանութեան հետաքրքրական նիւթ մը կրնայ լինիլ բոլոր անոնց համար, որոնք կը գրադին ծրագրային եւ ընկերվարական խնդիրներով:

Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ



## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ

Պէտք է տապալել Դաշնակցութիւնը. —

Նորութիւն չեն քննադատութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին եւ քաղաքականութեան մասին. նորութիւնը՝ քննադատողներն են :

Չափազանց շահեկան եւ միանգամայն հաճելի է՝ վերլուծել էութիւնն ու հոգեբանութիւնը այդ «քննադատողներ»ուն : Անոնք երբեմն կը կորսուին հրապարակէն, կամ խիստ նուազկոտ կը դառնայ իրենց ձայնը (թերեւս շատ պոռալնուն համար), իսկ երբեմն ալ՝ «նոր ու զօրաւոր փաստեր» շալակած ու մանաւանդ «նոր ոյժեր»ով գօտեպնդուած՝ կ'ողողեն ու կ'աղմկեն հրապարակը :

Դիտելի է որ՝ «քննադատողներ»ն ալ կ'ունենան իրենց երկու «կողմ»երը, աջակողմ եւ ձախակողմ. թէեւ նուազ թիւ չեն կազմեր եւ կողմնադուրկները, նաեւ այնպիսիները, որոնք իրենց ուղեղովն ու մտածելակերպովը քառակողմ են, չըսելու համար բազմակողմ :

Ուշագրաւ է եւ այն պարագան որ, քննադատող

հոսանքներուն միջեւ աւելի դիւրաւ եւ աւելի սրտա-  
նուշ համերաշխութիւն կը դոյանայ, քան թէ քրն-  
նադատուողներուն :

Արդարեւ ամէն անգամ որ հայ ժողովուրդին  
արիւնարրու թշնամիները արշաւանք կը դործեն Հ.  
Յ. Գաշնակցութեան վրայ, խորտակելու անոր ոյժն  
ու հեղինակութիւնը, նկատելով զայն որպէս միակ  
ու իրական արտայայտիչը՝ հայ ժողովուրդի դո-  
յութեան, կամքին ու անոնական կորովին, իսկոյն  
երեւան կուգան այդ քննադատները, եւ ինչ ծա-  
ղում, ինչ համոզում ու ինչ մտադրութիւն ալ որ  
ունեցած ըլլան, մէկդի կը դնեն իրենց տարակար-  
ծութիւնները, կը միանան ու կը համերաշխին, ի-  
րենց նշանարան ունենալով՝ պէտք է տապալեմ  
Գաշնակցութիւնը, որովհետեւ եթէ այս անգամ ալ  
չյաջողիմ, ա՛լ կորած եմ յաւիտեան :

«Տապալել» ու այս գերադոյն մտահոգութիւնը  
ո՛չ մէկ դիջումի կը հանդուրժէ : Ատոր համար ալ՝  
ներկայացող ամէն առիթը կ'օգտադործեն : Ո՛չ ժա-  
մանակը, ո՛չ տեղը, ո՛չ սրահազաները մազաչափ  
անգամ չեն ազդեր այդ քննադատողներուն վրայ :

Աւելին եւս. անոնք երբէք անպատեհութիւն  
չեն նկատեր զրկախառնուելու այն տեսակ անձերու  
հետ, որոնց մէջքին վրայ, հայ ցեղին սպառ-  
նացող արիւնոտ եաթաղանն է պահուած : Անոնք կը  
պազտուին այն տեսակ արարածներու հետ, որոնց  
ո՛չ թէ շրթունքը, այլ շունչն իսկ կը թունաւորէ  
հայ մթնոլորտը : Ու դեռ այդ քննադատները «եղ-  
բայրօրէն» կը սեղմեն ձեռքերը այն դահիճներուն,  
որոնց մինչեւ եղունգին ծայրերը կարմիր են կտրեր՝

հայ մանուկին ու հայ կոյսին անմեղ արիւնէն . . . :

Եւ սակայն ի՞նչ փոյթ, չէ՞ որ բոլոր այդ ոճ-  
րագործներն ու դահիճներն ալ դէմ են Հ. Յ. Դաշ-  
նակցութեան եւ նպատակադրած են՝ «տապալել»  
դայն, այդչափը միայն բաւ է, որպէսզի գործակցին  
անոնց, եղբայրանան անոնց, եւ զանոնք հրաւիրեն՝  
«Հայաստան աշխարհը Դաշնակներէն մաքրելու  
համար» :

Այսչափը՝ քննադատողներու շարժառիթնե-  
րուն, հողերանութեան եւ մտահոգութեան մա-  
սին : Անցնինք այժմ անոնց հիմնական քննադա-  
տութիւններուն եւ վերլուծենք անոնց արժէքը՝  
սկզբունքային տեսակէտէն, առանց նկատի առնելու  
անոնց բացարձակ մեծամասնութեան յետին նպա-  
տակները եւ մոռնալով պահ մը՝ անոնց անձերուն  
ներկայացուցած արժէքը, թէ ո՞րքան իրապէս  
սկզբունքի մարդ եղած են իրենք, եւ թէ ո՞րքան հե-  
տեւողական են եղած իրենց սկզբունքներուն :

Ըսինք թէ Հ. Յ. Դաշնակցութեան քննադատնե-  
րը առ նուազն երկու կողմ ունին, ու կ'ըլլան .— ա-  
ջակողմեան եւ ձախակողմեան :

Ուշագրաւ է որ երկուքին ալ քննադատութեան  
առանցքը կը կազմեն ընկերվարութիւնը եւ Հ. Յ.  
Դաշնակցութեան ընկերվարական հանդամանքը :

Ի՞նչ կ'ըսեն աջակողմեան քննադատները .—

Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ ընդունած է ընկերա-  
յին վարդապետութիւն մը, ընկերվարութիւնը, որ՝

Ա. — Ինքնին անիրականալի ցնորք մըն է .

Բ. — Մեր միջավայրին մէջ հող չունի եւ ան-



համապատասխան է հայ ժողովուրդին ցեղային իրական շահերուն :

Գ. — Ընկերվարական Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին հատուածները կը պառակտէ , , անհա-  
ճերաշխութիւն կը սերմանէ , եւ այլամերժ քաղա-  
քականութեան մը կը հետեւի միւս կուսակցու-  
թեանց հանդէպ :

Դ. — Դաշնակցութեան ընկերվարական հան-  
դամանքը պատճառ եղաւ որ եւրոպական քափիթա-  
լիսթ պետութիւնները խորթ աչքով նային Հայաս-  
տանի կառավարութեան :

Ե. — Ընկերվարական Դաշնակցութիւնը վախ-  
ցուց եւ խրաչեցուց հայ եւ օտար դրամատէրները  
որ չհամարձակին ու չուզեն իրենց դրամադուխտ  
Հայաստանի հողէն ներս մտցնել եւ շահագործել ,  
վախնալով որ դաշնակցական կառավարութիւնը  
պիտի յափշտակէր եւ բռնադրաւէր դրամատէրե-  
րուն հարստութիւնները :

Զ. — Ընկերվարութիւնը «հակառակ ըլլալով  
ազգութեան դադափարին եւ կողմնակից ըլլալով  
ազգերու ձուլման» , ընկերվարական Դաշնակցու-  
թիւնը ամէն վայրկեան կը դաւաճանէ հայութեան  
ազգային գոյութեան դէմ : Եւ հետեւաբար՝ կ'եզ-  
րակացնեն աջակողմեան քննադատները .

Է. — Պէտք է որ Դաշնակցութիւնը ոչնչանայ  
ու քաղաքակէս , ասպարէզ տալով ոչ-ըն-  
կերվարական եւ «ազգասէր» տարրերուն :

Ի՞նչ կ'ըսեն ձախակողմեան  
ֆննադատները . —

Ա. — Դաշնակցութիւնը իր տարրերովը , իր ղե-

կալարներովը եւ իր վարած քաղաքականութիւնովը՝ հակաընկերվարական է, ու ամենեւին չէ ուզած իրականացնել հայ կեանքի մէջ, իր ծրագրին ընկերվարական պահանջները:

Բ. — Դաշնակցութիւնը ըլլալով պուրթուական մտածողութեան տէր կուսակցութիւն մը, Հայաստանի հանրապետական երկամեայ դոյութեան ընթացքին, գործիք եղաւ կապիտալիստ պետութիւններու ձեռքին:

Գ. — Դաշնակցութիւնը եթէ ճշմարիտ ընկերվարական կուսակցութիւն մը եղած ըլլար, առաջին օրէն իսկ կը միանար ոռւս պօլշեւիկներուն եւ կը պայքարէր եւրոպական էմփէրիալիզմի դէմ, յանուն համաշխարհային յեղափոխութեան:

Դ. — Այն օրէն որ Ռուսաստանի մէջ հաստատ հող գտաւ զօրաւոր պօլշեւիկեան կառավարութիւն մը, այդ օրէն իսկ Հայաստանի համար կ'ստեղծուէր ո՛չ միայն քաղաքական, այլ եւ տնտեսական ազատութեան կարելիութիւն. երբ հայ ժողովուրդը կ'ազատուէր ո՛չ միայն քաղաքական բռնաւորներէ, այլ եւ վերջ կը տրուէր իր տնտեսական գերութեան, ու կը հաստատուէր համայնատիրական իրաւակարգ մը, որուն հակառակ ընթանալով, Հ. Յ. Դաշնակցութիւնը դարձաւ հակայեղափոխական, հակընկերվարական, աջակողմեան կուսակցութիւն մը եւ հետեւաբար՝

Ե. — Պէտք է տապալել եւ հրապարակէն անհետացնել Դաշնակցութիւնը, եւ ասպարէզը քողով հայ պօլշեւիկներուն եւ բոլոր անոնց, որ կը հաւատան քէ հնչած է ժամը ինչպէս համաշխարհային՝

նաեւ հայ ժողովուրդին տնտեսական ու քաղաքական նշմարիտ ազատութեան :

Ինչպէս կը տեսնուի, թէ՛ աջակողմեաններուն եւ թէ՛ ձախակողմեաններուն քննադատութեան առարկան է Հ. Յ. Դաշնակցութեան ընկերվարական հանդամանքը եւ եզրակացութիւնն է անոր տասուլումը :

Աւելի պարզ խօսելով՝ մին՝ աջակողմը կ'ըսէ . «Դաշնակցութիւնը ընկերվարական ըլլալուն համար Հայաստանը կործանեցաւ» . իսկ միւսը՝ ձախակողմը կը պնդէ թէ՛ «Դաշնակցութիւնը պահանջուած չափով ծայրայեղ ընկերվարական չըլլալուն համար կործանուեցաւ Հայաստանը» :

Կը տեսնէք այժմ թէ՛ ո՛րքան մեծ տարբերութիւն կայ երկուքին քննադատութիւններուն միջեւ, եւ սակայն ամենեւին մի զարմանաք, այդ պարագանքնաւ արգելք մը չէ, որ այս պահուս երկուքի միջեւ տիրէ սեղմ ու սրտառուչ գործակցութիւն մը, որ մին չնպաստաւորուի միւսէն եւ որ իրենց ոյժերն ու հարուածները միացնեն հասարակաց թշնամիին դէմ . չէ՞ որ երկուքին ալ նպատակակէտը միեւնոյնն է . — «Տասուլել Դաշնակցութիւնը» :



Արդ, յիշեալ երկու տեսակի քննադատներուն ալ դրողման առարկան միեւնոյնը ըլլալուն — ընկերվարութիւնը—, հարկադրուած ենք նախ եւ առաջ բացատրել թէ ի՞նչ է այդ «վիճելի» վարդապետութիւնը, ի՞նչ է ընկերվարութեան էութիւնը :

Այս վարդապետութեան էութեան վերլուծումն է որ պիտի տայ պատասխանները թէ՛ աջակողմեան եւ թէ՛ ձախակողմեան քննադատներուն : Անկէ է որ

պիտի հասկնանք Ա.— Դաշնակցութեան ընկերվա-  
րական հանգամանքը իրապէս վնա՞ս բերաւ հայ ժո-  
ղովուրդին կենսական շահերուն եւ Բ.— Թէ որեւէ  
ուրիշ կուսակցութիւն հայ միջավայրին մէջ կրնա՞ր  
աւելի ընկերվարական գործունէութիւն մը ունե-  
նալ՝ քան ինչ որ ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

~~2377~~

~~495~~  
A 11  
87184



## Ի՞նչ է ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հաւասար Աշխատանք,  
հաւասար վայելք. —

Ընկերային վարդապետութիւն մը՝ որ նպատակ ունի մարդկութիւնը ազատել ներկայի տնտեսական գերութենէն, վերջ տալ մասնաւոր սեփականութեան եւ դասակարգերու տիրապետութեան, միջոցներ տալ որ ամէն անհատ հնարաւորութիւն ունենայ զարգացնելու իր Ֆիզիքական, մտաւոր եւ բարոյական կարողութիւնները, պարտաւորիչ աշխատանք սահմանել բոլորին համար, համաձայն իւրաքանչիւրի կարողութեան եւ ընդունակութիւններուն, եւ յետոյ կատարեալ իրաւունք տալ ամէն անհատի՝ թափուած աշխատանքին արդիւնքը հաւասար կերպով վայելելու:

Ընկերովարութիւնը կ'ընդունի թէ ներկայ դրամատիրական կարգերը՝ թշուառութեան մատներ են մարդկային ցեղը, թէ այդ կարգերը անարդար են եւ կորստաբեր եւ հետեւաբար պէտք է խորտակուին ու փոխուին անոնք՝ ի խնդիր նոր, արդար եւ

բանաւոր կարգերու, որոնց ներքեւ մարդը մարդուն զայլ չզառնայ եւ դասակարգերն ու ազգերը իրարու արիւնը չծծեն:

Որո՞նք են ներկայ դրամատիրական կարգերուն յոռի կողմերը, որ դժբախտութեան ծովի մը վերածեր են աշխարհը մարդ արարածներէն մեծագոյն զանդուածներուն համար:

Ա. Աշխատանքի անհաւասարութիւնը. —

Մարդկային ցեղին համար պիտանի աշխատանք կատարողները միայն մասնաւոր դասակարգեր են, որոնց աշխատաւոր դասակարգ անունը կուտանք: Շնորհիւ ներկայ դրամատիրական կարգերուն՝ միլիոնաւոր մարդիկ կը մնան անգործ եւ անաշխատ, եւ կամ կը կատարեն այն տեսակ աշխատանքներ, որոնցմէ մարդկային ընկերութիւնը որեւէ օգուտ չ'ստանար. որովհետեւ անոնց աշխատանքովը հարրստութիւն մը չէ որ կ'ստեղծուի: Յիշենք մէկ քանիսը միայն չաշխատող եւ կամ անպէտք աշխատանք կատարող դասակարգերէն.

1. — Դրամատէր (կապիտալիստ) դասակարգը. —

Շնորհիւ այն հանգամանքին, որ անխոստովանելի միջոցներով տէր դարձեր է ան՝ անսահման դրամագլուխի եւ հարստութեան, դրամատէր դասակարգը իր կեանքին բովանդակ տեւողութեան մէջ մատը մատին վրայ չի դներ հասարակական ստեղծագործ աշխատանք մը կատարելու համար: Դրամատէրերը շատ անգամ չեն ալ տեսած իրենց անունով հիմնուած հարիւրաւոր այն գործարանները, ուր հարիւր հազարներով գործաւորներ կ'աշխատին, եւ սակայն որոնց ճակտին քրտինքը եղող մի-

լիոնաւոր ոսկիները իրենց զրպանը կը հոսին : Գրամատէր դասակարգը իր առանձնաշնորհեալ գիրքին պատճառով միտքէն անգամ չ'անցներ որեւէ ֆիզիքական աշխատանք կատարել, որովհետեւ պէտք չունի անոր, այլ իր ժամերը կ'անցնէ զեղխութեան ու յղիանքի մէջ : Իր միակ մտածումն է թէ ինչպէս ընէ որ նորանոր վայելքներ եւ հաճոյքներ ստեղծէ իրեն համար, եւ մսխէ իր միլիոնները :

2.— Զօրքն ու գինուորական դասերը .—

Երկաթագործը, կօշկակարը, դերձակը, հիւսնը, նկարիչը եւ այլն, բոլոր այս աշխատող դասերը, մարդկութեան համար պիտանի հարստութիւններ կ'ստեղծեն. իսկ ի՞նչ կ'ընէ զօրքը : Ան կամ զօրանոցներու մէջ լեցուած՝ իր միտքն ու ուղեղը կը բթացնէ ծուլօրէն, եւ կամ խրամներու մէջ, սուինը ձեռքին՝ իր նմանին արիւնը կը թափէ : Որով զօրքին ու գինուորականին կատարած աշխատանքովը մարդկութեան համար ո՛չ միայն նոր եւ պիտանի հարստութիւն մը չստեղծուիր, այլ նոր թշուառութիւններ կը դարբնուին եւ կը հնձուին միլիոններով աշխատող ձեռքեր :

3.— Կդերական դասերը .—

Մարդկային ազգը ինչո՞վ կ'օգտուի՝ ճիզութիւններուն եւ միսիոնարներուն, իւլէմաներուն եւ շէյխերուն եւ նման դասակարգերէն : Միթէ որեւէ խելքը գլխին դարդացած մարդ՝ պէտք ունի՞ ուրիշ մը դատաւոր կարգելու իր խղճին : Իրականին մէջ ամբողջ կղերական դասակարգը իր հաւատացեալ հօտերուն տգիտութիւնն է որ կը շահագործէ եւ գրգռելով անոնց մէջ կրօնական մոլեռանդութիւնը,

ցեղերը իրարու դէմ կը լարէ եւ գործիք կը դառնայ իշխող դասակարգերուն: Կղերականութիւնը խաչ կը հանէ, խաչհամբոյր կը ժողովէ. սուրբեր կը շինէ անոնց պատկերները կը շահագործէ եւ իր դասակարգին շահն ու տիրապետութիւնը կ'ապահովէ:

Բ. Գործաւորութեան տառապանքը. —

Ներկայ դրամատիրական կարգերը հարկադրած են գործաւորութեան եւ աշխատաւորութեան անմարդկային պայմաններ, որոնց երեսէն միլիոնաւոր երիտասարդ կեանքեր կը խամբին եւ կամ կը ծիրին, ու մարդկային ցեղը ականատես կ'ըլլայ իր լաւագոյն զաւակներուն փճացումին:

Գործաւորութեան մեծագոյն մասը պարտադրութեամբ է իր ֆիզիքականէն վեր աշխատանք կատարելու, դեռնափոք հանքերու խորը, կամ ապականութեամբ գործարաններու մէջ, զուրկ՝ մինչեւ իսկ արեւին լոյսէն եւ բաւարար չափով օդէն:

Գործաւորութիւնը իր ստացած օրավարձովը չի կրնար բաւարարել իր եւ իր ընտանիքին ֆիզիքական, մտաւոր եւ հոգեկան կարիքներուն: Անոր եղած վարձատրութիւնը՝ հազիւ իր ընտանիքին օրապահիկ մը կ'ապահովէ եւ կ'ապրեցնէ զայն, որպէսզի կարենայ յաջորդ օրը նորէն գործարան երթալ եւ գործել ի հաշիւ գործարանատէրին:

Աշխատաւոր դասերը միջոց չունին, զուրկ են նիւթական հնարաւորութենէ, որպէսզի կարենան զարգացնել իրենց միտքը, եւ բարձրագոյն ուսում տալ իրենց զաւակներուն: Այդ է պատճառը որ գործաւորը միշտ տոգէտ կը մնայ, իսկ անոր որդին



հազիւ նախնական կրթութիւն տեսած՝ ստիպուած  
կ'ըլլայ թողուլ դպրոցը եւ իր ծնողքը հոգալ:

Աշխատաւորութիւնը զրկուած է հոգեկան ու  
գեղարուեստական վայելքներէ, մարդկային մտքի  
կատարելութիւնները անոր համար չեն, ան անծա-  
նօթ կը մնայ բարձրագոյն գեղարուեստին, ու ամե-  
նաչափը հազիւ շարաթը անգամ մը կը յաջողի իր  
ընտանիքը շարժական պատկերներու ներկայացումի  
մը տանիլ: Ահա թէ ինչո՞ւ աշխատաւորութիւնը,  
որ անտաշ է իր միտքով, խոսքան է ե՛ւ իր սրտովը:

Ու դեռ աշխատաւոր դասակարգը, հակառակ օ-  
րական 8-10-12 ժամ տառապալից աշխատանքին,  
միջոց չունի գոնէ քիչ մը լաւ սնունդ ստանալու,  
Ֆիզիքանին անհրաժեշտ մարզանքներ տալու, օդա-  
ւէտ տուներու մէջ բնակելու, ամառանոցները օդա-  
փոխութեան երթալու, որովհետեւ դրամ չունի, ո-  
րովհետեւ, իր աշխատանքով ստեղծուած հարստու-  
թիւնը՝ գործարանատէրին դրպանին մէջ կը հանդ-  
չի:

Շնորհիւ այս անարդար դասաւորութեան, որով  
ամէն կարգի վայելքը հարուստին է տրուած, իսկ  
աշխատաւոր դասակարգերուն միայն տառապանքն  
է բաժին թողուած, աշխատաւորութիւնը ամէն  
վաղրկեան տրամադիր զոհ մը կը դառնայ բազմա-  
տեսակ համաճարակներու եւ հիւանդութեանց: Ա-  
մէն տարի միլիոններով մարդիկ կը հնձուին թո-  
քախտէն եւ կամ ուրիշ ցաւերէ, անոր համար որ ա-  
նոնք զուրկ են մնացեալ մարդկային կազմուածքին  
համար անհրաժեշտ սնունդէն, օդէն եւ լոյսէն:

Ամէն ամսու պետութիւններու կողմէ հրատա-

րակուած մահացանկերու անուններէն, առանց այլ  
եւ այլի, ութսունհինգ եւ աւելի առ հարիւրը աշխա-  
տաւոր դասակարգերուն կը պատկանին :

Գ. Տիրող դասերու ընչափադցուքիւնը  
եւ պատերազմի աղէտը. —

Շնորհիւ տիրող դրամատիրական դասակարգին  
ընչաքաղց ցանկութիւններուն, որոնցմով կը ջանան  
մշտապէս նորանոր շուկաներ ստեղծել՝ իրենց ապ-  
րանքներուն վաճառման եւ եկամուտի նոր աղբիւր-  
ներ ճարելու համար, ժողովուրդներու միջեւ միշտ  
վառ կը պահուին ցեղային եւ կրօնական ատելու-  
թիւնները, եւ տեղի կ'ունենան աղիտաւոր պատե-  
րազմներ, իբր թէ ժողովուրդներու անունով, մինչ  
իրականին մէջ, մեծագոյն մասով՝ թելադրու-  
թեամբն ու դաւերովը մէկ կամ միւս պետութեան  
տիրող դասակարգներուն :

Դ. Բարբերու անլուսն  
ու ապականութիւնը. —

Եւ դեռ ներկայ դրամատիրական անարդար  
կարգերուն արդիւնքն է բարքերու ահաւոր ապա-  
կանութիւնը, որուն մէջ կը տապալակի բովանդակ  
մարդկութիւնը, մինչեւ իսկ ամենաերջանիկ կար-  
ծուած աշխարհներու մէջ :

Դրամատիրական կարգերուն մէջ տիրապետող  
տնտեսական անհաւասարութիւնն ու զրկանքներն  
են միակ պատճառը, որով հարիւր հազարաւոր կի-  
ներ հարկադրուած են շուկան վաճառի հանել իրենց  
մարմինն ու մերկութիւնը եւ նոյնչափ տղամարդիկ

ծախել իրենց համոզումները, իրենց միտքն ու հոգին, ի խնդիր մէկ քանի տօլարի... :

Ու ի՞նչ ահաւոր հեղնութիւն է, որ դրամատէր դասակարգը, որ պատճառն ու հեղինակն է տիրող անպատու թշուառութեան եւ բարքերու տարածուն անկումին, իր իրաւունքը համարած է, ամենէն աւելի խօսիլ «յանուն արդարութեան եւ յանուն բարոյականութեան» :

Ահա այս կեղծիքի, դաւերու, շահագործման ապօրէն ու անարդար ընկերային կարգերուն դէմն է գինուած ընկերութիւնը, եւ կը ջանայ վերջ տալ անոնց անխառունակ տիրապետութեան :

## ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ

### ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ի՞նչ տեսակ կարգեր կ'ուզէ հաստատել ընկերվարութիւնը. —

Ո՛չ մէկ բարեխիղճ անձ կրնայ համարձակիլ դովել ու դովարանել, մարդկութեան համար երջանկաբեր, կատարեալ ու անսրբազրելի նկատել ներկայ դրամատիրութեան վատթարագոյն այն կարգերը, որոնց ներքեւ մարդը ստրուկ է մարդուն, ուր եղծուած ու անճանաչելի է դարձած մարդ արարածին աստուածային կերպարանքը, կարգեր, որոնք կը յայտնաբերեն բոլոր այն յոռի կողմերը, որոնց յիշատակութիւնը վերը ըրինք:

— Բայց՝ շա՛տ լաւ, կը հարցնեն, ընկերվարութիւնը՝ ներկայ դրամատիրական կարգերը տապալելէ յետոյ ի՞նչ լաւագոյն կարգեր եւ օրէնքներ ունի պատրաստած՝ զանոնք փոխարինելու համար: Ու շատ շատերը միամտաբար մանրամասնութիւնները

կ'ուզեն իմանալ թէ մինչեւ իսկ ո՞վ պիտի ուզէ կատարել ապագայ հասարակութեան համար «ստորին» աշխատանքները. օրինակ փողոցներու մաքրութիւնը եւլն. , քանի որ ամէն ոք ազատ է եւ կը ցանկայ լաւ պաշտօններու տիրանալ :

Ինչպէս տեսանք, կեանքը ներկայիս մարդկութեան աշխատաւոր մեծամասնութեան համար ծանր բեռ մըն է դարձեր, որջ մը՝ զրկանքներու եւ տառապանքի, մէկ խօսքով կատարեալ դժոխք մը : Արդ՝ աշխատաւոր այդ զանգուածներուն եւ անոնց կամքին ու շահերուն գիտակից ու կազմակերպեալ արտայայտութիւնը եղող ընկերվարութեան համար մէկ մտահոգութիւն միայն կայ, խորտակել այդ դժոխքը եւ վերջ տալ անոր բռնատիրութեան : Դժոխքէն անդին կա՞յ ուրիշ վայր մը, աւելի հրէշային : Մարդկութեան յառաջդիմութեան անիւը թէեւ դանդաղ ու զիկզակ՝ այլ միշտ յառաջ կ'ընթանայ : Որեւէ նոր փոփոխութիւն՝ չի կրնար աւելի յոռի կարգեր հաստատել, քան անոնք, որոնց երկաթէ օղակներուն ներքեւ արնաքամ կ'ըլլայ ներկայիս, աշխատաւոր մեծամասնութիւնը, որ ինչպէս Մարքսը կ'ըսէ՝ դրամատիրական կարգերուն դէմ մղած իր պայքարին մէջ եթէ բան մը պիտի կորսնցնէ, այդ ալ իր ձեռքին շղթաները պիտի ըլլան :

Արդ ընկերվարութեան առաջին ու հիմնական նպատակն է վերջ տալ իշխող դասերու տիրապետութեան եւ տալ աշխատաւոր դասակարգին՝ իր լիակատար ազատութիւնը : Այդ փոփոխութենէն յետոյ եւ հին կարգերու փլատակներուն վրայ կեցած աշխատաւորութիւնն է միայն որ իրաւունք ունի

կերտելու իր նոր շէնքը այնպէս, ինչպէս ինքը կ'ուզէ: ... *հարկէնց խաւարազարքէ տապալի-- ինչ...* ...

Ոչ ոք իրաւունք ունի մտահոգուելու աշխատաւորութեան կողմէ հաստատուելիք նոր կարգերու լաւագոյն արժէքի մասին, որովհետեւ որքան ալ թերի ըլլան անոնք՝ այնուամենայնիւ, անհունօրէն նախընտրելի ու երջանկաբեր պիտի դառնան, ինչու որ անոնք ո՛չ թէ կը պարտադրուին ուրիշներէ, եւ կը ծառայեն մասնաւոր դասակարգերու շահերու պաշտպանութեան, այլ բուն իսկ իր ազատութեան տիրացած աշխատաւորութենէն ու պիտի ապահովեն շահերը՝ բովանդակ մարդկութեան: «Դժոխքէն ազատուած մարդուն աչքը իր ետեւը չըլլար», կ'ըսէ ժողովրդական առածը: Դրամատիրական կեղեքումներէն ձերբազատուած մարդկութեան ալ աչքերը երբէք իրենց ետեւը չեն մնար: Կարելի չէ երեւակայել իր ազատութեան տիրացած մարդ մը, որ ուզէ վատ օրէնքներ սահմանել եւ յօժար կամքով գերութեան շղթաներ կռել իրեն համար:

Արդ, վաղուան ազատ ընկերութիւնն է միայն իրաւասուն՝ գծելու իր բոլոր օրէնքները եւ սահմանելու անոր մանրամասնութիւնները: Իսկ վաղուան այդ ինքնավար ընկերութեան այսօրուան հաւատացեալներն ու նախակարապետները, կուտան միայն այն կարեւոր նպատակները, որոնք հիմը պիտի կազմեն վաղուան իրաւակարգին:

Որո՞նք են վաղուան ընկերավարական իրաւակարգին մէջ թաղաւորելիք հիմնական սկզբունքները:

## Ջ Ն Ջ Ո Ւ Մ

### ՄԱՍՆԱԻՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Դրամատիրական ներկայ հասարակարգը ամրապէս կեցած է մասնաւոր սեփականատիրական սկզբունքին վրայ: Ստատեցէք անգամ մը այդ դրութիւնը եւ ահա կը փլի ամբողջ շէնքը: Մասնաւոր սեփականատիրութիւնը մայր աղբիւրն է ներկայ իրաւակարգին բոլոր չարիքներուն: Արդարեւ ինչո՞վ է որ դրամատէր դասակարգը կը շարունակէ իր անսանձ կեղեքումները, ինչո՞վ է որ ան կը յոխորտայ իր տիրապետութեան, եւ կը յղփանայ իր շուայտ կենցաղին մէջ, եթէ ոչ մասնաւոր սեփականութեան իրաւունքովը:

Սեփականութիւնը սուրբ եւ նուիրական յայտարարուած է դրամատիրական աշխարհին մէջ եւ անոր այդ հանգամանքը օրէնքով ճանչցուած է ու հաստատուած եւ խստագոյն կերպով պաշտպանուած՝ զինու զօրութեամբ: Բոլոր երկիրներու մէջ գործադիր իշխանութիւններու, զինուորներու եւ

ուստիականներու պարտականութիւնն է հսկել, արթուն կերպով հսկել, որ որեւէ հողեղէն արարած չհամարձակի դպիլ սեփականատիրական դրութեան:

Բայց ի՞նչ է սեփականատիրութիւնը ինքնին, եւ դրամատէրերը ի՞նչ միջոցներով է որ անհաշուելի հարստութիւններու տէր կը դառնան:

«Սեփականութիւնը՝ գողութիւն է»՝ կը յայտարարեն անիշխանականները:

Արդարեւ, ինչո՞ւ համար երբ ուրիշի մը գրպանէն լուցիկի մը կը վերցնեն՝ գող կը համարուին, իշխանութիւնները կը ձերբակալեն հեղինակը, եւ օրէնքը կը դատապարտէ զինքը, մինչդեռ նոյն օրէնքն ու նոյն իշխանութիւնները ո՛չ միայն չեն դատապարտեր, այլ եւ թեւ ու թիկունք կը հանդիսանան այն քրքրքին, որ հարիւր հազար գործաւորները գեանափոր նկուղներու եւ հանքերու մէջ թըխմած՝ զուրկ արեւէ, օդէ, օրը 8-12 ժամ տառապալից աշխատանքներու կ'ենթարկէ եւ անոնց ձեռքին աշխատանքէն, անոնց ֆիզիքական ու մտաւոր կեղեքումէն եւ անոնց ճակտի քրտինքէն դոյացած միլիոններու հարստութիւնը կը գրպանէ, (չոր հաց միայն բաժին հանելով աշխատողներուն)? Ու դեռ այդ անձերը օրէնքով՝ «ազնիւ ու պարկեշտ քաղաքացիներ» են, «մարդասէր բարերարներ», եւ «օրինաւոր սեփականատէրեր»...: *Ինչպիսիք*

Բայց մասնաւոր սեփականատիրութիւնը դրութիւն մըն է ոչ միայն անարդար ու անիրաւ իր էութեան մէջ, այլեւ կորստարեր ու վնասակար՝ բովանդակ մարդկութեան համար: Ինքը, այդ դրութեան



Թիւնը արդիւնքն ըլլալով կեղեքումին, իրեն վրայ  
հաստատուած են ներկայի դասակարգերուն միջեւ  
տիրող բոլոր անհաւասարութիւնները եւ անոնց ալ  
արդիւնքը՝ անխուսափելի թշուառութիւնները :

Ո՞ր տեսակի մասնաւոր սեփականութիւնն է  
սակայն խնդրոյ առարկան, որուն խորտակումը  
սլայմանն է ընկերվարական տիրապետութեան :

Կարգ մը բարեմիտներ հարց կուտան թէ՛ — ի՞նչ  
բիրտ օրէնք պիտի ըլլայ ընկերվարական ձեր օրէն-  
քը, որ թոյլ պիտի չտայ անհատի մը, որ գետնէն  
գտած թռչունի փետուր մը իբր իր մասնաւոր սե-  
փականութիւնը իր գլխարկին վրայ գետեղէ ու կրէ :

Բայց մասնաւոր սեփականատիրութիւնը շատ  
աւելի ընդարձակ եւ խոր ըմբռնումով պէտք է առ-  
նել՝ քան մէջ բերուածի նման երախայական օրի-  
նակներովը, փետուրի մը կամ նման առարկայի մը,  
որեւէ անհատի պատկանիլը մարդկութիւնը չի դըժ-  
բախտացներ :

Խօսքը ա՛յն սեփականութիւններու մասին է, ո-  
րոնք կը շահագործուին եւ հարստութիւն կ'ստեղ-  
ծեն, եւ հետեւաբար ուրիշներու տառապալից աշ-  
խատանքը կ'օգտագործեն : Այդ կարգի սեփականու-  
թիւններն են՝ կուտակուած դրամագլուխները, հո-  
ղը, հանքերը, հաղորդակցութեան միջոցները, գոր-  
ծիքները, եւլն․, եւլն․ :

Թէ ինչո՞ւ ընկերվարութիւնը ջնջել կ'ուզէ  
անհատական սեփականութիւնը. —

Շնորհիւ մասնաւոր սեփականատիրութեան,  
դրամատէր դասակարգը իրապէս ինքնիշխան տէրն

է դարձեր ո՛չ միայն դրամագլուխին, հողին, գործարանին ու գործիքներուն, այլեւ մնացեալ ամբողջ մարդոց ճակատագրին՝ որոնց գոյութիւնը կախուած է իր քմահաճոյքէն :

Արդարեւ մենք կը տեսնենք որ ներկայիս որեւէ գործարանատէր իր մէկ քափրիսին համար կրնայ գոցել իր հաստատութիւնը եւ մէկ վայրկեանի մէջ փողոցը թափել հարիւր հազարաւոր գործաւորներ, որոնք անօթի ու ցրտահար՝ մահուան կը դիմեն անպաշտպան :

Չկա՛յ օրէնք մը դրամատիրական այս կարգերուն մէջ, որ դատապարտէ գործարանատէրին այդ քայլը եւ զայն հաւասար նկատէ ռճրագործի մը արարքին, անոր համար որ այդ մեծահարուստը ներկայի օրէնքներով իրաւունք ունի պատասխանելու. «այս գործարանը իմ անհատական սեփականութիւնս է. եթէ քէյֆս ուզէ գործաւորները կ'աշխատեցնեմ, եթէ չուզէ՝ չեմ աշխատեցներ» :

Հսկայական տարածութիւններով բարերեր հողեր ներկայիս կը մնան անմշակ, մինչ աղքատ գիւղացին կարօտը կը քաշէ թիզ մը հողին : Ինչո՞ւ. որովհետեւ այդ հողերը սեփականութիւնն են այս կամ այն լօրտին, փաշային կամ տէրէպէյիին, որոնք իրենց համար կարիք չունին զանոնք մշակել տալու ու աւելի կը նախընտրեն նապաստակներ որսալ այդ ամայի տարածութիւններուն վրայ :

Ոչ մէկ իշխանութիւն կը համարձակի դիտողութիւն ընել կալուածատէրին ու ըսել թէ իր ընթացքը դէմ է հայրենիքին եւ ժողովուրդին շահերուն, ան իսկոյն կը մատնանշէ օրէնքը, որով «սե-

փականութիւնը սուրբ է» ճանչցուած, իսկ սեփականատէրը՝ ինքնիշխան:

Մասնաւոր սեփականատիրութիւնն է պատճառը ներկայ տնտեսական աշխարհին մէջ կատարուող գերարտադրութեան եւ անոր հետեւանքով յառաջ եկող ահաւոր քրիզներուն: Արդիւնաբերողները չեն դիտեր թէ իրենց արտադրածին ի՞նչ քանակութեան պէտք ունին ժողովուրդները, ու կը ջանան աւելին արտադրել միշտ, մրցել ուրիշ արդիւնաբերողներուն հետ, որոնք նոյնը կը փոխադարձեն իրենց կողմէ: Ու այդպէս պէտք եղածէն աւելին արտադրելով ու իրարու հետ մրցելով դրամատէր գործարանատէրերուն մէկ մասը, համեմատաբար տրկարներն ու պղտիկները անշուշտ՝ կը սնանկանան ու կը քաշուին հրապարակէն, երեսի վրայ անգործ ու անօթի թողնելով միլիոնաւոր գործաւորներ եւ անոնց ընտանիքները:

Դրամատիրական կարգերու մէջ տիրող այս մրցումը հնարաւոր չի դարձներ աստիճանաչափ մը գտնել արտադրութեան ու սպառումին միջեւ, ու այդ իսկ պատճառով տեսակ մը անխուսափելի ու քրօնիք բնոյթ ստացեր են տնտեսական քրիզները, որոնցմէ տուժողը անշուշտ աշխատաւորութիւնն է:

Նոյն այդ մասնաւոր սեփականութեան իրաւունքով՝ այս պահուս միլիոններով դրամազուլուներ կը յատկացուին զեղխութեան ու շռայլութեան եւ կը վատնուին յուժպէտս, մինչդեռ ընդհանուր ժողովուրդին ու հասարակութեան բարօրութեան ու կենսական շահերուն համար՝ պնակներ կը պտտցը-

ւին եկեղեցիներու մէջ, սէնթեր ժողովելու համար . . . :

Դեռ աւելին կայ: Բոլոր ժողովուրդներու մէջ բացարձակ մեծամասնութիւնը կը կազմեն աշխատաւոր դասակարգերը, որոնք կամ բոլորովին սեփականագուրկ են եւ իրր միակ դրամագլուխ ունին իրենց զոյգ բազուկները, եւ կամ շատ չնչին ու ողորմելի քանակութիւն մը կը կազմէ իրենց ունեցածը: Բայց ուշագրաւ պարագան այն է որ, ամէն երկրի իշխանութիւններն ալ մեծամեծ տուրքերու ենթարկած են այդ նոյն սեփականագուրկ աշխատաւորութիւնը, ու դիտէ՞ք ինչո՞ւ համար.— որպէսզի այդ դումարներով պաշտպանեն անհատներու մասնաւոր սեփականութիւնը: Ու այդ է իրական մտահոգութիւնը բոլոր իշխանութիւններուն. ինչ անունի տակ ալ գործեն անոնք, դատարան, օստիկանութիւն, զինուորականութիւն, եւայլն:

Բայց ոչ ոք կը համարձակի հարցնել թէ ի՞նչ մասնաւոր սեփականութիւն ունի սա՛ աշխատաւորութիւն կոչուած խեղճ, տկոզ զանգուածը, որուն պաշտպանութեան համար մինչեւ իսկ իր ծխած սիկարէն տուրք կը դանձէք:

Բացայայտ է, ուրեմն, որ բոլոր իշխանութիւնները ուղղակի կամ անուղղակի պաշտպաններն են դրամատէր դասակարգին, անկէ կը կերակրուին ու անոր սեփականութիւնը կը պաշտպանեն:

Արդ, ընկերվարական իրաւակարգին մէջ, ժողովուրդները չեն կրնար թոյլ տալ, որ հարստութիւն ստեղծող բոլոր միջոցները՝ դրամագլուխը, հողը, գործիքները, եւայլն, մասնաւոր սեփակա-

նութիւն մ'նան այս կամ այն անհատին՝ որպէսզի անոնք շարունակեն խաղալ միլիոններու ճակատագրին հետ, ու թշուառացնեն զանոնք:

Ընկերվարութիւնը կը պահանջէ պետութեան սեփականութիւնը դարձնել հարստութիւն ստեղծող բոլոր միջոցները, որպէսզի անոնք օգտագործուին ընդհանուր ժողովուրդին բարօրութեան համար:

Ծիծաղելի են բոլոր այն փաստարկութիւնները, որոնցմով կը ճգնին ընկերվարութիւնը ներկայացընել իբր «կողոպուտի վարդապետութիւն» մը, որ նըպատակ ունի «խլել դրամները հարսուտներէն, եւ բաժնել զանոնք աղքատներուն վրայ»:

Ընկերվարութիւնը ջնջելով անհատական սեփականութիւնը, արդէն իսկ վերջ կուտայ բոլոր այն պայմաններուն, որոնց մէջ մէկը հարուստ կը դառնայ, իսկ միւսը՝ աղքատ: Ընկերվարութիւնը ո՛չ թէ հարսուտները կ'աղքատացնէ, այլ աղքատները կը հարստացնէ, և այդ իսկ պատճառով անհրաժեշտ պայման կը դնէ՝ հարստութիւն ստեղծող միջոցներուն պետականացումը:

## ՊԱՐՏԱԻՈՐԻԶ ԱՇԽԱՏԱՆՔ

Ընկերվարական իրաւակարգը պիտի ըլլայ աշխատանքի թաղաւորութեան շրջան մը, աշխատանքը՝ ընդհանուր եւ համատարած, աշխատանքը՝ մտքի եւ Ֆիզիքականի, եւ աշխատանքը՝ որ ոչ թէ կը դրկէ, կ'ստրկացնէ կամ կը մահացնէ մարդ արարածը, այլ որ առիթ կուտայ ամէն անհատի զարգացընելու իր Ֆիզիքական ու մտաւոր կարողութիւնները, որ կը յարմարի իւրաքանչիւրին բնական ընդունակութեան եւ որ հաւասար վայելք կը պարզելէ ընդհանուրին :

Ընկերվարական շրջանին մէջ աշխատանքը ոչ թէ բնու մը, այլ թերեւս լաւագոյն ժամանց մըն է քաղաքացիներուն համար, որովհետեւ ամէնքը կ'աշխատին իրենց ու ամէնուն համար, կ'աշխատին այն ասպարէզին մէջ, որուն յարմարութիւն ունին իրենք, կ'աշխատին մանաւանդ մարդավարի եւ տանելի պայմաններու տակ, հեռու պօսերուն կամ դործատէրերուն դաժան տեսքերէն, եւ վերջապէս կ'աշխատին անհամեմատօրէն քիչ ժամերով քան թէ ներկայիս :

Դրամատիրական այս կարգերուն մէջ ո՞ր դասակարգն է, որ հարստութիւն կ'ստեղծէ, կ'աշխատի եւ ընդհանուր մարդոց ապրուստն ու բոլոր պիտոյքները կը հոգայ.— Աշխատաւոր դասակարգը միայն, որ օրական միջին հաշուով 9-10 եւ աւելի ժամեր կը տրամադրէ այդ գործին :

Արդ, եթէ ամբողջ մարդկութեան բոլոր պիտոյքները կը հոգացուին ներկայիս միայն աշխատաւոր դասակարգին օրը 9-10 ժամ աշխատանքովը, պարզ է որ եթէ մարդկութեան բոլոր դասերն ալ գործի լծուին, ինչպէս բոլոր պորտաբոյծ դրամատէրերը, ամբողջ զինուորականութիւնը, կրօնական դասերը եւ անոնց արբանեակները, այդ պարագային ծանր բեռը կը վերցուի մէկ դասակարգին վերայէն ու այն ատեն կարելի կ'ըլլայ օրական 4-5 ժամ միայն աշխատելով հոգալ մարդկութեան անհրաժեշտ կարիքները :

Եւ գեռ ներկայիս մարդիկ չեն աշխատիր համաձայն իրենց ընդունակութիւններուն : Դրամատիրական այս կարգերը հեւ ի հեւ վազք մը կը պարտադրեն բոլորին՝ որոնք պատառ մը հացի համար շատ հեղ իրենց տաղանդները կը մահացնեն :

Այսօրուան աշխատանքը բթացնող է, դրաստական, որովհետեւ աշխատանքի գործողութեան պարագային աշխատաւորին շահն ու բարօրութիւնը խնդրոյ առարկայ անգամ չեն ըլլար : Գործատէրը կը ջանայ որքան հնար է շատ աշխատոցնել եւ քիչ վճարել իր գործաւորին. այնքան քիչ որքան հարկաւոր է գործաւորին Փիզիքական գոյութիւնը կերպով մը քարշ տալու եւ պահելու, յաջորդ օրն ալ

գործին լծուելու համար : Այդ է պատճառը որ մի-  
լիոնաւոր կեանքեր կը խամրին ծանր բեռներու եւ  
անմարդկային պայմաններու տակ եւ բաւարար սը-  
նունդի, օդի ու լոյսի բացակայութեան երեսէն :

Այդպէս չէ սակայն վաղուան ընկերվարական  
հասարակութեան համար :

Հոն չպիտի ըլլան աշխատանքի կեղեքիչները :  
Հոն աշխատանքը աշխատողին կողմէ՝ աշխատողին  
համար պիտի կատարուի, գործ տուողն ալ կատա-  
րողն ալ իրենք պիտի ըլլան, այսինքն բովանդակ  
մարդկութիւնը, որուն միակ մտահոգութիւնն է,  
երջանիկ դարձնել ինքզինքը :

Գիտական ամէն կարգի գիւտերը պիտի կա-  
տարուին ոչ թէ ի վնաս, այլ ի շահ գործաւորու-  
թեան : Այսօր գիտական ու մեքենական որեւէ նո-  
րութիւն մը շատ անգամ պատճառ կը դառնայ որ  
հարիւր հազարներով գործաւորներ դուրս թափուին  
գործարանէն, ու մահանան անգործ, անօթի : Մինչ  
վաղուան ընկերվարութիւնը շատ աւելի քան ներ-  
կան հետամուտ պիտի ըլլայ մեքենական կատարե-  
լութեան եւ գիւտերուն՝ իր միակ նպատակակէտը  
պիտի դարձնէ՝ որքան հնար է՝ ազատել մարդս այն  
ամէն կարգի աշխատանքներէն, որոնք կը մաշեն  
մարդու ֆիզիքականը եւ կը բթացնեն միտքն ու  
ուղեղը ու պիտի ջանայ միշտ՝ մեքենաներուն յանձ-  
նել՝ մեքենական աշխատանքները, որպէսզի մարդը  
հնարաւորութիւն ունենայ շատ աւելի ընդարձակ  
ժամեր տրամադրելու իր մտքին եւ հոգիին ազնը-  
ւացման համար :



## ՊԱՅՔԱՐ՝ ՈՉ ԹԷ ՄԱՐԴՈՒՆ, ԱՅԼ ԲՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ի՞նչ պիտի ըլլայ վիճակը այն մարդկութեան, կ'ըսեն, ընկերվարութեան քննադատները, որուն մէջ գոյութիւն պիտի չունենայ մրցումը, եւ տենչը՝ յաւիտեան մեծնալու, հարստանալու, բարձրանալու. դուք այդպիսով կը մեռցնէք նախաձեռնութեան ոգին եւ ծուլութեան կը վարժեցնէք մարդիկ:

Ու այդ քննադատները կը յիշատակեն բազմաթիւ օրինակներ իրենց խօսքը ապացուցանելու համար:

Ենթադրենք հանճարեղ գիտնական մը, որ ներկայիս՝ դիշերը ցորեկին խառնած, մութ խուցերու մէջ, կամ բնալուծարանին անկիւնը կծկտած՝ կ'աշխատի ու կը տքնի գիւտ մը կատարելու համար: Արդ, ի՞նչն է այդ մարդուն միակ մտահոգութիւնը, կը հարցնեն: Չէ՞ որ ան կը յուսայ իր գիւտովը մեծ հարստութեան մը տիրանալ եւ ապահովել իր եւ իր ընտանիքին ապագան:

Բոլոր անոնք որ կը կարծեն թէ մարդ արարածը

միայն պարտադրութեան պարագային է որ կ'աշխատի՝ շատ թերի եւ միակողմանի դադարաւար կազմած են մարդկային բնութեան մասին: Աշխատելու ցանկութիւնը մարդու համար բնական է: Արդեւ լափակեցէք մարդը եւ դատասպարտեցէք զինքը որ եւէ աշխատանք չկատարելու, ոչ մտաւոր եւ ոչ ալ ֆիզիքական, ու կը տեսնէք որ կեանքը-անտանելի ու զղուելի բեռ մը կը դառնայ անոր համար. հարցը միայն՝ աշխատանքները գործաւորին ընդունակութեան համապատասխան ձեւով եւ տանելի պայմաններով գործադրուելուն մէջ կը կայանայ:

Գիտնականին օրինակը շատ պերճախօս է, հերքելու համար դայն յիշատակողներուն տեսակէտը: Արդարեւ ընդունինք պահ մը թէ գիւտերը կը կատարուին գիտնականներու կողմէ, այն մտահոգութեամբ, որպէսզի ապահովեն իրենց ու իրենց ընտանիքին ապագան: Լա՛ւ ուրեմն, եւ որովհետեւ ընկերվարական կարգերուն մէջ պետութիւնը եւ հասարակութիւնը արդէն ապահոված կ'ըլլան ոչ միայն մասնաւոր անձերու, գիտնական թէ հասարակ գործաւոր, այլ բոլոր անհատներուն ապագան, հետեւարար գիտնականին հետ նաեւ ամէն քաղաքացի պիտի ուզէ իրեն վիճակուած պարտականութիւնը կատարել, քանի որ ի փոխարէն լիակատար ու տեւական ապահովութիւն կը տրուի իրեն թէ՛ ներկային եւ թէ՛ ապագային համար:

Ընկերվարական հասարակութիւնը այդ ապահովութիւնը կուտայ իր քաղաքացիներուն մէկ գերագոյն պայմանով, որպէսզի ամէն ոք իր ընդունակութիւնը գործ դնէ եւ աշխատի: Արդէն ա-

միայն պարտադրութեան պարագային է որ կ'աշխատի՝ շատ թերի եւ միակողմանի դադարաւ կազմած են մարդկային բնութեան մասին: Աշխատելու ցանկութիւնը մարդու համար բնական է: Արդեւ լափակեցէք մարդը եւ դատաստարտեցէք զինքը որ եւէ աշխատանք չկատարելու, ոչ մտաւոր եւ ոչ ալ ֆիզիքական, ու կը տեսնէք որ կեանքը-անտանելի ու զղուելի բռն մը կը դառնայ անոր համար. հարցը միայն՝ աշխատանքները գործաւորին ընդունակութեան համապատասխան ձեւով եւ տանելի պայմաններով գործադրուելուն մէջ կը կայանայ:

Գիտնականին օրինակը շատ պերճախօս է, հերքելու համար զայն յիշատակողներուն տեսակէտը: Արդարեւ ընդունինք պահ մը թէ գիւտերը կը կատարուին գիտնականներու կողմէ, այն մտահոգութեամբ, որպէսզի ապահովեն իրենց ու իրենց ընտանիքին ապագան: Լա'ւ ուրեմն, եւ որովհետեւ ընկերվարական կարգերուն մէջ պետութիւնը եւ հասարակութիւնը արդէն ապահոված կ'ըլլան ոչ միայն մասնաւոր անձերու, գիտնական թէ հասարակ գործաւոր, այլ բոլոր անհատներուն ապագան, հետեւաբար գիտնականին հետ նաեւ ամէն քաղաքացի պիտի ուզէ իրեն վիճակուած պարտականութիւնը կատարել, քանի որ ի փոխարէն լիակատար ու տեւական ապահովութիւն կը տրուի իրեն թէ՛ ներկային եւ թէ՛ ապագային համար:

Ընկերվարական հասարակութիւնը այդ ապահովութիւնը կուտայ իր քաղաքացիներուն մէկ գերազոյն պայմանով, որպէսզի ամէն ոք իր ընդունակութիւնը գործ դնէ եւ աշխատի: Արդէն ա-

մէն անհատ կը գիտակցի թէ այդ գեղեցիկ կարգե-  
րը, ուր ամէն ինչ, երկրին ողջ հարստութիւնները  
ամէնուն կը պատկանին եւ ոչ ոք մենաշնորհեալ է,  
ուր կայ թեթեւ եւ տանելի աշխատանք եւ հաւասար  
վայելք — չեն կրնար գոյութիւն ունենալ, եթէ ըն-  
կերութեան անդամները նենգամտօրէն շարժին, եւ  
իւրաքանչիւրը խուսափի իրեն վիճակուած հանրա-  
յին աշխատանքէն: Գիտեն թէ այդ պարագային  
կրնան կործանել այդ կարգերը եւ իրենք անցեալի  
նման դարձեալ ստրուկները կը դառնան դրամատի-  
րական դժոխային կարգերուն:

Արդ՝ ո՞ր անմիտն է որ պիտի չուզէ իրեն վի-  
ճակուած թեթեւ աշխատանք մը կատարելով եր-  
ջանիկ վայելքի մը տիրանալ: Բայց միայն այս չէ  
խնդիրը:

Ճիշդ է որ ընկերվարական կարգերուն մէջ պի-  
տի ջնջուի մրցումը մարդոց ու դասակարգերու մի-  
ջեւ՝ տնտեսական հողի վրայ. այսինքն այն մրցու-  
մը՝ որուն համար շուկայիկ հողերանութեամբ մը  
այսօր մարդիկ իրար կը յօշոտեն, իրար կը կոխո-  
տեն, ու ինչ կեանքե՞ր կ'ոչնչանան չկրնալով դիմա-  
նալ անհաւասար տնտեսական կռիւին: Բայց մրցու-  
մը կը մնայ բարոյական հողի վրայ եւ պայքարը պի-  
տի ուղղուի այս անգամ ոչ թէ մարդուն կողմէ մար-  
դուն, այլ բնութեան դէմ, որպէսզի մարդը ազատ-  
ուի անոր գերութենէն:

Արդարեւ չափազանց նսեմացուցած պիտի ըլ-  
լանք ջանքերը մարդկային բոլոր մեծ հանճարնե-  
րուն՝ եթէ անոնց վերագրենք միայն սա գոհեցիկ ըմ-  
բունումը թէ «անոնք աշխատեցան որպէսզի պատառ

մը հաց ապահովէին իրենց համար» : Ո՞վ կ'ըսէ թէ իր այսօրուան ու վաղուան հոգերէն ձերբազատուած եւ ամէն յարմարութիւններով օժտուած գիտնական մը տարրալուծարանի մը մէջ, առաւելապէս իր ուշքն ու միտքը պիտի չտրամադրէ իր նըմաններուն ի նպաստ լաւագոյն գիւտ մը կատարելու համար : Միթէ ամբողջ մարդկութեան օգտակար դառնալու, եւ բոլորէն յարգուելու եւ բարոյապէս ամէնուն աչքին բարձրանալու տենչանքը, ինքնին՝ լաւագոյն մղիչը չի՞ հանդիսանար, նորանոր յառաջդիմութիւններու եւ կատարելութեանց համար :

Բնութիւնը ինքնին անհունօրէն ընդարձակ մըրցավայր մըն է, ու ամէն մարդ պիտի կրնայ մըրցիլ բարոյական մըրցումով, որպէսզի նոր բան մը խլէ բնութեան ծոցէն, նոր գիւտ մը ընէ, եւ կարենայ նոր երջանկութիւն մը պարգեւել ողջ մարդկութեան :

Ապագայ ընկերավարական իրաւակարգին մէջ, մարդիկ պիտի կռուին ոչ թէ իրարու՝ այլ բնութեան դէմ, որովհետեւ այդ միջոցին արդէն խորտակուած կ'ըլլայ մարդուն բնութիւնը իր նմանին վրայ եւ միակ բռնատէրը ու թշնամին կը մնայ բնութիւնը, իր անսանձ տարրերով, իր անդնդախոր ովկէանոսներով եւ հսկայ լեռներով :

## ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒԻՒՇ

Ընկերվարութիւնը վերջ կուտայ դասակարգային հակամարտութեան. —

Ընկերվարութիւնը կը մեղադրեն ըսելով թէ՛ ան՝ դասակարգերու միջեւ խտրութիւն եւ ատելութիւն կը սերմանէ ներկայիս, իսկ ասպագային համար ալ կ'ուզէ հաստատել միայն մէկ դասակարգի, գործաւորութեան կամ աշխատաւորութեան մենատիրութիւնը (տիքատտորան) :

Դրամատէր դասակարգի մենատիրութեան հետեւանքով մարդկութեան մէջ ստեղծուած դասակարգային հակամարտութիւնը այն տեսակ ցաւոտ վէրք մըն է, որ ամէն կողմերով պլշկած է ներկայ ընկերութիւնը, եւ ոչ մէկ քարոզով կամ ոչ մէկ ըստառնալիքով կարելի է անոր առաջքը առնել, մինչեւ արմատական վիրահատութեան մը չենթարկուի ան :

Միամիտները միայն կը հաւատան թէ կարելի է մարդկութեան մէջ ահաւոր շերտաւորումներ ըս-

տեղծել, միայն փրօփականտայով :

Եթէ ընկերվարականները ներկայիս իրենց նը-  
ւազ կազմակերպուած վիճակով եւ սուղ միջոցնե-  
րով կը յաջողին ատելութիւն եւ հակառակութիւն  
սերմանել երկու դասակարգերու միջեւ եւ իրարմէ  
բաժնել, ինչպէ՞ս կ'ըլլայ որ դրամատէր դասակար-  
գը իր առաւել գիտակից եւ կազմակերպուած վիճա-  
կով եւ իր ունեցած անհամեմատօրէն նպաստաւոր  
միջոցներով՝ չի յաջողիր համերաշխութիւն գոյա-  
ցընել երկու դասերուն միջեւ ու լեցնել զանոնք ի-  
րարմէ բաժնող հակառակութեան անդունդը :

Ոչ-ընկերվարական կուսակցութիւնները իրենց  
դռները բացած են անխտիր՝ բոլոր դասակարգերուն  
առջեւ ու բարձրարարառ կը յայտարարեն թէ ի-  
րենք կը հաշտեցնեն թէ՛ հասարակ գործաւորին եւ  
թէ՛ պորտաբոյծ պուրժուային շահերը իրարու հետ :  
Կ'երեւայ թէ անոնք գտած են օրհնուած դեղահատ  
մը, որով դոց կը սլահեն զառնուկներուն հետ արա-  
ծել ուղող գայլերուն բերանները :

Արդարեւ ի՞նչն է դրամատէր պուրժուային մի-  
ակ մտահոգութիւնը, — որքան հնար է շատ աշխատ-  
ցընել իր գործաւորը եւ քիչ վճարել ու հարստու-  
թիւն գիղել : Ի՞նչն է գործաւոր դասակարգին մը-  
տահոգութիւնը, — որքան կրնայ քիչ ժամերով աշ-  
խատի եւ շատ վարձք ստանայ : Իսկ ատոր համար ալ  
միակ միջոցն է գիտակցութեան բերել բոլոր իրենց  
դասակարգին պատկանող, իրենց վիճակակիցները  
եւ զօրաւոր ոյժ մը ձեւացնելով պայքարիլ գործա-  
րանատէրերուն դէմ եւ նորանոր իրաւունքներ խլել  
անոնց ձեռքէն :

Եկէք այժմ, ու բարի խրատներով հաշտեցուցէք այս երկու դասակարգերը:

Եկէք ըսելու գործարանատէրին թէ մի՛ կեղեքեր գործաւորդ, իսկ գործաւորին թէ՛ մի՛ ըմբոստանար գործարանատէրիդ դէմ, գոհացիր քեզ տըրւած վարձքովը: Բայց առաջինը ձեզ պիտի պատասխանէ. — Եթէ չկեղեքեմ, այսինքն եթէ շատ չաշխատցնեմ եւ քիչ չվճարեմ, ի՞նչպէս հարստանամ: Իսկ երկրորդը պիտի ըսէ. — Ի՞նչպէս ապրիմ այս անմարդկային պայմաններուն տակ, եւ գոհ մնամ, երբ տառապանքով կ'աշխատիմ եւ ընտանիքիս չոր հաց միայն կ'ապահովեմ:

Պարզ է, ուրեմն, որ ներկայ մասնաւոր սեփականատիրութիւնը եւ բաշխումի անարդար դրութիւնն են անդունդը բացեր երկու դասակարգերու միջեւ եւ ոչ թէ այս կամ այն մարդուն քարոզը կամ խրատը: Հետեւաբար եթէ կ'ուզուի տեւական եւ իրական համերաշխութիւն մը գոյացնել դասակարգերու միջեւ, պէտք է միանգամ ընդմիջտ վերջ տրուի տնտեսական ներկայ անհաւասար կարգերուն: Ահա թէ ի՞նչ բանի կը ձգտի ըկներվարութիւնը:

Միւս կողմէ ճիշդ է որ այդ վարդապետութիւնը իրեն կռուան դարձուցեր է՝ միայն աշխատաւոր դասակարգերը: Ինչո՞ւ: Անոր համար որ անոնք են անմիջականօրէն շահագրգռուած ներկայ վիճակին բարեփոխումովը, քանի որ իրենք են ուղղակի քաւութեան նոխազը այժմու օրէնքներուն:

Արդարեւ, ապագայ երջանկաւէտ եւ հաւասար կարգերը ցնորք կը թուին դրամատէր դասակար-



գին: Ան պէտք չունի այս մասին մտահոգուելու,  
եթէ մինչեւ իսկ հաւատացած ըլլայ թէ՛ մարդկու-  
թեան յառաջդիմութեան անիւր հսկայաքայլ կը  
յառաջանայ դէպի ընկերվարական իրաւակար-  
գը: Պէտք չունի որովհետեւ ինքը արդէն իսկ  
ներկայիս երջանիկ է, չըսելու համար գերեր-  
ջանիկ: Ներկան՝ շօշափելի իրական երջանկու-  
թիւն մըն է իրեն համար, իսկ ապագան, միայն  
խոստում: Անշուշտ ոչ ոք այնքան միամիտ կ'ըլլայ  
իրականէն զրկուելու եւ վերացականով զրազուե-  
լու: Ատոր համար է որ դրամատէրերը կ'ուզեն  
պահպանել ինչ որ գոյութիւն ունի, եւ եղած են  
պահպանողական:

Այս է պատճառը նաեւ որ ընկերվարականները  
իրենց կուսակցութեան իրր հիմ նկատած են այն  
տեսակ դասակարգերը, որոնք երջանիկ ներկայ մը  
չունին, որոնք անմիջականօրէն շահագրգռուած են  
իրենց վիճակին փոփոխութիւնովը, որոնք ներկայ  
օրէնքներուն երեսէն դժբախտութեան մատնուեր են  
եւ ամէն գնով կը ջանան վայրկեան մը առաջ վերջ  
տալ անոնց, փոխել, յեղափոխել դրամատիրական  
կարգերը, նոր եւ լաւագոյն յառաջդիմական գո-  
յավիճակ մը ստեղծել: Ահա թէ ինչո՛ւ աշխատաւո-  
րութիւնը նկատուած է յեղափոխական:

Բայց քեպէտեւ մէկ դասակարգի վրայ յենած՝  
ընկերվարութիւնը իր վերջնական նպատակներով  
համամարդկային է ու համադասակարգային: Ան  
իրեն հետ կը բերէ ինչպէս անհատներու եւ ազգե-  
րու, նոյնպէս եւ դասակարգերու միջեւ իրական  
համերաշխութիւն մը եւ եղբայրութիւն մը, երբ

բոլորը հաւասար կ'ըլլան, ո՛չ մէկը ուրիշ մը կը շահագործէ եւ կամ կը բռնատիրէ: Ուրեմն մէկ դասակարգի, միայն աշխատաւորութեան միջոցաւ շահուած յաղթանակ մը, իր էութեան մէջ յաղթանակն է բոլոր դասակարգերուն եւ համայն մարդկութեան:

Սխալ է այն կարծիքը թէ ընկերավարութիւնը կը ջանայ ապագային համար հաստատել աշխատաւոր դասակարգին տիրապետութեան: Սխալ է եւ ոչ տրամաբանական, որովհետեւ ապագայ մարդկութեան մէջ ինքնին չքաղած կ'ըլլան աշխատող եւ չաշխատող դասակարգերը եւ անոնց մէջի հակադրութիւնը: Վաղուան մարդկութիւնը կազմուած կ'ըլլայ միայն մէկ դասակարգէ, (եթէ կարելի ըլլայ այդ բանը գործածել) ու ատիկա ալ՝ ե՛ւ աշխատող ե՛ւ վայելող, ե՛ւ հրամայող ե՛ւ գործադրող, ինքնիշխան ու ազատ եւ հաւասար մարդոց դասակարգն է:

Արդ, ընկերութիւն մը, ուր չկայ ազգային ատելութիւն եւ պատերազմ, չկայ դասակարգային խարութիւն եւ շահագործում, ուր ամէն մարդ սեփականատէր է ամէն բանի, որովհետեւ կը պատկանի համայնքի մը՝ ուր ոչ ոք կը համարձակի միմիայն իրեն սեփականացնել որեւէ հարստութիւն, այդ տեսակ ընկերութեան մը պատկանող քաղաքացիները բացայայտ է թէ իրարու կապուած կ'ըլլան իրական ու տեւական համերաշխութեամբ մը, որ խօսք չէ միայն, ոչ ցանկութիւն եւ ոչ խրատ:

Ահա թէ ինչո՞ւ ընկերավարութիւնը ոչ թէ խրատականութիւն կամ երկպառակութիւն կը սերմանէ, այլ իրական համերաշխութիւն՝ բոլոր մարդոց մի-

Ջեւ, ու այս իսկ սլատճառով կը պայքարի այդ նուիրական գործին խոչընդոտ հանդիսացող դրամատիրական կարգերու խտրական ոգիին դէմ :

## ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ընկերվարութիւնը հակառակ չէ  
ազգայնական գաղափարին. —

Քանի որ ընկերվարութիւնը կուսակցութիւնն է բոլոր երկիրներու աշխատաւոր դասակարգերուն, եւ քանի որ անոր նպատակն է համաշխարհային յեղափոխութիւն մը յառաջ բերել, հետեւաբար ան թշնամի է աշխատաւոր դասակարգերը իրարմէ բաժնող ազգութիւններուն, որոնք ուղղակի խոչընդոտ կը հանդիսանան իրենց մեծ երազներուն, կ'ըսեն ընկերվարութեան հակառակորդները:

Ճիշդ է, որ այսօր աշխատաւոր դասակարգերը իրարմէ բաժնուած են եւ մինչեւ իսկ իրարու հետ թշնամացած՝ ազգութիւններու պատճառով: Ճիշդ է, որ գերմանացի դորժաւորը յանուն հայրենիքի պաշտպանութեան է որ գէնքի դիմելով կը յարձակի ֆրանսացի դորժաւորին վրայ եւ փոխադարձաբար:

Եւ սակայն, այդ ազգտին մէջ իրապէս յանցաւորը ո՛չ գերմանացիին հայրենասիրութիւնն է եւ ո՛չ ալ ֆրանսացիինը, որովհետեւ երկուքն ալ հաւասար չափով գործիք եղած են իրենց երկրին շահագործող դասակարգերուն ձեռքը, եւ կամ ակամայ ընկած են այն թակարդին մէջ, զոր լարած էին երկու երկիրներուն դրամատէր դասերը:

Այսպէս, ամէն անգամ որ երկրի մը կապիտալիստ դասակարգը նոր շուկաներու տիրանալ կ'ուզէ, իր արտադրութիւնները հոն քշելու համար, կամ նոր հարուստ հանքերու աչք ունի եւ կամ վերջ տալ կ'ուզէ անտեսական հողի վրայ իրեն մրցակից օտար դրամատէրերուն գործունէութեան, ամէն անգամ ալ կը թաքցնէ իր բուն նպատակները կը ըստեղծէ ուրիշ պատրուակներ, որպէսզի կարենայ օտարի հանել իր ժողովուրդը եւ պատերազմի մղել:

Ու եթէ կայ դադափար մը որ անվերջ ու այլանդակ շարաշահութեան ենթարկուած է, դրամատէրերուն ընչաքաղցութեան գոհացում տալու համար, այդ ալ ազգութեան դադափարն է:

Ո՞վ է իրապէս տուժողը պատերազմներու ազդաներէն, եթէ ոչ աշխատաւորութիւնը, որ կը կոտորուի միլիոններով, կ'անդամալուծուի ու բոլորովին կը քայքայուի անոր խարխուլ անտեսութիւնը, մինչեւ իսկ այն պարագային երբ յաղթական դուրս եկած է պատերազմի դաշտին վրայ:

Իսկ ո՞վ է շահողը պատերազմներէն, — դրամատէր դասը, որուն համար շահագործութեան նոր վայրեր կը ստեղծուին:

Իսկ հարց կը ծագի, — ինչո՞վ մեղաւոր է ազ-

դուժիւնը այդ ստորին շահագործութեան եւ ծագող  
աղէտներուն համար: Միթէ մեղաւոր էր քրիս-  
տոնէութիւնը, երբ Միջին Դարուն կաթուղիկ ճիղ-  
ուիթներուն կողմէ, կախաղաններ կը տնկուէին եւ  
խարոյկներ կը բարձրանային իր անունովը:

Հոս է կարեւորագոյն հարցը:

Գաղափարը չէ որ վնասակար է եւ վատ, այլ  
այդպէս կը դառնայ՝ այն պարագային՝ երբ շահա-  
գործման կ'ենթարկուի:

Վերջ տանի ազգային գաղափարին շահագործ-  
մանը, ու ահա՛ ան վերստին կը զգենու իր մաք-  
րութիւնը, կ'ըսէ ընկերվարութիւնը:

Ընկերվարութիւնը ո՛չ միայն թշնամի չէ ազ-  
դութեան գաղափարին, ո՛չ միայն անտարբեր չէ  
ազգերու ազատագրութեան հանդէպ, այլ թերեւս  
աւելի քան որեւէ կուսակցութիւն եւ դասակարգ  
շահագրգռուած է որ այդ հարցը վայրկեան մը ա-  
ռաջ գտնէ իր լուծումը, եւ իւրաքանչիւր ազգ վայն-  
լէ իր լիակատար ազատութիւնը, որովհետեւ՝

Ա.— Ազգութիւնները ծագում առած են մեր  
կամքէն անկախ եւ ունին իրենց պատմական, ցե-  
ղադրական, աշխարհադրական, հոգեբանական խոր  
պատճառները:

Միեւնոյն լեզուն խօսող, միեւնոյն կրօնը դա-  
ւանող, միեւնոյն երկրամասին վրայ բնակող, մի-  
եւնոյն ծագումը ունեցող եւ միեւնոյն աւանդու-  
թիւններով սնուող անհատներու հաւաքականու-  
թիւնները իրենց մէջ կը ներկայացնեն այն տեսակ  
զօրաւոր ազգային անհատականութիւն մը, զոր կա-

րելի չէ. ո՛չ քմահաճոյքով եւ ո՛չ բռնութեամբ խորտակել :

Բ. — Այնքան ատեն որ ժողովուրդները չեն ազատագրուած իրրեւ ազգային անհատականութիւններ, այնքան ատեն անոնց մէջի աշխատաւոր դասակարգերը միջոց չեն ունենար զբաղուելու իրենց դասակարգային խնդիրներով, այնքան ատեն խաւարած կը մնայ դասակարգային գիտակցութիւնը իրենց մէջ, ու այնքան ատեն անոնք կը շարունակեն գործիք դառնալ տիրող դասակարգերու ձեռքին, ու անոնց յետին նպատակները իրագործելու համար, զանազան երկիրներու աշխատաւորները իրար կը յօշոտեն վայրենարարոյ ախորժակներով : Պէտք է ուրեմն ամէն դնով ազատել ազգութիւնները գերութենէ եւ ստրկութեան վիճակէն, որպէսզի աշխատաւոր դասակարգերը կարենան ճշդել իրենց բուն թշնամիները եւ անոնց դէմ ուղղել իրենց պայքարը :

Գ. — Ազգութիւնները ինքնին ո՛չ թէ չարիք մը, այլ թերեւս բարիք մըն են ասպազայ համաշխարհային քաղաքակրթութեան համար : Արդարեւ ինչո՞վ հաճելի պիտի ըլլար միօրինակ ու միապաղաղ քաղաքակրթութիւն մը, որ արդիւնքն ըլլար միատեսակ մտածողութեան, նոյն հոգեբանութեան, նոյն պայմաններուն :

Ազգութիւնները նմանցուած են մէկ մէկ ծաղիկի : Ինչպէս ծաղիկեփունջ մը աւելի սիրուն եւ յարգի կ'ըլլայ, երբ կազմուած է զանազան ու տարբեր ձեւ, տարբեր գոյն, տարբեր հոտ ու արտայայտութիւն ունեցող ծաղիկներէ, նոյնպէս եւ ասպազայ համամարդկային քաղաքակրթութեան փունջը այնքան ա-

ւելի գեղեցիկ պիտի ըլլայ, որքան զայն զարդարե-  
լու գան տարրեր ազդային ծաղիկները :

Արդարեւ որքա՞ն ճոխ ու բարձր պիտի ըլլար  
քաղաքակրթութիւնը ասլազայ մարդկութեան, եթէ  
իրաքան չիւր ազգ, իր ուրոյն քաղաքակրթութիւնը  
բերէր խառնելու անոր : Այսպէս, ազատ անգլիա-  
ցիի կողքին, նաեւ ազատ ամերիկացին, ազատ ճա-  
փոնցին, ազատ չինացին, ազատ ռուսը եւ ազատ հա-  
յը ու բոլորը իրենց ցեղային արժանիքներն ու առա-  
քինութիւնները, իրենց ազգային առանձնայատուկ  
ստեղծագործութիւնները իրրեւ վճիտ առուակներ,  
հոսեցնէին համամարդկային քաղաքակրթութեան  
մեծ ովկէանին մէջ :

Այս տեսակ ազատ ազգութիւններէ կազմուած  
միջազգայնականութեան մըն է որ կը ձգտի ընկեր-  
վարութիւնը եւ ո՛չ թէ բոնի ձուլման կամ ստրկաց-  
ման :



## ՍՏՐԿՈՒԹԵԱՆ ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹԵԱՆ

### ԵՒ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Ընկերվարութիւնը ցնո՞ք չէ՛ . —

Ընկերվարութիւնը լաւագոյն խոստումներու եւ գեղեցիկ սկզբունքներու վարդապետութիւնն է, կ'ըսեն շատ շատերը, բայց միանգամայն անիրականալի ցնո՞ք մը: Բոլոր կրօններն ալ քարոզած են արդարութեան եւ հաւասարութեան գաղափարները, բայց մարդկութիւնը իր պատմութեան ընթացքին ո՛չ միայն չզործադրեց զանոնք՝ ամենանուազ չափով իսկ, այլեւ հսկայաքայլ հեռացաւ անոնցմէ, եւ երթալով թշուառութիւնը եւ անհաւասարութիւնը դարձան մշտատեւ ու համատարած:

Յնո՛րք . . . :

Ի՞նչ է «ցնորքը» ինքնին, եւ միթէ եղա՞ծ է երբ եւ իցէ գաղափար մը, որուն խանձարուրը «ցնորքը» եղած չըլլայ: Արդարեւ այսօրուան շօշափելի իրականութիւնները երէկուան ցնորքներն են ու նաեւ

այսօրուան ցնորքները իրականութիւններ կը դառնան վաղուան համար :

Ո՞վ կը հաւատար նախկին դարերուն — թէ օր պիտի դայ, երբ մարդիկ իրարու հետ մարտնչին ոչ թէ նեա ու աղեղով՝ այլ օգտապարիկով, քանքերով, թունաւոր կազերով ու հազար տեսակ դժոխային գործիքներով : Ո՞վ կը հաւատար թէ ծովերու անսահման տարածութիւնը կարելի պիտի ըլլար կտրել շողենաւերով, մէկ քանի օրերու ընթացքին, ցամաքներունը՝ շողեկառքերով, իսկ օդինը՝ թեւերով ու թռիչքներով :

Բոլոր ասոնք ցնորքէն ալ վեր բաներ կը թուէին, իսկ այսօր . . . :

Եւ սակայն կատարելութիւնն ու հրաշքը միայն բնական դիտութիւններու, եւ մեքենական աշխարհի մէջ չէ որ տեղի ունեցեր են : Այսօրուան մեր քննադատած ու չհաւնած ընկերային վիճակը, ամբողջ քափիթալիստական իրաւակարգը արդիւնքն է մարդոց ընկերային կեանքի մէջ տեղի ունեցած յառաջդիմութեանը յառաջդիմութիւն մը՝ որ հրաշքէն ալ վեր է, եւ որ թերեւս «ցնորք»ն է կազմած՝ կարգ մը «երազատես» անձերու :

Արդարեւ մարդկային պատմութիւնը անցած է շատ մը շրջաններէ, որոնցմէ իւրաքանչիւրը՝ կատարելութիւնն է եղած իր նախորդին :

Բարբարոսութեան եւ ստրկութեան շրջան .—

Այսօրուան քաղաքակիրթ մարդուն նախահայրերը՝ այն վայրենարարոյ ու կատաղի արարածներն էին, որոնք լեռներու վրայ կամ քարանձաւ-

ներու մէջ, ձեռքերնին մէկ մէկ քարէ կացիններ  
կամ նիզակներ բռնած, բլուրէ բլուր յարձակում  
կը գործէին իրենց նմաններուն վրայ, եւ որոնցմէ  
յաղթուողը՝ կերը կը դառնար յաղթականին:

Յետոյ սկսեցին յաղթուողը դերի սլահել եւ իբր  
ստրուկ գործածել: Ստրուկը իր տիրոջը անասունն  
էր, կամ շնչաւոր մէկ իրը, որուն հետ տէրը կըր-  
նար վարուիլ անսահման լիազօրութեամբ: Ուղէր կը  
ծեծէր, ուղէր կը սպաննէր: Այդ շրջանի մարդոց  
օրէնքն ու «իրաւական հասկացողութիւնը» ո՛չ կը  
մեղադրէր եւ ո՛չ կը սլատէր այդ տեսակ ինքնիշխան  
անձերը: Տէրը իրաւունք ունէր վերջ տալու իր  
ստրուկին կեանքին այնպէս, իբրեւ թէ իր ձեռքին  
մէջ գտնուած փայտի կտորը կտարելով՝ նետած  
ըլար:

### Ճորտատիրութեան շրջան.—

Բայց շնորհիւ ցեղերու բազմաճումին, մարդկա-  
յին մտքի յառաջդիմութեան, կարիքներու բարդաց-  
ման եւ զանոնք բաւարարելու համար տեղի ունեցած  
գիւտերուն, աստիճանաբար փոխուեցաւ մարդոց  
ընկերային վիճակը եւ նաեւ գաղափարներն ու ըմ-  
բռնումները:

Ու մենք կը տեսնենք որ միջին դարուն՝ այդ  
ստրկատէր վայրագ մարդը, դարձեր է համեմատո-  
րէն քաղաքակիրթ ու յառաջագիտ, այնպէս որ հա-  
սարակութեան մէջէն իշխող դասը՝ ճորտատէրերը՝  
այլեւս ո՛չ նախկին ձեւով կը յօշոտեն եւ ո՛չ ալ կը  
սպաննեն իրենց ստորագրեալները, այլ զանոնք  
կ'աշխատցնեն իրենց սեփականութիւնը եղող հսկայ

կալուածներուն վրայ եւ ապրելու ու հողին վրայ աշխատիլ կարենալու չափով ապրուստ կուտան անոնց : Վերջինները այլեւս ստրուկ չեն, այլ փորտեր : Իրենց տէրը օրէնքով իրաւունք չունի զիրենք սպաննելու, միայն թէ՛ իրենք ալ կապուած են իրենց տէրերու հողին եւ ազատութիւն չունին ձգելու եւ իրենց ուզած տեղը երթալու :

Այդ շրջանին կալուածները որ կ'առնուէին ու կը ծախուէին սոսկ հողի տարածութիւններէ չէին : Հողին վրայ աշխատող գիւղացիները, ճորտերը, հողին հետ միասին, իբր թէ անոր անբաժան մէկ մասը կազմէին, նոյնպէս կ'առնուէին ու կը ծախուէին :

Ճորտատիրութեան այս շրջանը՝ բաղդատմամբ ստրկութեան շրջանին, անհուն յառաջդիմութիւն կը ներկայացնէ, ու հողին վրայ, սեփական ազատութենէ զուրկ, այլ ապրելու իրաւունքը ունեցող մարդուն վիճակը՝ ինքնին «ցնորք» մըն էր իր նախորդին՝ ստրուկին համար :

Գրամատիրական շրջան. —

Եւ սակայն շնորհիւ մարդկային տնտեսութեան զարգացման, կատարուող բազմաթիւ գիւտերուն եւ նաեւ մարդկային մտքի յեղաշրջման, վերջ գտաւ ճորտատիրական շրջանն ալ եւ ստեղծուեցաւ ներկայ գրամատիրական շրջանը :

Ի՞նչն է ներկայ կապիտալիստական շրջանին յատկանշական կողմը, եւ ինչո՞վ կը տարբերի ան իր նախորդ շրջաններէն :

Նմանութեան միակ կէտը թերեւս այն է որ՝ այսօր ալ, ինչպէս նախկին շրջաններուն՝ մարդիկ

բաժնուած են երկու գլխաւոր դասակարգերու, որոնք հակընդդէմ ու հակակիր են իրարու իրենց տնտեսական շահերով, որոնց մին կ'իշխէ, կը շահագործէ ու կը վայելէ, իսկ միւսը՝ ենթարկուած է, կը զրկուի ու կը տառապի:

Եւ սակայն ներկայ օրէնքներու տրամադրութեան համաձայն, ամէն քաղաքացի «ազատ» է, ոչ ոք իրաւունք ունի ուրիշ մը բռնադատելու եւ այս կամ այն աշխատանքը կատարել սալու. այժմու գիւղացին ուղած վայրկեանին կրնայ ձգել իր կալուածատէրին հողը եւ քաղաքները գալով գործաւոր դառնալ:

Ֆրանսական մեծ յեղափոխութիւնը, որ յաղթանակը եղաւ կապիտալիստ դասակարգին ընդդէմ ազնուականութեան եւ կալուածատիրութեան՝ իրեն հետ բերաւ շարք մը մեծ նշանաբաններ, «ազատութիւններ՝ անձի, խօսքի, բնակարանի, մամուլի, հաւաքումներու, նաեւ բոլոր քաղաքացիներու հաւասարութիւնը՝ օրէնքի առջեւ», եւլն.:

Այս բոլորը ու ներկայ իրաւակարգը ամբողջութեամբ իր ողջ թերութիւններով հանդերձ՝ իրականացած «ցնորք» մըն է, անցնող դարերուն հետ բաղդատելով:

Արդ՝ ընկերվարական վարդապետութիւնը, որուն էական սկզբունքներուն ծանօթացանք նախորդ յօդուածներով՝ կը յայտարարէ թէ՛ իրեն է վիճակուած անմիջական յաջորդը բլլալու այժմու դրամատիրական իրաւակարգին ու բոլոր անոնք որ «ցրնորք» կ'անուանեն զինքը, պիտի համոզուին թէ այդ «ցրնորքը» վաղուան «իրականութիւն»ն է, նիշդ այն

ձեռով ինչպէս պատահած է անցեալ շրջաններուն  
մէջ :

Բայց յաւակնութիւն մը չէ՞ այս ենթադրութիւ-  
նը : Ի՞նչ զօրաւոր փաստ եւ ի՞նչ անխուսափելի հա-  
ւանականութիւններ կան , ապացուցանող թէ՛ պիտի  
դայ օրը՝ երբ ներկայ կապիտալիզմը պիտի տա-  
պալի եւ փոխարէն պիտի հաստատուի ընկերվարա-  
կան արդար իրաւակարգը : Արդեօք ընկերվարական-  
ներուն այդ պնդումը արդիւնքն է լոկ իրենց հա-  
ւատքի՞ն , թէ՛ պատմութեան ուսումնասիրութեան  
եւ տնտեսագիտական բացայայտ իրողութիւններու ,  
այդ կը տեսնենք շուտով : Բայց նախ հասկնանք թէ  
ներկայիս ի՞նչ միջոցներով է որ կը հարստանան  
մարդիկ :

## ՅԱԻԵԼԵԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ՅԱԻԵԼԵԱԼ

### ԱՐԺԷՔ

Ի՞նչպէս կը հարստանան մարդիկ. —

Դրամատէր դասակարգը կը ճզնի հաւատացը-  
նել միամիտ հասարակութեան թէ՛ իր հսկայական  
հարստութիւնը արդիւնքն է ո՛չ թէ կեղեքումին դոր-  
ծաւորներու քրտինքին շահագործման, այլ իր հա-  
լալ վաստակին: Պակաս չեն մեր հայերուս մէջ ալ  
մարդիկ որոնք կ'ըսեն.

— Էֆէնտի՛մ, խելք ունէր, աշխատեցաւ ու  
հարստացաւ:

Եւ օրինակներ ալ կը շարեն: Կիրակոս աղան  
Ժամանակին պարզ դործաւոր մըն է եղեր, յետոյ  
աշխատեր ու խնայեր է եւ հարիւր հազարներու տէր  
է դարձեր: Մըսաբը Թորոս վիճակահանութենէ  
հարիւր հազարներ շահեր է եղեր, միւսիւ Մարկոս  
զիւտ մըն է ըրեր եւլն. եւլն.:

Այս օրինակները սուտ չեն, կրնայ պատահիլ.  
Բայց հարցը այն է որ պատմողները իրենք ալ այդ

անուանները կը յիշատակեն , որպէս երջանիկ բացառութիւններ : Հազարներով մարդոց մէջէն մէկը , այդ ձեւով հարստացեր է , ատիկա սակայն հազուագիւտ բացառութիւն մըն է , իսկ բացառութիւնը օրէնք չի կազմեր ու կարելի չէ ընդհանրացնել :

Արդարեւ՝ դրամատէրերու մէջէն՝ քանի՞սն են որ իրենց խելքովը եւ ճակտի քրտինքովը դիզած են իրենց միլիոնները : Ի՞նչպէս կ'ըլլայ որ միլիոններով մարդիկ , առաւօտէն մինչեւ երեկոյ չարաչար կ'աշխատին , բայց , միշտ կը մնան նոյն գործաւորը , նոյն հոգսերով ծանրաբեռնուած , չեն կրնար քանի մը հարիւր տօլար իրարու քով բերել ու սպասել սեւ օրուան համար : Եթէ ամէն մարդու ունեցած հարստութիւնը , արդիւնքն է իր իսկ սեփական աշխատանքին եւ ճակտի քրտինքին , հասկա ո՞վ աւելի շատ կ'աշխտի քան գործաւորը : Բայց ի՞նչ հրաշք է որ՝ գեանին տակ , աղտոտ ու մրոտ հանքերու մէջ իր կեանքը մաշեցնող աշխատաւորը՝ որ խելք ալ ունի , բազուկի ուժ ալ , կամք ալ , չի կրնար հարստանալ , իսկ կապիտալիստի մը քոսոտ մէկ զաւակը , խեղանդամ , անգոր ու ապիկար , միլիոններու կը տիրանայ ամէն ամիս , անոր համար որ գործարաններ ունի՝ իր անունին արձանագրած՝ որոնցմէ դրամը կը հոսի աղբիւրի պէս , առանց որ ինքը իր անդամալոյծ կողերը շարժելու պէտք ունենայ : Եթէ աշխատանքով է որ կը հարստանան , ապա ուրեմն այդ մարդը պէտք էր սովահար մեռնէր , որովհետեւ ոչ մէկ գործ ունի կատարած :

Ուրեմն կա՛յ ուրիշ աղբիւր մը , ուրիշ պատճառ մը , որով կապիտալիստները դիզած են իրենց



միլիոնները: Կա՛յ, ու ատիկա՛ յաւելեալ արժէքն է, որ կը ստացուի գործաւորին կատարած յաւելեալ աշխատանքէն:

Բայց ի՞նչպէս կարելի է գնահատել յաւելեալ արժէքը, եւ ի՞նչ է արժէքը ինքնին:

Ի՞նչ է յաւելեալ արժէքը. —

Արժէքը գնահատութիւնն է առարկաներուն վըրայ թափուած պիտանի աշխատանքին: Աշխատանքն է որ կը ստեղծէ արժէքը: Օրինակ, երբ կ'ըսենք թէ սեղան մը կ'արժէ 10 տօլար, իսկ աթոռ մը 1 տօլար, կը նշանակէ թէ սեղանին վըրայ թափուած է տասն անգամ աւելի շատ աշխատանք՝ քան աթոռին. այսպէս, եթէ աթոռին շինութեան համար գործաւոր մը 1 ժամ միայն աշխատեր է, սեղանին շինութեան համար 10 ժամ վատնած է, այդ պատճառով ալ սեղանը կ'արժէ տասն անգամ աւելի՛ քան աթոռը:

Համաձայն այս իրողութեան՝ այն առարկաները, որոնց վըրայ մարդկային աշխատանք չէ թափուած, ինքնին արժէք մը չեն ներկայացներ: Արդարեւ հանքային ջուրը՝ լեռան մը ստորոտը իր աղբիւրին մէջ արժէք մը չունի, որովհետեւ մարդկային աշխատանքով չէ որ կը ստացուի, բայց երբ մարդիկ զայն կը լեցնեն սակառներու մէջ, յետոյ կը փոխադրեն քաղաքը, եւ սրուակներով կը ծախեն, այն ժամանակ ջուրը արժէք մը կը ստանայ ի վարձք՝ իրեն փոխադրութեան համար կատարուած աշխատանքին:

Ոսկին աւելի սուղ է քան արծաթը, անոր համար որ առաջինը շատ աւելի դժուարութեամբ եւ

երկարատեւ աշխատանքներով ձեռք կը բերուի քան թէ արծաթը :

Առարկայի մը արժէքը գնահատելը այս ձեւով դիւրին է, բայց ի՞նչպէս գնահատենք գործաւորին աշխատանքին արժէքը : Մենք գիտենք որ գործաւորը գործարանատիրոջ կը ծախէ իր աշխատանքը, իսկ գործարանատէրը ի՞նչ բան նկատի ունի, այդ գործաւորին վարձք տուած ժամանակը :

Ենթադրենք թէ գործաւոր մը վարձուեցաւ եւ կապիտալիստը գործաւորին տուաւ մէկ օրուան համար՝ 3 տօլար : Արդ՝ ի՞նչ բանի պիտի ծառայէ այդ դրամը : Այդ գումարով գործաւորը իրեն սնունդի, բնակարանի, մաքրութեան, հագուստներու եւլն. ծախսերը պիտի հոգայ : Ուրեմն, որպէսզի գործաւոր մը կարենայ ապրիլ եւ յաջորդ օրը նորէն գործարանը վերադառնալ աշխատելու, իր ապրուստին, այսինքն գոյութեան համար պէտք ունի օրը առնուազն 3 տօլար ստանալու : Արդ՝ գործաւորին աշխատանքին արժէքը հաւասար է այնքան ժամուայ աշխատանքին՝ գոր պէտք է գործ դրնել՝ գործաւորին ապրուստը ֆարելու համար : Այդ հաշուով եթէ մէկ ժամուան աշխատանքը արժէք կէս տօլար, կը նշանակէ գործաւոր մը օրը 6 ժամ աշխատելով արդէն իսկ լի ու լի փոխարինած կ'ըլլար գործարանատէրին կողմէ իրեն տրուած օրական 3 տօլար վարձքը :

Բայց դեռ չհասկցանք թէ ի՞նչպէս հարստացած են ու կը հարստանան կապիտալիստները : Ենթադրենք ատոնցմէ մին կ'օջիկի գործարան մը հիմնեց եւ իր պատրաստած կ'օջիկներուն զոյգը 5 տօլարէն ծա-

խեց վաճառականներու: Եթէ քննելու ըլլանք կը տեսնենք որ յաճախ այդ հինգ տօլարնոց կօշիկին վրայ իրապէս 5 տօլար ծախս եղած է գործարանին մէջ, գործարանատէրին կողմէ:

Արդարեւ ենթադրենք որ՝ գործարանատէրը ամէն զոյգ կօշիկի կաշիին համար վճարած է 3 տօլար: Գործարանին վարձքը, մեքենաներուն մաշումը, իւղերու գործածութիւնը եւլն., միջին հաշուով իւրաքանչիւր զոյգին կը բարդեն մէկ տօլարի ծախք մը, գործաւորին ալ վարձքը, օրական 6 ժամ աշխատելու պայմանով՝ մէկ զոյգին համար կ'ըլլայ 1 տօլար, ընդհանուր գումարը՝ 5 տօլար:

Ուրեմն ի՞նչ շահ ունեցաւ գործարանատէրը, քանի որ 5 տօլար ծախսեց մէկ զոյգին համար եւ յետոյ 5 տօլարի ծախսեց:

Մենք վերը տեսանք թէ գործաւորը օրական միայն 6 ժամ աշխատելով ճիշդ ու ճիշդ փոխարինած կ'ըլլար իրեն վճարուած 3 տօլարի գումարը՝ որը իր կարգին իր ապրուստի գինը կը կազմէր: Ու երբ ըսինք թէ զոյգը 5 տօլարի ծախուած կօշիկէն գործարանատէրը միայն իր ծախսերը կը հոգայ, առանց սէնթ մը շահ ունենալու, մենք նակտի ունէինք ու հաշուեցինք գործաւորին միայն օրական 6 ժամուայ աշխատանքը:

Բայց ո՞ր կապիտալիստն է, որ իր գործաւորները օրական միայն 6 ժամ կ'աշխատեցնէ: Գործարանատէրը առհասարակ օրով է որ կը վարձէ եւ իրեն օրերն ալ 10-12 ու հազուադէպ պարագաներու մէջ միայն 8 ժամ կը հաշուէ:

Արդ, ի՞նչ կը վճարէր գործաւորին. — օրը 3

Թողար, վերջինս քանի՞ ժամ աշխատելով երեք Թողարին դինը վճարած կ'ըլլար — 6 ժամ: Ուրեմն, գործաւոր մը օրը 6 ժամ աշխատելէ յետոյ իրաւունք պիտի ունենար ըսելու գործարանատէրին թէ՛ դուն ինձ 3 Թողար տուիր ես ալ 6 ժամուայ աշխատանք տուի քեզ: Հետեւաբար 6 ժամէն յետոյ ես ազատ պէտք է ըլլամ մեկնելու:

Բայց գործարանատէրը բռնադատած է իր գործաւորը, աշխատելու յաճախ մինչեւ 12 ժամ, ու այդպիսով է միմիայն ու բացառաբար որ կ'ապահովէ իր շահը. շահ մը, որ ուրիշ բան չէ, բայց եթէ գործաւորին 6 ժամէն յետոյ 6 ժամ եւս կատարած, այլ չվնարուած աշխատանքին արդիւնքը:

Պղտիկ հաշիւ մը մեզի ցոյց պիտի տայ թէ ի՞նչ հսկայ գումարներ կը դիզեն գործատէրերը իրենց աշխատաւորները ժամանակէն աւելի աշխատեցնելով եւ յաւելեալ արժէքը օգտագործելով:

Ենթադրենք որ վերը յիշուած կօշիկի գործարանը կ'աշխատեցնէ 10,000 գործաւորներ, որոնցմէ իւրաքանչիւրը օրը 6 ժամ աշխատելով եւ 3 զոյգ կօշիկ շինելով, ամէնքը միասին կը պատրաստեն  $10,000 \times 3 = 30,000$  զոյգ կօշիկ: Այս կօշիկներէն իւրաքանչիւրին համար ծախսուած է 3 Թողար կաշի, մէկ Թողար գործաւորի եւ մէկ Թողար ալ մեքենայի, շէնքի եւլն. , ընդամէնը 5 Թողար: Որով, երբ կօշիկները ծախէ, կը ստանայ  $30,000 \times 5 = 150,000$  Թողար, հաւասար իր ծախսած գումարին:

Բայց ինչպէս տեսանք, գործատէրը ոչ թէ 6 այլ 12 ժամ կ'աշխատեցնէ իր գործաւորները. այսինքն կրկինը:

Առաջին 6 ժամերուն մէջ անշուշտ ինչ ծախս որ  
ըրած է կաշիի, եւ միւս սպառումներուն համար,  
նոյնը պիտի ընէ նաեւ երկրորդ 6 ժամերու ըն-  
թացքին, երբ նոր 30,000 զոյգ կօշիկ եւս պիտի  
սպարաստուի: Որով իբր ծախս կ'ունենայ՝ 30,000  
զոյգ կաշի 3 տօլարէն 90,000, մէկական տօլար մե-  
քենայի, շէնքի եւայլն ծախս 30,000, ընդհանուր  
ծախսը  $90,000 + 30,000 = 120,000$ :

Բայց այս երկրորդ 6 ժամերու ընթացքին գոր-  
ծատէրը ի՞նչ կը վնարէ գործաւորներուն իբր  
վարձք. ՈԶԻՆԶ: Ան միայն առաջին 6 ժամերուն  
համար վնարած էր 3 տօլար, իսկ երկրորդին սէնթ-  
մը անգամ չի վնարեր:

Եւ սակայն երկրորդ 6 ժամերու ընթացքին ալ  
կը սպարաստուին 30,000 զոյգ կօշիկներ, որոնց  
վաճառումէն գործատէրը նոյնպէս պիտի ստանայ  
օրական 150,000 տօլար, որուն համար սակայն մի-  
այն 120,000 տօլար ծախսած էր, իսկ  $150,000 -$   
 $120,000 = 30,000$  տօլար զուտ շահ մը կ'ունենայ օ-  
րական, որ ինչպէս տեսանք, ուրիշ բան չէր, եթէ  
ոչ գործաւորներուն չվնարուած, յաւելեալ աշխա-  
տանքներուն գինը:

Ահա թէ ի՞նչպէս կը հարստանան գործարանա-  
տէրերը:

Ուրեմն, այժմ հանգիստ սրտով կրնանք պոռալ  
այն կապիտալիստի երեսին, որ մեզի հաւատացնել  
կ'ուզէր թէ՛ «ամէն մարդ իր ճակտին քրտինքովն է  
որ կը հարստանայ», թէ «գուն քու հարստութիւնդ  
դիղեցիր խեղճ գործաւորներուն սարսաղբաժնի յա-  
ւելեալ աշխատանքովը որ անվճար թողուցիր, եւ

հետեւարար քու միլիոններուդ մէջ միմիայն գործաւորին հակտին քրտինքը կայ կուտակուած եւ ուրիշ ոչինչ» :

Այս իրողութենէն ընկերվարութիւնը եւ ամէն մէկ գործաւոր սա սլարդ հետեւութիւնը կը հանէ թէ՛ ուրեմն այն օրը երբ աշխատաւորութիւնը ինքը տէր դառնայ գործարանին, մեքենային եւ դրամագլուխին, իրեն կը մնայ ամբողջ շահը եւ ոչ ոք կը կողոպտէ իր յաւելեալ աշխատանքին արդիւնքը : Այս հետեւութիւնը, ինչպէս կը տեսնուի, շատ տրամարանական է, բայց թէ տեղի պիտի ունենա՞յ, աշխատաւոր դասակարգերը ի՞նչպէս տէր պիտի դառնան հարստութիւն ստեղծող միջոցներուն, այդ կը տեսնենք շուտով :

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՒ

### ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Կապիտալիզմը իր ծոցին մէջ կը կրէ թոյնը՝  
որ պիտի թունաւորէ զինքը եւ մահացնէ։—

Նախորդ էջերով մենք ծանօթացանք կապիտալիստական ներկայ կարգերուն յոռի կողմերուն, որոնք պատճառ դարձած են մարդկութեան մեծագոյն մասին դժբախտութեան։ Մենք տեղեկացանք թէ ինչպէ՞ս մասնաւոր սեփականատիրութիւնն է մայր աղբիւրը ներկայ անհաւասար կարգերուն։ Հասկցանք թէ կապիտալիստները իրենց հարստութիւնը կը դիզեն ո՛չ թէ իրենց նակտին քրտինքով, այլ գործաւորներուն յաւելեալ աշխատանքով։ Եւ վերջապէս մեզ համար հասկնալի եղան այն հիմնական ու կարեւոր նպատակները, որոնց գործադրութիւնը կը պահանջէ ընկերվարութիւնը, եւ որոնք մեզ կը խոստանան հաւասար աշխատանք, հաւասար վայելք եւ երջանկութիւն։ Բայց դեռ չկըր-

ցանք համոզուիլ թէ իրապէս օր պիտի գա՞յ որ  
գործադրութեան դրուին ընկերվարական սկզբունք-  
ները եւ թէ որո՞նք են այն հիմնական ազդակները  
որ պիտի կործանեն կապիտալիստական ներկայ ըն-  
կերութիւնը :

Կապիտալիզմը իր իսկ ծոցին մէջ կը կրէ քոյ-  
նը, որ պիտի քունաւորէ զինքը, ըսին գիտական  
ընկերվարութեան հիմնադիրները, Մարքսն ու Էն-  
կէլսը, եւ կը կրկնեն զայն ընկերվարականները ներ-  
կայիս : Ի՞նչ բաներէ կը կազմուի այդ թոյնը, որ  
գետեղուած է դրամատիրական կարգերուն գիրկը  
եւ երթալով կ'աճի, կը տարածուի ու կը սպառնայ  
խորտակել զանոնք :

Ճարտարարուեստի զարգացումը, մեքենա-  
կան կատարելութիւնն ու գիւտերը. —

Կապիտալիզմը իր բոլոր յոռի կողմերուն հետ  
մարդկութեան համար ստեղծած է անսահման բա-  
րիքներ, ամէն օր իր կատարած զմայլելի գիւտերով  
եւ մեքենական կատարելութիւնով :

Արդարեւ սրահ մը մեր աչքին առջեւ բերենք  
տասնեակ մը տարիներ առաջ այն միջոցները, ո-  
րոնք կը գործածուէին արտադրութեան համար, եւ  
բազմատենք այսօրուան հրաշագործ մեքենաներուն  
հետ :

Հարկ չկայ շատ հեռունները երթալու. գեռ մին-  
չեւ այսօր ալ կարգ մը հայկական գաւառներու մէջ  
կը գործադրուին տնային տնտեսութեան բոլոր ձե-  
ւերը : Այսպէս գիւղացին իր մկրատով կը կտրէ ոչ-  
խարին բուրգերը, կը տանի գետին եզերքը, փայ-



տով կը թափէ ու կը լուայ յետոյ կը փռէ արեւին տակ, մինչեւ չորնայ, յետոյ սանտերֆ ըսուած գործիքի մը վրայ բուրդը կը գդէ, արչկանով կամ ճախարակով կը մանէ, վերջապէս մանածը գործիքի նմանող փայտերու վրայ անցուցած՝ տէգկեահ կը կազմէ, ոտները հորին մէջ կախած տէգկեահին առջեւ կ'անցնի, մըգիւգով կը սկսի հիւսել եւ երբ օրը իրիկուն կ'ըլլայ հաղիւ քանի մը կանգուն կերպաս կը ստանայ...

Բաղդատեցէք այժմ այդ դրութիւնը այն միւս ձեւին հետ, որով կապիտալիստները ներկայիս կերպաս կը պատրաստեն կամ կտաւ կը հիւսեն:

Հսկայ գործարաններ, ուր կ'աշխատին հարիւր հազարաւոր գործաւորներ, եւ ուր մէկ կողմէն աղտոտ բամպակը մեքենային կը յանձնեն իսկ միւս կողմէն ծալլուած, կապուած ու կնքուած կերպասներու սիրուն ծրարները կը ստացուին:

Այս անհուն դիւրութիւնները մարդոց հայթայթողը կապիտալիզմն է եւ անոր զարգացումը: Ու տակաւին տնտեսական արդիւնաբերութեան մէջ տեղի ունեցած են գիւտեր, որոնց շնորհիւ երկաթի մը կտորը տասնեակ մը մարդոց աշխատանքը կը կատարէ: Մէկ կոճակ սեղմելով շատ աւելի դիւրին ու կանոնաւոր գործ կը տեսնուի քան շաբաթ մը աշխատելով: Ու այս կատարելութիւնը տեղի ունեցեր է ճարտարարուեստի գրեթէ բոլոր ճիւղերուն մէջ, շնորհիւ կապիտալիզմի զարգացման:

Ճիշդ է որ այսօր այդ կատարելութիւնները կը ծառայեն մասնաւոր անձերու համար հարստութիւն դիզելու, ու մինչեւ իսկ շատ անգամ գործաւորնե-

րուն հացին պատնառ կ'ըլլան, բայց մենք արդէն գիտցանք թէ՛ ատոր պատնառը արտադրութեան միջոցներուն անհատական սեփականութիւնն անկատուիլն է: Ինչ ալ ըլլայ, ատոնք մարդկութեան համար անզնահատելի յառաջդիմութիւններ են, եւ վաղը երբ անոնք դադրին մասնաւորներու պատկանելէ եւ դառնան հանրութեան սեփականութիւնը, այն ատեն ամբողջ մարդկութիւնը պիտի նպաստաւորուի անոնցմէ:

Բայց մեքենական այս կատարելութիւնները ի՞նչ կապ ունին կոսմոսալիստական կարգերու տապարման հաւանականութեան հետ:

Մեքենան չափանիչն է մարդկային մտքի զարգացման:

— Ըսէ ինձ թէ ի՞նչ տեսակ ընկեր ունիս եւ ես քեզի պիտի պատասխանեմ թէ՛ դուն ի՞նչ տեսակ մարդ ես կ'ըսէին երբեմն: Ճիշդ նոյն ձեւով այժմ կրնանք հարցնել՝

— Ըսէ թէ ի՞նչ տեսակ մեքենայի վրայ կ'աշխատին ու ես պիտի պատասխանեմ թէ՛ ի՞նչ մտաւոր զարգացման տէր են եւ թէ՛ տնտեսական յառաջդիմութեան ո՛ր աստիճանին վրայ կը գտնուին:

Քարէ գործիքներով աշխատող մարդոց մտաւոր վիճակը երբեք կարելի չէ հաւասար նկատել այն մտավիճակին, որուն տիրացաւ մարդը երբ տեղի ունեցաւ երկաթին գիւտը եւ երկաթեայ գործիքներ շինուեցան:

Ոտները հորին մէջ կախած եւ վայտէ տէգ կեանքին առջեւ կտաւ հիւսող գիւղացիին ուղեղը մեծապէս կը տարբերի՝ մեծ քաղաքներու կտաւի գոր-

ծարաններուն մէջ աշխատող ոեւէ գործաւորի ուղեղէն . անոր համար որ ամէն մէկ գործիք ինքնին՝ իր շրջանի ֆաղափակրթութիւնը կը մատնանշէ :

Արդ, որքան որ մեքենական կատարելութիւններ եւ գիւտեր տեղի կ'ունենան, այնքան կը բարձրանայ եւ կը կատարելագործուի այդ մեքենաներուն վրայ աշխատող գործաւորին միտքն ու հոգին . իսկ որքան կը զարգանայ գործաւորը՝ այնքան դիւրաւ կը գիտակցի իր ստրուկ վիճակին, այնքան աւելի կը ջանայ կազմակերպուիլ եւ վերջ տալ իր դժնդակ պայմաններուն :

Եւ որովհետեւ կապիտալի զարգացումը կը տրամադրէ միշտ եւ անխուսափելիօրէն նորանոր մեքենական կատարելութիւններու տիրանալ, իր այդ բնոյթովն իսկ ան ծնունդ կուտայ ուրիշ անխուսափելիութեան մը՝ որ է գիտակից բանւորութեան մը գոյութիւնը : Մէկը միւսին արգիւնքն է եւ մէկը միւսով պայմանաւորուած : Այսպէս կրնանք պարզ հաշուի վերածել՝

կապիտալիզմի զարգացումը հաւասար է մեքենական կատարելութեան : Մեքենական կատարելութիւնը հաւասար է՝ մտաւորապէս բարձր ու գիտակից բանւորութեան : Գիտակից բանւորութիւնը հաւասար է՝ կազմակերպուած պայքարի՝ ընդդէմ դրամատիրական կարգերու : Իսկ գիտակից ու գորաւոր պայքարը հաւասար է՝ աշխատաւորութեան յաղթանակին :

Ահա թէ ի՞նչպէս կապիտալիզմը որքան զարգանայ, այնքան զօրացուցած կ'ըլլայ իր թշնամին՝ գիտակից աշխատաւորութիւնը, որ իբրեւ իր մէջէն

իսկ ճնունդ առած թոյն՝ երթալով սպառնալից կը  
դառնայ: Բայց՝ միայն այսքանը չէ:

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

### ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ

Մրցում, դրամագլուխի կեդրոնացում  
եւ աշխատաւորութեան գիտակցութիւնը. —

Մեծնալ ու ընդարձակուիլ, այս է գոյութեան պայմանը ամէն մէկ դրամագլուխի: Տնտեսական կատարելութիւնն ու ճարտարարուեստի զարգացումը՝ միակ շուկայի մը վերածեր են ամբողջ աշխարհը: Կապիտալը իր համայնակուլ բնոյթով խորտակած է ազգային, երկրային, կօրնական եւ ամէն կարգի պատնէշները:

Շնորհիւ կապիտալի այդ համատարած արշաւանքին՝ այս պահուս ո՛չ մէկ պետութիւն ի վիճակի է ապրելու առանձինն, ունենալու իր սեփական անկախ տնտեսութիւնը եւ վարելու զայն այնպէս մը, որ բնաւ չազդուի արտաքին աշխարհէն եւ միւս պետութիւններու վիճակէն:

Չինաստանի եւ Ճափոնի հեռաւոր անկիւններուն

մէջ իսկ բամպակի, բուրդի, կաշիի եւ ուրիշ հում նիւթերու գները եթէ ոչ բոլորովին ենթարկուած՝ այլ անմիջականօրէն ազդուած են Ամերիկայի, Անգլիոյ եւ ուրիշ պետութեանց շուկայի գներէն եւ փոխադարձաբար:

Ի՞նչն է պատճառը այս կապակցութեան, եթէ ոչ ճարտարարուեստի զարգացումը, կապիտալի նըլաճողական բնոյթը եւ կապիտալիստներու մրցակցութիւնը:

Համաշխարհային շուկայի մէջ ահաւոր պայքար մը ստեղծուած է, իրարու հետ կը մարտնչին, ո՛չ միայն տարբեր դասակարգերը, այլեւ միեւնոյն շահագործող դասին պատկանող դրամատէրերը, որոնք իրար հարուածելու մէջ նոյնքան անխնայ եւ անողորմ են, ինչպէս իրենց ստորադաս ծառայողները:

Ի՞նչ է մրցումը եւ ի՞նչպէս տեղի կ'ունենայ ան:

Ենթադրեք թէ մէկ փողոցի մէջ կը գտնուին տասը նպարավաճառներ, որոնցմէ ամէն մէկը կը ջանայ իր կողմը քաշել յաճախորդները եւ շատ շահիլ: Բայց երկար փորձառութիւնով կը համոզուին թէ իրենց ունեցած փոքրիկ դրամագլուխով չպիտի կրնան պէտք եղածին պէս շահիլ, մրցելով իրենց նման տասը ուրիշ նպարավաճառներու հետ: Ուստի անոնցմէ հինգ նպարավաճառները իրարու քով կուգան, կը միաացնեն իրենց դրամագլուխը, կը բանան մեծ ու կանոնաւոր խանութ մը եւ կը սկսին մրցիլ միւս հինգ խանութներուն դէմ: Բայց ի՞նչ ձեւով: Եթէ շարունակեն ապրանքներու գիները նոյնը պահել, շատ բան չեն կրնար ակնկալել: Ուս-

տի առաջին առթիւ ապրանքներու գիները կը պակ-  
սեցնեն : Օրինակ , մէկ փառննո շաքարը եթէ 15 սէն-  
թի կուտան միւս խանութները , իրենք կը սկսին 10  
սէնթի ծախել , նոյնպէս եւ միւս առարկաները : Յա-  
ճախորդները գիներու այդ տարբերութիւնը տեսնե-  
լով՝ անշուշտ միացեալ նպարտավաճառներուն խա-  
նութէն առուտուր կ'ընեն : Ու այնպէս մը կ'ըլլայ որ  
միւս խանութպանները գրեթէ կը դադրին առու-  
տուր ընելէ : Եթէ իրենք ալ պակասով ծախեն չեն  
կրնար գիմանալ , որովհետեւ պղտիկ է իրենց դրա-  
մագլուխը եւ վնաս կ'ընեն : Հետեւաբար ատեն մը  
այդպէս գիմանալէ յետոյ , ստիպուած՝ կը գոցեն  
իրենց խանութը եւ սնանկանալով կը քաշուին հրա-  
պարակէն :

Արդ , անգամ մը որ այդ հինգ խանութները մէջ-  
տեղէն կը վերնան եւ ասպարէզը կը մնայ միացեալ  
խանութին , վերջինս այլեւս մրցորդ չունենալով՝  
կը վերահաստատէ իր ապրանքներուն նախկին գի-  
ները ու մինչեւ իսկ քիչ մըն ալ կը բարդէ անոնց վը-  
րայ , վստահ ըլլալով որ թաղեցիները ուրիշ խա-  
նութէ մը չեն կրնար գնում կատարել :

Ճիշդ այս նոյն մրցումն է որ տեղի կ'ունենայ  
ամբողջ կապիտալիստական աշխարհին մէջ , շատ  
աւելի մեծ չափերով եւ մեծ դրամատէրերու կողմէ :

Ամերիկայի մէջ մասնաւորաբար մենք ամէն  
տարի ահանատես կ'ըլլանք նորանոր ճարտարար-  
ուեստական ձեռնարկներու , որոնց տէրերը միլիո-  
նատէր քրքրաքներն են , որոնք իրարու քով եկած՝  
իրենց դրամագլուխները միացնելով կը ջանան շատ  
ապրանք արտադրել , աժան ծախել , այդ միջոցով

սնանկացնել իրենցմէ պզտիկ դրամատէրերը եւ տիրել հրապարակին :

Կարլ Մարքս , ի տես տնտեսական այս ահաւոր մրցումին եւ կապիտալի կեղրոնացման՝ մղուեցաւ քիչ մը ծայրայեղ ենթադրութիւն ընելու , ըսելով թէ՛ որ պիտի գայ որ մրցումը պիտի հասնի իր կատարելութեան՝ եւ ամբողջ դրամազլուխն ու ճարտարարուեստը պիտի կեղրոնանան մէկ քանի մասի վրայ համրուելիք հսկայ թրքաքներու ձեռքը , որոնք պիտի վարեն ո՛չ թէ մէկ պետութեան , այլ ամբողջ աշխարհի տնտեսութիւնը :

Թէ ինչպէս տեղի պիտի ունենայ կապիտալիզմի փոխանցումը ընկերվարութեան .—

Արդ , երբ մէկ կողմէ արդիւնաբերական միջոցներու , գիւտերու , եւ մեքենական կատարելութեան միջոցաւ ճարտարարուեստը թեւ ու թռիչք կը ստանայ , ամբողջ աշխարհ կը վերածուի մէկ շուկայի , երբ միւս կողմէ արտադրութեան եւ սպառումի միջեւ անհաւասարակչութեան եւ տեղի ունեցող կատաղի մրցումներով մշտապէս կը սնանկանան եւ հրապարակէն կը քաշուին պզտիկ դրամազլուխի պզտիկ արտադրութեան եւ ձեռնարկութեանց տէրերը , եւ անհաշիւ միլիառներու դրամազլուխը կը կեղրոնանայ համեմատարար փոքրաթիւ անձերու ձեռքին , եւ երբ երրորդ կողմէ՛ մարդկութիւնը վերածուած կ'ըլլայ երկու բանակներու , որոնց մէկ կողմը կեցած են սակաւաթիւ սեփականատէրեր , կապիտալիստներ , որոնք գործաւորներուն յաւելեալ աշխատանքը կը շահագործեն , իսկ միւս կողմէ աշխատաւորական մեծ բանակը , հսկայական զանգ-



ուածներով՝ որոնք կամ բոլորովին սեփականագուրկ են եւ կամ շատ չնչին սեփականութիւն մը ունին :

Ինչ սխալի ըլլայ արդեօք այդ աշխատաւոր բանակին դիրքը : Ինչպէս տեսանք, ճարտարարուեստի զարգացումին, արդիւնաբերական միջոցներու կատարելութեան ու կատարուող գիւտերու հետ համընթաց կը բարձրանայ նաեւ աշխատաւորութեան գիտակցութիւնը :

Որքան դրամագլուխը կը կեդրոնանայ մասնաւորներու ձեռքը եւ որքան անոնց անուշով կը հիմնուին հսկայ գործարաններ, նոյնքան ալ այդ հաստատութեանց մէջ կը շատնան միլիոնաւոր գործաւորներ, որոնք ամէն օր քով քովի նստելով, վարժուելով կարգապահութեան, աստիճանաբար կը գիտակցին իրենց դրութեան, կը կազմակերպուին, կը տեսնեն իրենց ուժին արժէքը, կը տեսնեն թէ իրենք թիւով անհամար են, թէ իրենք են տառապալից աշխատողները եւ սակայն իրենք են որ գուրկ կը մնան վայելքէ, որովհետեւ իրենց աշխատանքին արդիւնքը կ'երթայ մէկ քանի թրքերու գրպանը : Այդ գիտակցութեան հասած աշխատաւորութիւնը իսկոյն կը կռահէ թէ այն անձերը, որոնք չեն աշխատիր եւ սակայն կը վայելեն, իրենց տիրապետութիւնը հիմնած են այն օրէնքին վրայ, որով իրենց կը պատկանին այն գործարանը՝ ուր գործաւորներն են խոնուած, այն գործիքը որով գործաւորը կ'աշխատի, եւ այն դրամագլուխը, որ ուղղակի գործաւորութեան ճակատին քրտինքն է : Հետեւաբար ոչինչ կը մնայ ընել այդ գիտակցութեան հասած աշխատաւորութեան՝ բայց եթէ փոքրիկ

հարուածով մը ինքզինքը յայտարարել սեփականա-  
տէր՝ արտադրութեան միջոցներուն եւ հաստատել  
հաւասար աշխատանք եւ հաւասար վայելքի դրու-  
թիւնը :

Հարկ է սակայն անգամ մըն ալ յիշատակել թէ՛  
ապագային տեղի ունենալիք այս յեղաշրջումն ու  
կապիտալիստական կարգերու փոխարինումը հա-  
մայնատիրական կարգերով՝ կապուած է հետեւեալ  
խիստ կարեւոր պայմաններուն, առանց որոնց այդ  
ուղղութեամբ կատարելիք ամէն փորձ դատապար-  
տուած է վիժելու :

Այդ պայմաններն են՝

Ա. — Արտադրութեան միջոցներու կատարելու-  
թիւնը :

Բ. — Ճարտարարուեստի զարգացում :

Գ. — Դրամագլուխի համեմատաբար կեդրոնա-  
ցում :

Դ. — Աշխատաւորութեան դիտակից ու կադ-  
մակերպուած վիճակ :

Ճիշդ է թէ՛ այս պայմանները ներկայիս շատ  
քիչ երկիրներու մէջ եւ կամ շատ քիչ չափերով դո-  
յութիւն ունին, բայց ճշմարիտ է թէ՛ ա՛յդ է ու-  
ղին՝ ուրկէ կ'ընթանայ կապիտալիստական աշ-  
խարհը եւ թէ՛ այդ զարգացումի ընթացքովն է որ  
կապիտալիզմը կը զարգացնէ նաեւ աշխատաւորու-  
թիւնը՝ մինչեւ այն աստիճան, ուր իր ծոցին մէջ  
սնուցած ու զարգացուցած այդ դասակարգը՝ որդի  
մը նման կրծելով, օր մըն ալ պիտի տապալէ զինքը :

Ուրեմն՝ կեանքն է որ մեզ պիտի հասցնէ այդ  
անխուսափելի վնասական ժամին, տնտեսական ու

նարտարարութեան զարգացումն է որ աստիճանաբար պիտի հասունցնէ իր մէջ ապագայ ընկերութեան սաղմը, մինչեւ որ օր մըն ալ կտուցի պատիկ հարուածով մը պատուի կեդերը եւ դուրս գայ նոր ընկերութեան հասունցած սաղմը:

## ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ ԵՒ

### ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԾՐԱԳԻՐԸ

Ե՞րբ պիտի գայ ընկերվարութիւնը. —

Մենք տեսանք թէ ընկերվարութեան վերջնական իտէալներուն ամբողջական իրականացումին համար՝ անհրաժեշտ էին որոշ պայմաններ, տնտեսական, մտաւոր եւ հոգեկան: Բայց, ե՞րբ պիտի ստեղծուին ու լրանան՝ պահանջուած այդ պայմաններն ու ե՞րբ է որ պիտի հաստատուի ընկերվարական իրաւակարգը: Հարի՞ւր տարիէն, հազա՞ր, թէ աւելի կամ պակաս ժամանակամիջոցին:

— Չենք գիտեր:

Այդ մասին ներելի չէ դուշակութիւն ընել, որովհետեւ մարդկային տնտեսութիւնը ունի իր առանձնայատուկ զարգացման ուղին ու պայմանները, որոնց ենթարկուելով եւ զանոնք արժանաւորապէս ըմբռնելով է միայն որ մարդ արարածը պիտի կարենայ իր համեստ ազդեցութիւնը դործ դրնել անոնց վրայ, այլապէս տնտեսական զարգա-

ցումը շատ ալ տրամադիր չէ ենթարկուելու անհատներու ցանկութիւններուն եւ գուշակութիւններուն :

Այս իսկ պատճառով, ընկերավարութիւնը ո՛չ մէկ ատեն միամտութիւնը չէ ունեցած՝ իր ողջ իտէպլներուն ամբողջական իրականացումը պահանջելու այսօր իսկ, անմիջապէս: Ան իր ծրագիրը մասերու բաժնած է, առաւելագոյն եւ նուազագոյն, կամ հեռաւոր եւ մօտաւոր:

Իր առաւելագոյն ծրագրով ընկերավարութիւնը կը պահանջէ՝ ինչպէս տեսանք արդէն՝ հիմնական խորտակումն ու փոփոխութիւնը կապիտալիստական ներկայ անարդար ու ազիտաւոր կարգերուն եւ անոնց փոխարէն հաստատումը՝ աշխատանքի ու վայելքի հաւասարութեան տիրապետութեան: Բայց ընկերավարութեան այս ծրագիրը իտէպլն է ինքնին աշխատաւոր ժողովուրդներուն: Ան փարոս մըն է, որուն յառած պէտք է մնան նայուածքները աշխատաւոր զանգուածներուն, որպէսզի գիտնան թէ ո՛ւր է իրենց վերջնական կայանը, թէ որո՞նք են այն կարգերը, որոնց տիրապետութեան ներքեւ միայն իրենք պիտի կարենան ազատ շունչ մը քաշել եւ կատարելապէս երջանիկ ըլլալ, ան է նաեւ որ պիտի պայծառացնէ իրենց միտքն ու հողին եւ թոյլ պիտի չտայ իրենց դժուարին պայքարներու ընթացքին՝ աջ կամ ահեակ խոտորելու:

Իսկ իր նուազագոյն ծրագրով, ընկերավարութիւնը կ'ընէ այն տեսակ պահանջներ, որոնց իրականացումը աշխատաւորութեան համար խիստ ան-

հրաժեշտ, այլ մանաւանդ հնարաւոր է ներկայ կարգերուն մէջ :

Յառաջդիմութեան անիւր աստիճանաբար միայն կը դործէ : Այսպէս է բնութեան մէջ, մարդոց բովանդակ դործունէութեան մէջ, այդպէս է առաւելապէս՝ տնտեսական կեանքի մէջ : Ի՛նչ բաներու որ մենք ներկայիս ահանատես ենք եւ կապիտալիստական ամբողջ իրաւակարգը ինքնին՝ արդիւնքն են ո՛չ թէ վայրկենական յեղաշրջումներու, այլ մարդկութեան տնտեսական մտաւոր ու հոգեկան կեանքին մէջ յառաջդիմութեան անիւին կատարած աստիճանական, յամբընթաց, այլ հաստատուն քայլերուն :

Ընկերվարութիւնը, ուրեմն, չէր կրնար մէկ օրէն միւսը խորտակել կապիտալիստական բովանդակ կարգերը՝ որոնք արդիւնքն են դարբերու ընթացքին կատարուած յառաջդիմութիւններուն : Չէր կրնար, որովհետեւ այն պայմանները, որոնք ծնուցին եւ զարգացուցին կապիտալիզմի տիրապետութիւնը եւ ապահովեցին անոր յաղթանակը՝ այդ պայմանները դեռ չհասցուցին մարդկային տնտեսութիւնը, ճարտարարուեստը, արդիւնաբերութեան միջոցները եւ նաեւ աշխատաւոր մասսաներուն միտքն ու հոգին՝ այն կատարելութեան, որով կարելի ըլլար անմիջականօրէն ու արդիւնաւորապէս կատարել փոխանցումը նոր կարգերուն :

Ահա թէ ինչո՞ւ, եւրոպայի թէ Ամերիկայի բոլոր ընկերվարական կուսակցութիւնները, պահելով հանդերձ ընկերվարական իտէալին լման իրագործումը՝ վաղուան, այսօրուան համար՝ իրենց ծրա-

զրէն զատած են մասեր մը՝ որոնց իրազործումը հիմնական ցնցում չառաջացներ կապիտալիստական կարգերուն մէջ, որոնք հնարաւոր են ներկայիս ու մանաւանդ որոնք զօրաւոր կոուան մը պիտի հանդիսանան աշխատաւորութեան մղած պայքարներուն մէջ, ի խնդիր վաղուան յաղթանակին:

Ընկերավարական կուսակցութիւններու նուազագոյն ծրագրին մէջ բովանդակուած են երկու գլխաւոր պահանջներ՝ տնտեսական եւ քաղաքական:

Որո՞նք են ընկերավարութեան տնտեսական նուազագոյն պահանջները. —

Յիշենք միայն գլխաւորները:

Ա. — Ութժամեայ բանւորական օր: Ընկերավարական կազմակերպութիւններու համար յատկանշական կարեւորութիւն մը ունին երեք ութեր: Ութժամ աշխատանք, ութ ժամ հանգիստ, ութ ժամ բուն: Այս երեք ութերը անհրաժեշտ պայմաններն են մարդ արարածին համար, որպէսզի կարենայ գոնէ իրրեւ գործաւոր ապրիլ եւ ամէն օր գործարանը երթալ աշխատելու: Արդարեւ, առողջապահական պայմանները կը հարկադրեն որ մարդ անհատը ամենաչատր ութ ժամէն աւելի չգործածէ իր ֆիզիքական ու մտաւոր ուժերը, որ աշխատող մարդուն ֆիզիքական պահպանման համար անհրաժեշտ է օրը ութ ժամ քուն, եւ վերջապէս օրուան մէջ մարդ մը գոնէ ութ ժամ ալ տրամադրելի պէտք է ունենայ իր ընտանեկան, անձնական եւ հոգեկան ու մտաւոր գործերով զբաղելու:

Բ. — Աշխատավարձի յաւելում:

Գ.— Կիներու աշխատանքները աւելի քեքել ու տանելի պէտք է ըլլան, քան տղամարդոցը, տըր- ուած ըլլալով առաջիններուն Ֆիզիքական տկար կազմը :

Դ.— Մանուկները պէտք է արգիլուին գործա- րաններու մէջ աշխատել, որովհետեւ անոնք կը խամբին ու կը ծիւրին վաղաժամ ծանր բեռան տակ : Մանուկները պէտք է ձրի եւ սարտադիր ուսման հետեւին, որովհետեւ հայրենիքը ամէն բանէ ա- ռաջ ուսեալ զաւակներու պէտք ունի :

Ե.— Բանուորին իրաւունքը պէտք է պաշտպանել օրէնքով : Գործարանատէրը պէտք է սարտաւոր- ուի հատուցում ընել իր գործաւորին՝ երբ վերջինս վնասուած է իր գործին մէջ եւ կամ երբ տկարու- թեան, ծերութեան կամ այլ բանաւոր պատճառով ի վիճակի չէ աշխատելու :

Զ.— Գործարանները պէտք է շինուին առողջա- պահական պայմաններու համաձայն, օդի եւ լոյսի յարմարութիւններով :

Է.— Հողերու պետականացում : Բոլոր հողերը, որոնք կը վերաբերին մասնաւոր կալուածատէրե- րու, կամ վանքերու եւ զանազան հաստատութիւն- ներու, պէտք է գրաւուին եւ պետութեան սեփա- կանութիւնը զառնան : Պետութիւնը զանոնք կը բաժնէ ամէն անոնց, որոնք կ'ուզեն հողին վրայ աշխատիլ : Այս ձեւով միայն հնարաւոր պիտի ըլ- լայ թէ՛ անմիջական կործանումէ փրկել անհող կամ սակաւահող զիւզացիութեան քայքայուած տնտե- սութիւնը եւ թէ՛ միանգամայն օգտագործել եւ պե- տութեան համար հասոյթի աղբիւր մը դարձնել այն



անհաշիւ տարածութիւններով հողերը, որոնք այժմ  
թափուր կը մնան եւ կամ մասնաւորներու համար  
միայն հարստութիւն կը շինեն:

Ը.— Արտօնութիւն գործաւորական միութեանց  
կազմութեան եւ գործադուլի ազատութիւն: Գոր-  
ծաւորը օրէնքով պէտք է ազատ ըլլայ իր տնտեսա-  
կան շահերու պաշտպանութեան համար միութիւն-  
ներ կազմելու եւ իր պահանջներուն իրագործման  
համար՝ եթէ հարկ ըլլայ՝ գործադուլներ սարքելու:  
Ոչ մէկ իշխանութիւն պէտք չէ միջամտէ եւ բռնա-  
դատէ գործաւորութիւնը հակառակ իր կամքին աշ-  
խատելու եւ կամ այս ու այն պատրուակով ցրուե-  
լու անոր կազմած միութիւնը:

Բոլոր այս պահանջները, որ կը մտնեն ընկեր-  
վարական նուագագոյն ծրագրին մէջ, ո՛չ միայն  
աշխատաւորութեան համար խիստ կենսական են,  
այլեւ անոնց իրագործումը չի վնասեր կապիտա-  
լիստներու ձեռնարկութեանց: Ու արդէն, շնորհիւ  
աշխատաւորութեան կազմակերպուած ու գիտա-  
կից պայքարներուն, այդ պահանջներէն շատերը,  
առաւել կամ նուազ չափով իրականացած են ներ-  
կայիս, զանազան պետութեանց մէջ:

Որո՞նք են ընկերվարութեան նուագագոյն  
ծրագրին քաղաքական պահանջները.—

Ընկերվարական իտէալներու յաղթանակին  
համար՝ աշխատաւորական կազմակերպութիւնները  
չեն բաւականացած կապիտալիզմի դէմ միայն տըն-  
տեսական հողի վրայ պայքարելով, այլ իրենց ջան-  
քերը՝ լարած են նաեւ քաղաքական ուղղութիւնով,

վստահօրէն համոզուած թէ՛ քաղաքական մարդի մէջ տարուած յաղթանակները մեծապէս կը նպաստեն տնտեսական յաղթանակին : Աւելին եւս :

Տնտեսական հողի վրայ ընկերվարական գործունէութեան համար՝ անխուսափելիօրէն անհրաժեշտ են քաղաքական որոշ պայմաններ, քաղաքական ու քաղաքացիական տարրական ազատութիւններ, որոնց ներքեւ միայն աշխատաւորութիւնը պիտի կարենայ քիչ մը շունչ առնել եւ հնարաւորութիւն ունենայ կազմակերպուելու եւ պայքարելու :

Արդարեւ կարելի՞ էր միթէ ընկերվարական գործունէութիւն մը ակնկալել Համիտին բռնութեան ներքեւ արնաքամ եղած հայ զիւղացիէն : Ի՞նչ պիտի պատասխանէր հայ աշխատաւորութիւնը այդ շրջանին, եթէ որեւէ մէկը միամտութիւնը ունենար անոնց քարոզելու «ութժամեայ բանւորական օր», եւլն. եւլն. :

— Ա՛յ մարդ, պիտի ըսէր ապահովարար, դո՛ւն նախ զիս ապահովէ թուրքին եւ քիւրտին գնդակին դէմ, ես ոչ թէ ութ, այլ տասներութ ժամ ալ կ'աշխատիմ օրը :

Արդ՝ որեւէ երկրի մէջ քաղաքական ազատութիւնները՝ նախնական պայմանն են ընկերվարական գործունէութեան : Այդ իսկ պատճառով բոլոր երկիրներու ընկերվարականները քաղաքական հետեւեալ պահանջները կը ներկայացնեն իրենց նըւազագոյն ծրագրին մէջ .

Ա. — Ազգերու ազատութիւն : Բռնութեան լուծին տակ տառապող ազգերու աշխատաւոր դասակարգերը, ո՛չ սիրտ եւ ո՛չ ալ միջոց կ'ունենան ըզ-

բաղուելու իրենց տնտեսական դասակարգային խընդիրներով, անոնք ատելութեան թոյնով լեցուած կ'ըլլան հանդէպ տիրող ազգին, հետեւաբար եւ անոր աշխատաւոր դասակարգին: Այդ կարգի ստրուկ ազգերու իշխող դասակարգերը՝ շատ դիւրութեամբ կը յաջողին ազգել աշխատաւոր դասերու հայրենասիրական զգացումին վրայ, եւ զայն օգտագործել միշտ ալ «եղբայր եւ հաւատարիմ հայրենակից» յորջորջել տալով ինքզինքնին:

Արդարեւ, երբ տիրող ազգը կուգայ զրկելու իրեն ենթարկուած ժողովուրդ մը, ան խտիր չի դներ թէ ինչ դասակարգի կը պատկանի վերջինս: Այսպէս, հայ դիւղերուն վրայ յարձակող թուրքը երբէք չէր հարցներ թէ իր սուլիններուն կամ զնդակներուն տակ զոհուող անձերը հայ դրամատէ՞ր թէ ընչազուրկ դասուն կը պատկանէին, բաւական էր որ անոնք հայ էին, «կեալուր» էին. պէտք էր ուրեմն վերջ տալ անոնց կեանքին:

Արդ՝ որքան ատեն որ ազգ մը, այսպէս ստրուկութեան ենթակայ է, անոր մէջ դասակարգերը չեն կրնար շերտաւորիլ պէտք եղածին պէս, հոն աշխատաւորը երբէք միջոց չունենար խորհելու իր դասակարգային շահերուն վրայ, հոն հնարաւոր չըլլար դասակարգային պայքարը:

Այդ իսկ պատճառով, ինչպէս բացատրուած է նախորդ էջերուն մէջ, ընկերվարականները ո՛չ միայն հակառակ կամ անտարբեր չեն ազգային ազատութեան խնդրի մասին, այլ ամենաջերմ պաշտպաններն են անոր. որովհետեւ ան մեծապէս կը

դիւրացնէ ընկերվարական զուտ դասակարգային պայքարը :

Բ. — Պետական ռամկավարական ձեւ :

Գ. — Ազատութիւն՝ խօսքի, մամուլի, ժողովներու, միութիւններու : Անձեռնմխելիութիւն բնակարանի եւ անձի :

Դ. — Սղծի ազատութիւն :

Ե. — Կանանց հաւասարութիւն օրէնքի առջեւ :

Ե. — Ընդհանուր, ուղղակի, գաղտնի հաւասար եւ համեմատական ընտրական ձեւ :

Զ. — Եկամտային յառաջատուական տուրք, եւլն. եւլն. :

Քաղաքական ռամկավար այս կարգերն են, որոնց ներքեւ աշխատաւորութիւնը պիտի կարենայ ազատ ասպարէզ տալ իր դասակարգային պայքարին :

Մէկ կողմէ զուտ տնտեսական հողի վրայ հնարաւորութիւն կ'ունենայ աշխատաւորական միութիւններ կազմակերպելու եւ աստիճանաբար իր իրաւունքները նուաճելու, իսկ միւս կողմէ, շնորհիւ քաղաքական լաւագոյն պայմաններու, ան կը յաջողի տարուէ տարի աւելի մեծ թիւով ներկայացուցիչներ զրկել իր խորհրդարանը : Այդ զրկուած երեսփոխանները արթուն կը հսկեն աշխատաւոր դասերու պաշտպանութեան, կը ջանան նորանոր օրէնքներով ապահովել եւ բարելաւել անոնց զրութիւնը :

Արդարեւ, չէ՞ որ երկրին համար օրէնք զծողները այդ երեսփոխաններն են, չէ՞ որ զանոնք ընտրողն ալ ժողովուրդն է, ու չէ՞ որ ժողովուրդին

մեծագոյն մասը կը կազմէ աշխատաւորութիւնը :  
Հետեւաբար , այն օրը , որ կարելի ըլլայ դասակար-  
գային դիտակցութեամբ տողորել աշխատաւոր  
մասսաները եւ զանոնք կազմակերպել , անոնք իրենց  
քուէները պիտի տան իրենց շահերը պաշտպանող  
ընկերվարական թեկնածուներուն , որոնք այդ ձե-  
ւով պիտի յաջողին մեծամասնութիւն կազմել խոր-  
հրդարանին մէջ եւ քուէարկել իրենց ուզած օ-  
րէնքները :

Այս ուղղութեամբ թափուած ջանքերը տուած  
են արդէն նպաստաւոր արդիւնքներ , եւ այս պահու  
եւրոպական զանազան խորհրդարաններու մէջ ըն-  
կերվարականները կը կազմեն պատկառելի թիւ մը :

Արդ՝ տնտեսական եւ քաղաքական հողի վրայ  
կազմակերպուած աշխատաւորութիւնն է որ պիտի  
յաջողի աստիճանական նուաճումներով տիրանալ իր  
ամբողջական իրաւունքներուն :

Ո՛չ մէկ ընկերվարական կուսակցութիւն յա-  
ւակնութիւնը ունի մէկ օրէն միւսը իրականացնելու  
ընկերվարական խտէալները : Անոնք կը ջանան նախ  
տիրանալ իրենց նուազագոյն պահանջներուն , որմէ  
յետոյ կ'որոշուին նոր նուազագոյն պահանջներ եւս ,  
մինչեւ որ սպառի առաւելագոյն ծրագիրը ինքնին :

Այս է ուղին , որով ընթացեր է ու պիտի ընթա-  
նայ ընկերվարութիւնը :

## 2. Յ. Դ. ԻՆՉՈՒ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԵՂԱԻ

Մեր նախորդ յօդուածներով մենք համառօտա-  
կի տեղեկացանք ընկերվարական վարդապետու-  
թեան էութեան: Մենք այժմ գիտենք թէ ընկերվա-  
րութիւնը ո՛չ «կողոպուտի վարդապետութիւն» մըն  
է եւ ո՛չ «անիրականալի ցնորք»: Թէ ան անխուսա-  
փելի ծնունդն է կապիտալիստական ներկայ կար-  
գերուն՝ որոնց պիտի փոխարինէ ինք, շնորհիւ  
տնտեսական կեանքի մէջ կատարուելիք աստիճա-  
նական յառաջդիմութեան:

Բայց, շատ լաւ, կը հարցնեն մեր բարեմիտ  
քննադատները, ընկերվարութիւնը ուզէ լաւ վար-  
դապետութիւն մը ըլլայ, ուզէ վատ, մեղի ի՞նչ, ան  
ի՞նչ կապ ունի հայ ժողովուրդին հետ: Ենթադրենք  
թէ իրաւէն շատ ճշմարիտ վարդապետութիւն մըն  
է, բայց, ի՞նչ ընենք, միթէ մեզ հայերո՞ւս է մնա-  
ցեր աշխարհիս մէջ ամենէն լաւ ու ճշմարիտ սկըզ-  
բունքները որդեգրելուն գործը, մինչ յառաջադէմ  
Եւրոպան ու Ամերիկան իսկ կը խրտչին անկէ: Ի՞նչ  
խելացնոր մտածումով մըն էր որ 2. Յ. Դաշնակ-

ցութիւնը «բռնի, հայ ժողովուրդին վզին փաթթեց»  
ընկերավարութեան նման հայ կեանքին ու միջավայ-  
րին անհարազատ վարդապետութիւն մը:

Որպէսզի կարենանք գոհացուցիչ կերպով պա-  
տասխանել այն հարցին թէ Դաշնակցութիւնը ինչո՞ւ  
ընդունած է ընկերավարութիւնը, պէտք է նախ քըն-  
նենք թէ Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին ո՞ր  
դասակարգերուն պաշտպանն է, թէ ի՞նչ անսակ  
մարդիկ կրնան դաշնակցական ըլլալ եւ թէ այդ  
մարդոց համար կարելի՞ էր ընդունիլ ընկերավարու-  
թենէ զատ տարբեր վարդապետութիւն մը:

Ի՞նչ ԿԸ ՀԱՍԿՆԱՆՔ ԱՇԽԱՏԱԻՈՐ ԺՈՒ-

ՂՈՎՈՒՐԴ ԸՍԵԼՈՎ. —

Հ. Յ. Դաշնակցութիւնը ինքզինքը յայտարա-  
րած է հայ ժողովուրդին աշխատաւոր դասակար-  
գերուն կուսակցութիւնը: Որո՞նք են աշխատաւոր  
դասակարգերը:

Ա. Բանուորութիւնը. — Հայ ժողովուրդին ար-  
տասահմանեան, մասնաւորաբար Ամերիկայի, եւ-  
րոպական զանազան երկիրներու, չափով մը Պուլ-  
կարիոյ, նաեւ Ռուսիոյ գաղութներուն մեծամաս-  
նութիւնը՝ կազմուած է ճարտարարուեստական այլ  
եւ այլ ձեռնարկներու մէջ աշխատող ընչազուրկ  
գործաւորներէ:

Բ. Գիւղացիութիւնը. — Հայաստանի ու առ-  
հասարակ թուրքիոյ հայաբնակ նահանգներուն բը-  
նակչութեան ութսունէն մինչեւ իննըսուն առ հա-  
րիւրը կ'ըրազուին երկրագործութեամբ: Անոնք կամ  
բոլորովին սեփականազուրկ են եւ կ'աշխատին հա-

րուստ կալուածատէրերու հողին վրայ եւ կամ շատ չնչին տարածութեամբ հողեր ունին, որոնց վրայ իրենց ու իրենց ընտանիքներուն թափած ջանքերով հազիւ կրնան ապրուստնին ճարել:

Գ. Արհեստաւորներ. — Հայ ժողովուրդէն որոշ տոկոս մը, թէ՛ մայր հայրենիքին եւ թէ՛ արտասահմանի մէջ, իրենց օրապահիկը կը ճարեն զանազան արհեստներով. դերձակութիւն, կօշկակարութիւն, կահագործութիւն, եւն. եւն.: Ասոնց միակ սեփականութիւնն է՝ իրենց փոքրիկ տէգկեահը եւ մէկ քանի գործիքները, որոնցմով կ'աշխատին, բայց հազիւ թէ կ'ապրին:

Դ. Մանր առեւտրականներ. — Նպարավաճառ, կերպասավաճառ, ծխավաճառ, եւն. եւն., այս կարգի առեւտուրով զբաղող հայերուն ամբողջ հարըստութիւնը իրենց ունեցած սղտիկ խանութն է, ուր կ'աշխատին իրենք եւ ուրիշ կը շահին ոչ աւելին քան միջակ վարձատրութիւն ստացող բանուոր մը:

Ե. Մտաւորականութիւնը. — Այս դասակարգին մէջ կը հաշուուին՝ բժիշկներ, փաստաբաններ, սուսուցիչներ, խմբագիրներ, զբաղէտներ, լրագրողներ, հասարակական գործիչներ եւ այլն: Մտաւորականութիւնը ինքնին նկատուած է բոլոր դասակարգերէն դուրս ապադասակարգային դասակարգ մը: Արդարեւ անոնց հանգամանքը կը ճշդուի միայն՝ նկատի ունենալով թէ ո՛ր դասակարգին ի սպաս դրած են իրենց մտաւոր կարողութիւնները: Այսպէս, կապիտալիստ եւ շահագործող դասակարգերու հողերանութեամբ սնած եւ իրենց միտքն ու ուղեղը անոնց շահերու սաշապանութեան յատկա-



ցընող մտաւորականները՝ պուրժուա դասակարգէն  
կը հաշուուին. իսկ ընդհակառակը, իրենց բովան-  
դակ կեանքը եւ գործունէութիւնը աշխատաւոր դա-  
սակարգերու սրաշտպանութեան յատկացուցած  
մտաւորականներն ալ՝ աշխատաւոր դասէն կը հա-  
մարուին :

Արդ՝ վերոյիշեալ հինգ գլխաւոր հատուածնե-  
րը կը կոչուին աշխատաւորութիւն, որոնցմով եւ  
որոնց շահերու սրաշտպանութեան համար կազմը-  
ւած է Հ. Յ. Դաշնակցութիւնը :

Ի՞նչ է այդ աշխատաւորութիւն կոչուած դա-  
սակարգին յատկանշական հանգամանքը, որով ան  
կը զատորոշուի միւս դասակարգէն, գլխաւորա-  
բար շահագործող կապիտալիստ դասակարգէն :

Աշխատաւորութիւնը շնորհիւ իր տնտեսական  
դրութեան, որով կա՛մ բոլորովին սեփականազուրկ  
է եւ կ'ապրի իր Ֆիզիքական կամ մտաւոր ոյժը  
զրամատէրին վաճառելով եւ կա՛մ շատ չնչին սե-  
փականութիւն մը միայն ունի, ինչպէս օրինակ,  
սպտիկ խանութ մը կամ կտոր մը հող, զոյգ մը  
լծկան եւ կամ քանի մը գործիք, որոնցմով սակայն,  
հազիւ այնչափ մը կը շահի որքան սարգ գործաւոր  
մը, — չի կրնար գոհ մնալ իր վիճակէն, որովհե-  
տեւ հասարակաց համար ստեղծուած հարստու-  
թիւններէն եւ ինչքերէն իրեն շատ չնչին մաս մը  
միայն բաժին կ'իյնայ, այնքան որ անօթի չմեռնի  
եւ կարենայ նորէն ծառայել ի հաշիւ ուրիշներու  
գրպաններուն : Աշխատաւորութիւնը, հետեւաբար,  
դժգոհ է հասարակաց հարստութեան բաշխումի  
ներկայ դրութենէն՝ որով մեծապէս զրկուած կը

մնայ ինքը, հազիւ չոր հաց մը միայն կ'ստանայ, անկարող է գոհացում տալ իր մտաւոր, հոգեկան, գեղարուեստական ու նաեւ ֆիզիքական կարիքներուն: Մէկ խօսքով, աշխատաւորութիւնը ոչ միայն բնաւ չունի ներկայ օրէնքները պահպանելէն, ոչ միայն դժգոհ է անոնցմէ, այլ անմիջականօրէն շահագրգռուած է անոնց փոփոխումով՝ ի խնդիր նոր ու լաւագոյն կարգերու վերահաստատումին:

Աշխատաւոր դասակարգին տնտեսական գրութեան այս առանձնայատուկ հանգամանքին հետ՝ կայ նաեւ ուրիշ շահեկան պարագայ մը, որուն վերլուծումով մենք պիտի կարենանք պատասխանել մեզ առաջադրուած ծանօթ հարցին՝ Դաշնակցութիւնը ինչո՞ւ ընդունեց ընկերավարական ծրագիրը եւ աշխարհայեացքը:

### Կուսակցութիւնները

### Եւ իրենց ծրագիրները

— Ի՞նչպէս կ'ըլլայ դասակարգային հոգի վրայ կազմակերպուած կուսակցութեան մը ծրագիրը:

Որեւէ նման կուսակցութեան մը ծրագիրը կը բովանդակէ ամբողջականութիւնը այն խտէալներուն՝ որ կը բղխին այդ կուսակցութիւնը բազկացրնող տարրերուն նիւթական թէ բարոյական շահերէն:

— Ի՞նչ է կուսակցութիւնը:

Կուսակցութիւնը հաւաքականութիւնն է այն անհատներուն որոնք առաջադրած են իրագործումը մէկ կամ մէկէ աւելի խտէալներու, որուն համար եւ ընդգրկած են նոյն այդ խտէալներէն բղխող

միատեսակ քաղաքականութեան մը իրագործումը :

— Քանի՞ տեսակ կուսակցութիւնը կըլլայ :

Կուսակցութիւնները կը կազմուին .

1.— Քաղաքական հողի վրայ . օրինակ՝ դէմօկրատ , հանրապետական , եւն . Եւրոպայի պետական կուսակցութիւններէն շատերը :

2.— Միայն տնտեսական հողի վրայ օրինակ՝ եւրոպական կարգ մը սէնտիքայիստ կազմակերպութիւնները :

3.— Թէ քաղաքական եւ թէ տնտեսական հողի վրայ . օրինակ՝ Եւրոպայի եւ Ամերիկայի գրեթէ բոլոր ընկերվարական կուսակցութիւնները :

Յիշեալ բոլոր տեսակի կուսակցութիւնները կ'ենթարկուին նաեւ ուրիշ բաժանումի մը .

1.— Զուտ ազգային հողի վրայ կազմուած :

2.— Միջազգային հողի վրայ կազմուած :

Անոնք կ'ըլլան նաեւ

1.— Ժամանակաւոր՝ երբ առաջադրուած մէկ կամ մէկ քանի որոշ նպատակներու կարճ ժամանակի մէջ իրագործումէն յետոյ կը լուծուին եւ՝

2.— Տեւական՝ որոնց իտէալներն ու նպատակները այնքան ընդարձակ ու բազմազան են , որ անոնց ամբողջական իրականացման համար թերեւս դարերու կը կարօտին :

Արդ Դաշնակցութիւնը վերոյիշեալ կուսակցութիւններէն ո՞ր տեսակին կը պատկանի :

Հ. Յ. Դաշնակցութիւնը կազմուած է թէ քաղաքական եւ թէ տնտեսական հողի վրայ : Կը կրէ զուտ ազգային բնոյթ եւ ունի հիմնական ու ընդարձակ իտէալներ որոնց իրականացման համար

երկար ժամանակամիջոցի կը կարօտի: Ի մի բան  
Հ. Յ. Գաշնակցութիւնը ազգային հողի վրայ կազ-  
մըւած ընկերվարական կուսակցութիւն մըն է:

Նորէն նոյն «չարտրաստիկ» ընկերվարութիւ-  
նը... Արդեօք առանց այդ դաշտախարին կարելի չէ՞ր  
կուսակցութիւն կազմել:

Պահ մը մէկդի դնենք ուրեմն Գաշնակցութիւ-  
նը, թերեւս կարենանք լուծել հանելուկ դարձած  
այս հարցը: Չէ՞ որ Գաշնակցութիւնը ամէն բանի  
մէջ օյինալագութիւն կ'ընէ? ամէն խնդիր կը ձախտ-  
դեցնէ, կ'ըսեն անոր հակառակորդները. ուստի  
պահ մը մոռնանք անոր գոյութիւնը:

Արդ՝ հրաւիրենք խումբ մը մտաւորական կա-  
րող մարդիկ, չէզոք, կուսակցական, ի՛նչ կ'ուզէ  
ըլլան. միայն դաշնակցական չըլլան, եւ անոնց ա-  
ռաջարկենք թէ՛ ունինք հայ աշխատաւոր զանգ-  
ուածներ, անկազմակերպ ու ջրուած եւ կ'ուզենք  
որ դուք անոնց համար կուսակցութիւն մը կազմէք  
ու հիմնական ծրագիր մը պատրաստէք:

Հրաւիրեալները ժողովի կը նստին ու բնակա-  
նարար յաջող ու տեւական ծրագիր մը պատրաս-  
տելու համար նախ նկատի պիտի ունենան թէ ծրա-  
գիրը ի՛նչ է եւ ի՛նչ օրէնքներով կը կազմուի: Մենք  
տեսանք թէ՛ դասակարգային հողի վրայ կազմուած  
կուսակցութիւն մը պէտք է իբր նախապայման ի-  
րեն մէջ բովանդակէ այդ դասակարգին մարդոց  
տնտեսական, քաղաքական, մտաւոր եւ քարոյա-  
կան շահերէն բղխող եւ անոնց համապատասխան ի-  
տէպններ:

Այս իրողութենէն իսկ կը հետեւի երկրորդ

սլաշման մը, սա թէ՛ այդ կարգի հիմնական ծրագիր մը բնականաբար մէկ օրէն միւսը ու անմիջականօրէն կարելի չէ իրականացնել, այլ աստիճանաբար, հետեւաբար որ եւ է վախ չունինք ծրագրին մէջ զետեղելէ աշխատաւոր դասակարգին համապատասխան խտէալներ, թէկուզ անոնք շատ ու շատ հեռաւոր ապագային միայն իրագործուին:

Այժմ մեր հրաւիրեալները մի առ մի կը քննեն աշխատաւոր կոչուած դասակարգին բաղկացուցիչ տարրերը՝ բանուոր, զիւղացի, արհեստաւոր, մանրր առեւտրական եւ մտաւորական: Կը վերլուծեն անոնց իւրաքանչիւրին շահերը եւ առանց դժուարութեան կուզան այն եզրակացութեան, որուն յանդած էինք մենք, թէ՛ անոնց բոլորն ալ կ'աշխատին եւ սակայն խեղճ կը մնան, նօթի կամ կիսաքաղց. հետեւաբար ամէնքն ալ մեծապէս ցանկացող են որ տիրող ներկայ կապիտալիստական կարգերը փոխուին, որպէսզի իրենց վիճակն ալ բարելաւուի: Այս պարագան այնքան բացայայտ է որ բնաւ վէճի առարկայ չըլլար:

Այժմ կրկին կը հարցնենք: Մեր հրաւիրեալները ի՞նչ տեսակ խտէալ, աշխարհայեաց, ի՞նչ տեսակ վարդապետութիւն, ծրագիր կրնան որդեգրել որ համապատասխան ըլլայ աշխատաւոր դասակարգի տնտեսական ու այլ բազմապիսի շահերուն:

Կրնա՞ն պուրժուական խտէալներ որդեգրել ու ատով ըսել աշխատաւորութեան թէ՛ դուն միշտ պէտք է տառապիս եւ ուրիշը վայելէ եւ կամ Ռամկավար, Հանրապետական, Ազատական եւն. անուններով կոչուած կուսակցութեանց սկզբունքները

ընդունելի : Մենք գիտենք որ պուրժուաները ուղղա-  
 կի կը պաշտպանեն ու կը փառարանեն կապիտա-  
 լիստական ներկայ անարդար կարգերուն տիրապե-  
 տութիւնը, իսկ միւս կուսակցութիւնները միամը-  
 տութիւնը ունին հաւատալու թէ՛ իրենց «եղբայ-  
 րական խրատներով» պիտի վերջ տան դասակարգե-  
 րու հակամարտութեան եւ ինչպէս օտար  
 պատուելիները Թուրքիոյ մէջ աւաղակութեան  
 վարժուած մարդոց ձեռքին վրայ աղօթելով՝ «դար-  
 ձի կը քերէին» անոնց տէրերը, նոյն ձեւով պիտի  
 կարդան ընչաքաղց դրամատէրերու ձեռքին վրայ,  
 որպէսզի աշխատաւորին քրտինքը չհահագործեն ու  
 չկողոպտեն . . . :

Ո՞րն է այն վարդապետութիւնը ուրեմն որ  
 ճշմարտապէս կը պաշտպանէ աշխատաւոր ժողո-  
 վուրդին դասակարգային շահերը եւ կը պայքարի  
 կապիտալիզմին դէմ, որ կ'ուզէ վերջ տալ ներկայ  
 աղիտալի անմարդկային կարգերուն եւ անոնց փո-  
 խարէն հաստատել աշխատանքի ու վայելքի հաւա-  
 սարութեան իրաւակարգը, խնդիր չէ թէ որքան ա-  
 տենէն, — եթէ ոչ՝

— Ընկերավարութիւնը : Այս մասին տարակար-  
 ծութիւն չկայ այլեւս :

Ուրեմն մեր հրաւիրած այդ անձերը որ դաշ-  
 նակցական ալ չէին, այլ միայն պաշտօն ունէին  
 աշխատաւոր ժողովուրդին համապատասխան վար-  
 դապետութիւն մը գտնելու եւ այդ հիման վրայ  
 ծրագիր մը պատրաստելու, իրենք ալ երկար բա-  
 րակ ուսումնասիրութենէ ետք կուզան այն եղբա-  
 կացութեան որ՝ աշխատաւոր զանգուածներու շա-

հերուն պատշաճող վարդապետութիւնը միայն ընկերավարութիւնն է : Եւ հետեւաբար էթէ զայն որդեգրեն , ամենեւին բռնի փաթթած չեն ըլլար հայ աշխատաւորութեան վզին , որովհետեւ իրական աչքերով կը տեսնան որ ասկէ զատ ուրիշ ուղղութիւն մը չկայ եւ որ ջուրէն պապակող մարդուն կարելի չէ քար կամ հող տալ , եւ խարել ու անոր ծարաւը մարել :

Ա. յս իրողութենէն կը հետեւի թէ՛

Ա. Ծրագիր եւ աշխարհայեացք ոչ թէ կը ստեղծուին կամ կը պարտադրուին ըստ կամս , այլ կը պատշաճեցուին ամէն մէկ դասակարգի տնտեսական եւ այլն հիմնական շահերուն :

Բ. Ծրագիր եւ աշխարհայեացք անպայման կարելի չէ մէկ օրէն միւսը իրականացնել , այլ ան կը ծառայէ իրր լաւագոյն ուղղեցոյց շիտակ ճամբաներէ առաջնորդելու համար իրեն հետեւորդները :

Գ. Աշխատաւոր դասակարգերը իրենց տնտեսական դրութեան բերումովն իսկ դժգոհ են կապիտալիստական ներկայ կարգերէն եւ կողմնակից անոր խորտակումին :

Դ. Կապիտալիստական կարգերը փոխելով փոխարէն հաւասարութեան կարգեր հաստատելու կողմնակից միակ վարդապետութիւնը ընկերավարութիւնն է :

Ե. Հետեւաբար հայ աշխատաւորութեան համար իրրեւ հեռաւոր եւ վախճանական խոչալ ընկերավարութենէ զատ որեւէ վարդապետութիւն կարելի չէր որդեգրել :

2. Ահա թէ ինչո՛ւ Հ. Յ. Դաշնակցութիւնը որ  
հայ աշխատաւոր ժողովուրդին կուսակցութիւնն է,  
իբր ծրագրով ընդունած է ընկերավարութիւնը:

*Իսկ թէ ընկերավարութիւնը ընդունելով՝ Դաշ-  
նակցութիւնը վնասե՞ց հայութեան դատին եւ ա-  
նոր կենսական շահերուն՝ ինչպէս կը ճշնին հաւա-  
տացնել աջակողմեան քննադատները, այդ կը տես-  
նենք շուտով:*



## ԱՆՇԱՏ ՊՈՒՐԺՈՒԱՆԵՐԸ

### ԿՐՆԱՊՆ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԸԼԼԱԼ

Ի՞նչպէս կ'ըլլայ, կը հարցուի, որ ընկերվարական է կ'ըսենք Հ. Յ. Գաշնակցութիւնը, մինչ ամէն մարդ գիտէ թէ ան իր շարքերուն մէջ կը հաշուէ կարգ մը անհատ պուրժուաներ եւս :

Ամենէն առաջ պէտք է գիտնալ թէ դասակարգերը ո՛չ մարդոց եւ ոչ ալ անոնց ցանկութիւնով կը փոխուին : Գասակարգերու ծագման, դարդացման եւ կամ անհետացման հիմքը՝ տնտեսութիւնն է : Անհատները մէկ կամ միւս դասակարգին կը պատկանին ոչ թէ համաձայն իրենց նախընտրութեան, այլ համաձայն իրենց տնտեսական վիճակին երկաթէ հարկադրութեան : Որեւէ դասակարգի պատկանիլը՝ կապ չունի նաեւ անհատներուն սնուցած բարի կամ չար ցանկութիւններուն, ազնիւ կամ յոռի նկարագրին հետ :

Այսպէս, օրինակ, երբ այսօր աշխարհիս միլիոնաւոր կազմակերպուած աշխատաւորները իրենց խոհալը ըրած են ընկերվարութիւնը եւ կը պահան-

Ջեն որ գործադրուի արդարութիւնն ու հաւասարութիւնը՝ — այդ անոր համար չէ որ անոնք իրենց նկարագրով եւ իրենց բնաւորութեամբ ազնիւ եւ բարի մարդիկ են. ո՛չ — նման ենթագորութիւն մը երախայական պիտի ըլլար:

Աւելին կայ. եթէ այսօրուան արդարութիւն եւ հաւասարութիւն պահանջող գործաւորին ձեռքէն գայ, եթէ ան հնարաւորութիւն ունենայ՝ թերեւս ալ ամենաանխիղճ պուրժուա մը դառնայ եւ իր երէկուան աշխատակիցները կեղեքէ:

Արդարեւ մենք կը տեսնենք երբ որ եւ է ատեն պատեհութիւն կը տրուի անհատ գործաւորի մը իր ընկերակիցներուն վրայ իշխելու, ան սոսկալի բռնակալ մը կը դառնայ: Օրինակ՝ գործարաններու մէջ աշխատող պօսերուն մեծագոյն մասը: Անոնք խեղճն որ պաշտօն կ'ստանան, վայրկենաբար կ'այլափոխուին, օր մը առաջուան հեղահամբոյր, ընկերական, ազրարասէր գործաւորը չեն մնար այլեւս, ու կը դառնան բիրտ ու կոպիտ եւ դաժան դէմք մը կ'զգենուն:

Կը հետեւի ուրեմն թէ՛ մարդոց եւ դասակարգերու տնտեսական վիճակն է որ զիրենք կը դարձնէ արդարութիւն ու հաւասարութիւն սիրող՝ կամ անհաւասարասէր եւ կեղեքող, թէ՛ մարդիկ չեն որ ընտրած են ու կ'ընտրեն իրենց պատկանած դաս կարգերը, որոնք արդիւնքն են միայն եւ միմիայն իրենց տնտեսական վիճակին: Եթէ հնարաւոր ըլլար բոլոր մարդիկ պիտի ուզէին մէկ մէկ կապիտալիստներ դառնալ եւ կեանքը վայելել փառաւոր կերպով: Բայց իրենց կամքէն կախուած չէ այդ: Այս

իբողութիւնը ոչնչով չի փոխուիր՝ երբ հարիւր է. արարաւոր աշխատաւորներու մէջէն մէկ քանի տասնակ անձեր դուրս գան, որոնց բախտը ժպտի, եւ իրենց անհատական նախաձեռնութեամբ կարեւան պարզ գործաւորի վիճակէն բարձրանալ միլիոնատիրութեան աստիճանին: Նման հագուադէպ: երեւոյնները բացառութիւն ալ կը մնան ու չե՛ն փոխեր լուսիհանուր օրէնքը:

Արդ, հարց կը ծագի, եթէ մարդոց տնտեսական վիճակն է որ զիրենք կը դասաւորէ մէկ կամ միւս դասակարգին մէջ, հասցա ի՞նչպէս կ'ըլլայ որ կարգ մը պուրժուաներ այսօր ընկերվարական են դարձած եւ մինչեւ իսկ կարեւոր պաշտօններ ալ վստահուած է իրենց՝ ընկերվարականներուն կողմէ:

Արդարեւ, զիտենք որ Ֆրանսայի աւանաւոր հոեաորներէն եւ ընկերվարական պարագլուխներէն ժօռէսը՝ որ ընդհանուր պատերազմի նախօրեակին զոհ գնաց կապիտալիստներու եւ անոնց կողմէ ներքողուած Ֆրանսական զօրապաշտութեան եւ նուաճողական քաղաքականութեան դէմ մղած իր բուն պայքարին՝ յանուն ընկերվարութեան, ժօռէսը ինքը պուրժուա մըն էր:

Մեծ հարստութեան տէր պուրժուա մըն է նաեւ այսօրուան Պելճիզայի ընկերվարականներուն անուանի պարագլուխ Վանտէրվէլտը, որ նախադահն է նաեւ Միջազգային Բ. Ընկերվարական Պիւրօին: Ու կարելի է դեռ տասնեակներով շարել նման օրինակներ:

Այդ պուրժուաներուն նմաններէն, կամ աւելի

ճիշդը մանրանկարներէն կան նաեւ Հ. Յ. Դաշնակ-  
ցութեան ինչպէս եւ բոլոր ընկերվարական կուսակ-  
ցութիւններու մէջ: Բայց ի՞նչպէս շարքերէն ներս  
ընդունուած են անոնք:

Այս իրողութիւնը դիւրաւ կը հասկցուի եթէ  
մենք գիտնանք զանազանել անհատը՝ դասակար-  
գէն, մասնաւորը՝ ընդհանուրէն, բացառութիւնը՝  
օրէնքէն: Ինչպէս որ միլիոնաւոր մարդոցմէ մէկը  
կրնայ գանձ մը գտնել եւ սակայն այդ չի նշանակեր  
թէ բոլոր իր նմաններն ալ կրնան նոյն ձեւով հա-  
րըստանալ, նոյնպէս եւ հազուադիւրս բացառու-  
թիւն կը կազմեն այն անհատները, որոնք լքելով ի-  
րենց դասակարգային եւ անհատական շահերը՝  
կ'ենթարկուին սոսկ բանականութեան եւ իրենց  
խղճին ձայնին եւ ջատագով կը դառնան այն տեսակ  
սկզբունքներու՝ որոնք թէպէտեւ բացայայտօրէն  
հակադիր են իրենց դասակարգին ըմբռնումներուն՝  
բայց համաձայն են արդարութեան եւ վաղուան ի-  
րականութեան:

Անհատական այս ըմբռնողութիւնն է պատճա-  
ռը, որ մենք ամէն տեղ ալ կը հանդիպինք անհատ  
պուրժուաներու, որ կը պայքարին բուն իսկ իրենց  
դասակարգին կեղեքումներուն եւ բռնապետութեան  
դէմ, որովհետեւ համոզուած եմ թէ մարդկութեան  
խղճմտանքին ու ապագայ բարգաւաճման դէմ կ'ըն-  
թանայ կապիտալիստական ուժիւմը, ուր մարդոցմէ  
մեծագոյն մասը անասունէն աւելի ստոր աշխա-  
տանքի է լծուած, իսկ չնչին փոքրամասնութիւնը  
մատր մատին չի դներ եւ սակայն չնորհիւ մասնա-  
ւոր սեփականատիրութեան սխթէմին՝ կեանքը կը

Հայաստանի Գրական Գործեր 102

վայելէ շուայլ ու շուայտ : Եւ որովհետեւ համոզուած են թէ տնտեսութեան ներկայ զարգացումը, հակառակ ամէն խոչընդոտներու՝ մեզ կ'առաջնորդէ դէպի ընկերավարական բէթիմը՝ ուր մարդը կը դադրի մարդուն համար դայլ ըլլալէ, եւ ուր ամէնքը հաւասար պիտի աշխատին ու հաւասար պիտի վայելեն :

Ընկերավարական այս ըմբռնողութեան տէր պուրժուա անհատ մը ի՞նչ պայմաններով կրնայ անդամակցիլ ընկերավարական կուսակցութեան մը :

Ընկերավարական ծրագիրը ընդունող որեւէ անձ բնականաբար պիտի ենթարկուի այդ ծրագրին պահանջներուն, նաեւ կուսակցութեան վարած ընդհանուր քաղաքականութեան եւ որեւէ ատեն անոր կողմէ կապիտալիստներուն դէմ ներկայացուած պլատֆորմներուն :

Մենք գիտենք սակայն որ ոչ մէկ ընկերավարական կուսակցութիւն՝ ոուս պօլշեւիկներուն նման՝ միամտութիւն չէ ունեցած իր ծրագրին հեռաւոր եւ ամբողջական իտէալները այսօր իսկ պահանջելու, գիտենք թէ անկարելիութիւնը ստիպած է որ ընկերավարականները երկու մասի բաժնեն իրենց ծրագրերը, նուազագոյն կամ մօտաւոր եւ առաւելագոյն կամ հեռաւոր : Եւ վերջապէս գիտենք թէ բոլոր ընկերավարականները կը ջանան աստիճանաբար հասնիլ իրենց նպատակներուն, այդ իսկ պատճառով այս պահուս անոնք կապիտալիստներէն կը պահանջեն միայն իրագործումը իրենց նուազագոյն պահանջներուն, ինչպէս օրը ութ ժամ աշխատանք, աշխատավարձի յաւելում, գործաւորի պաշտպա-

նութիւնը՝ ծերութեան եւ արկածներու դէմ, կանանց աշխատանքի ժամերուն կրճատումը, երախաներուն արգիլումը գործարաններէն ներս աշխատելէ, եւայլն, եւայլն:

Բնականարար նուազագոյն այս պահանջները կանգ չեն առներ, վաղը երբ անոնք իրագործուին՝ ընկերվարականները նոր պահանջներ եւս պիտի ներկայացնեն, անոնց ալ պիտի յաջորդեն ուրիշ նորեր ալ, մինչեւ ամբողջական պահանջներուն իրականացումը:

Արդ, պուրժուա մը, որ համոզումով ընդունած է ընկերվարական իտէալը, հաւատացեր է թէ ան պիտի դառնայ վաղուան իրականութիւնը, որ այսօր յօժար կամքով կ'ենթարկուի բոլոր այն նուազագոյն պահանջներուն, որ ընկերվարականներուն կողմէ կը ներկայացուի իրեն՝ առ ի գործադրութիւն եւ որ ոչ միայն այսօրուան, այլ վաղուան պահանջներուն ալ ենթարկուելու տրամադիր է, այդ տեսակ պուրժուա մը անուշտ որ կրնայ ընդունուիլ որեւէ ընկերվարական կուսակցութեան մէջ:

Դիտել կը տրուի թէ՛ սա կամ նա դաշնակցականը պուրժուա մըն է. կրնայ ըլլալ: Բայց երբ Հայաստանի Դաշնակցական կառավարութիւնը հողերու պետականացումը հռչակեց, ամենէն առաջ անոնց կալուածներն էր որ գրաւուեցան: Եթէ քոյր-պիտիները ունենային գործարան մը, հոն գործաւորները միայն 8 ժամ պիտի աշխատեցնէին այսօր, իսկ եթէ վաղուան համար պահանջուէր 6 ժամ, այդ եւս պիտի գործադրէին առանց այլ եւ այլի:

Թերեւս խորհողներ ըլլան թէ այդ ի՞նչ տեսակ ընկերավարական է որ մէկ անգամէն իր ունեցած հարստութիւնը չի բաժնէր գործաւորներուն վրայ, եւ թէպէտեւ քիչ չափեով՝ բայց կը շարունակէ շահագործել զանոնք:

Ատկէ աւելի թիւր ըմբռնողութիւն ընկերավարութեան ու ընդհանրապէս տնտեսական օրէնքներու զարգացման մասին՝ կարելի չէ երեւակայել: Անոնք են այդ կարծիքը յայտնողները, որոնց համար ընկերավարութիւնը ուրիշ բան չի նշանակեր, բայց թէ՛ հարստութեան բաժանումը:

Ընկերավարութիւնը իբր կողոպուտի վարդապետութիւն ներկայացնելով է որ այս պահուս կարգ մը անձեր պօլշէւիզմ կը քարոզեն ամերիկահայ գործաւորութեան մէջ, ազաւաղելով այդ վարդապետութեան զաղասիրային մաքրութիւնը եւ միանգամայն մթազնելով հայ աշխատաւորութեան դասակարգային առողջ զիտակցութիւնը:

Ընկերավարութիւնը կը նկրտի ոչ թէ կործանել այս կամ այն պուրժուան եւ կամ իսլել անոր սեփականութիւնը, այլ կ'ուզէ փոխել կապիտալիստական սխաբէմը իր հիմէն, որպէսզի այլեւս մէկը չկարենայ միւսը շահագործել:

Իսկ մի՞թէ աշխարհիս վրայէն շահագործումը կը դադրի, եթէ մէկ քանի կապիտալիստներ բռնի հրաժարեցուն իրենց անհատական սեփականութենէն: Մի՞թէ դասակարգերը կը դադրին գոյութիւն ունենալէ եթէ ընկերավարութիւնը ընդունող անհատ պուրժուաները իրենց գործաւորութեան բաժնեն իրենց հարստութիւնը: Անշուշտ ո՛չ:

Արդ՝ պէտք է հասկնալ թէ՛ ընկերվարութիւնը  
անհատին դէմ չէ այլ սխաթեմին, որը չի փոխուիր  
ոչնչով, եթէ անհատը վերնայ մէջտեղէն:

Ուրեմն եզրակացնելով կը պատասխանենք  
տրուած հարցին՝

Երբ պուրժուա ծը կը հրաժարի իր դասակար-  
գային շահերու պաշտպանութենէն, կ'ընդունի ըն-  
կերվարական խտէալը եւ կ'ենթարկուի ընկերվարա-  
կան ծրագրին առաջարկած եւ առաջարկելիք նուա-  
շագոյն պահանջներուն, այդ պուրժուան կրնայ  
անդամակցիլ որեւէ ընկերվարական կուսակցու-  
թեան՝ ընդ որս եւ Հ. Յ. Դաշնակցութեան:



## 2. 3. 7. ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ

### ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Անգամ մը, որ մեզի սարգ եղաւ թէ աշխատաւորութիւն կոչուած դասակարգին շահերը հիմնովին հակառակ են զինքը շահագործող կապիտալիստ դասակարգի շահերուն, եւ հետեւաբար երբ ընկերվարութիւնը կ'որդեգրենք իբր աշխատաւոր դասին համար հեռաւոր, այլ հասանելի խոչալ՝ ամենեւին զայն բռնի փաթթած չենք ըլլար անոր վզին. անգամ մը որ ընդունեցինք թէ ինչպէս ամէն ցաւ իր մասնաւոր դեղ ու դարմանն ունի, այնպէս ալ ընկերվարութիւնը դարմանն է աշխատաւորութեան ցաւերուն, — մեզ կը մնայ միայն ապացուցանել երկու բան.

Ա. — Թէ այդ դեղերու գործածութեան եւ դարմանումի միջոցին արդեօք նկատի առնուած են հիւանդին (հայ աշխատաւորութեան) առողջապահական պայմանները եւ թէ արդեօք այդ դեղերու սխալ կամ անժամանակ գործածութեան երեսէն մեր հի-

ւանդը (աշխատաւորութիւնը) աւելի եւս չէ՞ վընասուած, ինչպէս կը պնդեն Դաշնակցութեան աջակողմեան քննադատները:

Բ. — Թէ հիւանդին կատարեալ կերպով բուժումին (հայ աշխատաւորութեան վերջնական ու իրական փրկութեան) համար՝ պէտք չէ՞ որ բոլոր դեղերը միանգամէն (ընկերավարութեան վերջնական խտէալները եւ բոլոր սկզբունքները) ցմբուր քամել տրուէին հայ աշխատաւորութեան, ինչպէս կը պնդեն Դաշնակցութեան ձախակողմեան քննադատները, որոնք կը պահանջեն քոմիւնիզմը իրականացընել Հայաստանի մէջ:

Ուրեմն՝ եթէ մենք կարենանք ապացուցանել թէ՛ ընկերավարական փրօփականոր հայ աշխատաւորութեան համար, այն չափով որ կատարուած է Դաշնակցութեան կողմէ՛ երբեք անհամապատասխան չէ եղած, ո՛չ հայկական միջավայրին եւ ո՛չ ալ վնասակար հայ ազգային շահերուն, միւս կողմէ՛ եթէ կարենանք ապացուցանել թէ՛ ընկերավարականօրէն Դաշնակցութեան կատարած փրօփականտէն աւելիին ամենեւին հող չկար մեր իրականութեան մէջ, ու եթէ փորձուէինք աւելին ընել, այսինքն զուտ քոմիւնիստական փրօփականտ մղել, ատով վնասած կ'ըլլայինք թէ՛ հայ ազգային եւ թէ՛ առանձնապէս հայ աշխատաւորութեան շահերուն, ատով մենք պատասխանած կ'ըլլանք հիմնական քննադատութեան ե՛ւ աջակողմին, ե՛ւ ձախակողմին:

Բայց հարցին լուսարանութեան համար ակնարկ մը նետենք օտար ընկերավարական կուսակցու-

Թիւններու վրայ, հասկնալու համար թէ արդեօք  
անոնք ի՞նչպէս գործած են ու կը շարունակեն գոր-  
ծել ընկերավարական ուղղութեամբ:

Ընկերավարութիւնը ամենուրեք յար-  
մարցուած է տեղական պայման-  
ներուն. —

Ընկերավարութեան մասին խօսած միջոցին մենք  
ըսինք թէ՛ չկայ ոեւէ ընկերավարական կուսակցու-  
թիւն, որ միամտութիւնն ունենայ հաւատալու թէ՛  
այդ վարդապետութեան բոլոր սկզբունքները հնա-  
րաւոր է անմիջապէս, ներկայիս իրականացնել իր  
պայմաններուն մէջ:

Մենք տեսանք թէ՛ այդ իսկ պատճառով բոլոր  
ընկերավարական կուսակցութիւնները, թէ՛ Եւրո-  
պայի եւ թէ՛ Ամերիկայի մէջ իրենց ծրագիրը բաժ-  
նած են երկու մասերու. հեռաւոր եւ մօտաւոր:  
Հեռաւոր կամ առաւելագոյն ծրագրին մէջ արձա-  
նագրուած կը մնան ընկերավարական ամբողջական  
խտէալները, որոնք սակայն, կը մնան խտէալ եւ  
լուսատու փարոսներ դէպի ուր յառած կ'ըլլան աշ-  
խատաւորութեան նայուածքները, որպէսզի չմո-  
լորուին իրենց ընթանալիք երկարատեւ ու փշոտ  
ճամբուն մէջ: Իսկ մօտաւոր ծրագրով կը սլահան-  
ջեն այնքան մը բաներ՝ որոնց իրականացումը հնա-  
րաւոր է իրենց պայմաններուն մէջ:

Արդ, երբ մեզմէ շատ աւելի դարդացած եր-  
կիրներու մէջ, ընկերավարականները երկար բարակ  
կը խորհրդակցին եւ կ'ընեն միայն այն տեսակ պա-  
հանջներ, որոնց յաջողութեան համար հող կայ ի-

րենց միջավայրին մէջ, բնականաբար Հ. Յ. Դաշ-  
նակցութիւնը չէր որ անհաշիւ եւ անխորհուրդ կեր-  
պով ու անժամանակ պահանջներով մեր միջավայ-  
րին անհամապատասխան գործունէութիւն մը պիտի  
ունենար :

Ամէն բանէ առաջ լաւ պէտք է համոզուինք թէ՛  
բոլոր երկիրներու ընկերվարականներն ալ մեծապէս  
ենթարկուած են իրենց տեղական եւ ազգային ա-  
ռանձնայատուկ պայմաններուն եւ քէ ընկերվա-  
րութեան մասին ընելիք իրենց պահանջները կը  
պատշանեցնեն ցեղին ու տեղին եւ յաջողելու հնա-  
րաւորութեան :

Այսպէս օրինակ՝ Ա. — արար աշխարհը գիտէ թէ  
ընկերվարութիւնը դէմ էր պատերազմին, բայց եւ  
այնպէս ոչ ոք զարմացաւ՝ տեսնելով գերման կամ  
Ֆրանսացի ընկերվարականները, որոնք բոլոր դա-  
սակարգերէն առաջ ճակատը վազեցին կռուելու  
ընդդէմ իրենց դրացի ու եղբայր աշխատաւորնե-  
րուն :

Բ. — Ամէն ոք գիտէր թէ ընկերվարականները  
խորհրդարանական ընտրութիւններուն կը մասնակ-  
ցին որպէսզի առաւելապէս իրենց կուսակցութեան  
փրօփականտը ընեն, ու երբեք ոչ մէկ ընկերվարա-  
կան երեսփոխան կրնար անդամակցիլ այս կամ այն  
դահլիճին եւ ստանձնել կապիտալիստական կարգե-  
րու տեւականացման պատասխանատուութիւնը,  
բայց ոչ ոք զարմացաւ երբ տեսաւ շատ ու շատ ըն-  
կերվարական կուսակցութեանց պարագլուխները,  
ինչպէս պելճիքացի Վանտէրվէլտ, Ֆրանսացի Ժ.  
Կէտ, եւ շատ մը ուրիշներ, որոնք 4-5 տարի շա-

րունակ, պատերազմին տեւողութեանը, կողք կողքի բազմեցան կապիտալիստ պետութեանց ներկայացուցիչներուն հետ, միեւնոյն դահլիճներուն մէջ:

Գ.— Ընդունուած դրութիւն մըն էր, որ ընկերվարական երեսփոխանները խորհրդարաններու մէջ չէին քուէարկեր զինուորական պիւտնէն եւ քուէարկութեան պահուն բողոքելով դուրս կուգային խորհրդարանի շէնքէն, որպէսզի իրենց հաւանութիւնը տուած չըլլան միլիթարիզմի պահպանման եւ զօրացման: Բայց պատերազմի միջոցին ամենասովորական երեւոյթն էր տեսնել զրեթէ բոլոր պատերազմիկ տէրութեանց ընկերվարականներու քուէները ի նպաստ զինուորական պիւտնէներու:

Դ.— Ու դեռ պատերազմէն առաջ, գերման ընկերվարութեան մէջ Պէրնշթայնի ղեկավարութեամբ սկսուած քրվիզիօնիստ շարժումը, վերագնահատութեան ենթարկելով մինչ այդ ընկերվարական գործունէութեան ուղին, կը պահանջէր որ ան դուրս գալով իր այլամերժ ու մեկուսացեալ դրութենէն, մեծ թափով մասնակցի հասարակական ամէն ձեռնարկներու. որովհետեւ ընկերվարութեան յաջողութեան համար հարկ է պայքարի սկսիլ բազմաթիւ ճակատներու վրայ եւ թէ այլապէս դուր կ'ըլլայ սպասել Մարքսի ակնկալած համաշխարհային փրօլետարացման:

Այս ու նման հազարաւոր փաստեր ցոյց կուտան թէ աշխարհիս ամէն երկիրներու մէջ ալ ընկերվարութիւնը յարմարեցուած է տեղական պայմաններուն, թէ այդ յարմարեցումը անխուսափելի անհրաժեշտութիւն մըն է, եւ թէ ոեւէ ձեւով հակա-

սութիւն չի կազմեր ընկերութեան հետաւոր ի-  
տէալներուն հետ :

Մենք տեսանք նոյնպէս թէ՛ Հ. Յ. Դաշնակ-  
ցութիւնը կազմող տարրերը իրենց անտեսական դը-  
րութիւնով ընկերութեան տարրեր էին : Բայց ան-  
շուշտ միայն այսքանը չէր բաւեր ընկերութեան  
բեղուն գործունէութիւն մը ունենալու համար հայ  
միջավայրին մէջ :

Բայց եթէ գերման, ֆրանսացի, ռուս եւայլն  
ընկերութեանները արտօնուած են ընկերութեան  
կան գործունէութիւնը յարմարցնելու իրենց ազդէն  
եւ իրենց միջավայրին առանձնայատուկ սլայման-  
ներուն, ինչո՞ւ նոյնը ընելու արտօնուած չըլլայ  
նաեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը :

Ահա՛ ինչ որ ըրած է Դաշնակցութիւնը :

Տրուած ըլլալով հայկական միջավայրին ա-  
ռանձնայատուկ ու դժնդակ սլայմանները, համիտ-  
եան երեսնամեայ բռնակալութիւնը, անոր գործած  
աւերը, եւ քաղաքական ազատութիւններու իսպառ-  
բացակայութիւնը, Հ. Յ. Դաշնակցութիւնը թըր-  
քահայաստանի մէջ իր գոյութեան օրէն մինչեւ հա-  
միտեան բռնակալութեան տապալումը, բացառա-  
բար նուիրուեցաւ հայ ցեղին ֆիզիքական գոյու-  
թեան սլայտականութեան, ջանաց ժողովուրդը պատ-  
րաստել յեղափոխականօրէն, ամէն բանէ առաջ իր  
ազգային ազատագրական սլայքարը մղելու համար,  
որովհետեւ հայ ժողովուրդին տրուելիք քաղաքա-  
կան ազատութիւնը ինքնին լաւագոյն հնարաւորու-  
թիւն մը պիտի ստեղծէր հայ աշխատաւոր մասսա-

ներունն՝ նուիրուելու այս անգամ իրենց գուտ դասակարգային պայքարին :

Հ. Յ. Դաշնակցութիւնը պահպանելով հանդերձ ընկերվարական խտէալները եւ ջերմապէս հատալով անոնց ճշմարտութեան՝ ոչ մէկ ատեն սակայն, ստուերներու ետեւէն չէ վազած եւ ամենեւին միամտութիւն չէ ունեցած թէ կարելի է զանոնք ամբողջութեամբ բռնի կամ անժամանակ կերպով պատուաստել մեր միջավայրին մէջ : Հ. Յ. Դաշնակցութիւնը ընկերվարականօրէն գործած է հայ ժողովուրդին մէջ այն չափով, որ չափով հայ իրականութիւնը հող կը ներկայացնէր այդ վարդապետութեան իրականացման :

Բայց խօսինք աւելի վաստացի :

## Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

### ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԼԵԱԼԻ ՄԷՋ

1905-ի ուսական «մեծ» յեղափոխութիւնը, որով ուսն ժողովուրդը յաջողեցաւ ցարէն կորզել «հոկտեմբերեան սահմանադրութիւնը», իր արձագանգը ունեցաւ նաեւ հայ ժողովրդին մօտ: Ռուս յեղափոխական մտաւորականութիւնը այսօրուան նման մեծամեծ սկզբունքներու իրականացման ետեւէ՝ հաւասար ուժգնութեամբ կը պատգամէր թէ՛ ընկերավարական պահանջները տնտեսական հողի վրայ եւ թէ՛ քաղաքական ու քաղաքացիական ազատութիւնները:

Յեղափոխութեան ու յեղափոխական այլազան մտքերու այդ խառնարանին մէջ Հ. Յ. Դաշնակցութեան ձախ թեւը, բաղկացած որոշ թիւ լաւագոյն մտաւորականներէ՝ չափազանց նեղ զգաց ինքզինքը հայկական միջավայրին դործունէութիւնով: Անոնք կարծես ամօթ համարեցին այլեւս զբաղուիլ իրենց զուտ ազգային, առանձնապէս Տաճկահայաստանի



աղատադրման խնդրով . չէ՞ որ անդին , ոուս յե-  
ղափոխական սերունդը շատ աւելի բարձր ու հա-  
մամարդկային խաչալներ կը հետապնդէր . . . :

Այդ մտաւորականներէն մաս մը դուրս եկան  
Դաշնակցութենէն եւ սկսան պայքարիլ իրենց մայր  
կուսակցութեան դէմ , զայն կոչելով «ազգայնա-  
մով» , «հակայեղափոխական» , «յետադէմ» , «դե-  
ղին» , եւն . եւն . ածականներ՝ որոնց գործաձու-  
թեան այսօրուան սիրահարները մոռցած կը թուին  
երէկուան իրենց նմաններուն ձախողութիւնը :

— «Դաշնակցութիւնը պէտք է զրազուի միայն  
Ռուսահայաստանի հայ աշխատաւորութեան պայ-  
քարով եւ իրաւունք չունի քնաւ Կովկասի հայ գոր-  
ծաւորութիւնը մոլորեցնել եւ անոր զրամները  
ծախսել ի խնդիր Տաճկահայաստանի մէջ նասի-  
նալիստական (ազգայնական) նպատակներու հե-  
տապնդման :

Ահա անջատման պատճառարանութիւնը :

Եւ սակայն , այդ միջոցին Հ . Յ . Դաշնակցու-  
թիւնը Կովկասի , մասնաւորաբար Պաքուի մէջ , ոգի  
ի բռին կը մասնակցէր աշխատաւորական շարժու-  
մին , կը կազմակերպէր հայ գործաւորութիւնը եւ  
ախոյեանն էր դարձեր անոր տնտեսական պահանջ-  
ներուն :

Միւս կողմէ , Տաճկահայաստանի սահմաննե-  
րուն վրայ , Հ . Յ . Դաշնակցութիւնը կը կազմակեր-  
պէր հայդուկային խմբեր , զէնք եւ ռազմամթերք  
կը հասցնէր թրքահայ ժողովուրդին ինքնապաշտ-  
պանութիւնը զլուխ հանելու համար :

Այսպէս , մինչ դաշնակցական փրօփականտիս-

տը Պաքուի մէջ ընկերվարական նուազագոյն ծրագրին պահանջները՝ Տ-ժամեայ բանւորական օր, աշխատավարձի յաւելում, եւն. կը պահանջէր, ասդին՝ Տաճկահայաստանի սահմաններէն ներս՝ նոյն կուսակցութեան մէկ ուրիշ գործիչը՝ ծպտուած եւ զինեալ, գիշերները գաղտագողի, հայ գիւղացիներուն մէջ տունէ տուն կը շրջէր ու կը քարոզէր զէնք գնել, զինուիլ, պատրաստուիլ, որպէսզի կարելի ըլլայ գիմադրել թուրքին եւ քիւրտին յարձակումներուն եւ չկոտորուիլ ոչխարի նման:

Ծայրայեղ պայքարներու այդ օրերուն էր որ մեր կուսակցութեան յաւէտ յարգելի առաքեալը՝ Քրիստափոր Միքայէլեան, պատասխանելով ձախ դաշնակցականներուն քննադատութեանց, կ'ըսէր.

— Դուք կը պահանջէք որ Դաշնակցութիւնը գրադուի միայն «յաւելեալ արժէք»ի քէօրիով. մինչ մենք նախ ունինք մեր «յաւելեալ արեան» քէօրին:

Մեր անմոռանալի ընկերը իր այդ խորապէս իմաստալից խօսքովը ըսել կ'ուզէր թէ՛ այն պահուն, երբ թուրքը, քիւրտը յարձակելով հայ գիւղացիութեան գոյութեան կը սպառնան, երբ հարիւրներով երիտասարդներ կը գնդակահարուին, ու մինչ մեզմէ «յաւելեալ արիւն» է որ կը պահանջուի ամէն վայրկեան, մենք չենք կրնար գրադուիլ միմիայն գործաւորութեան տնտեսական վիճակին բարելաման, անոր «յաւելեալ արժէք»ին ապահովութեան խնդրով եւ խցել մեր ականջները մեր տաճկահայ եղբայրներուն ցաւին հանդէպ: Որովհետեւ եթէ մէկ տեղը քրտինքն է որ կը շահագործուի, միւս տեղը՝

արիւնը կը շահագործուի ու կը թափուի :

Կը տեսնենք ուրեմն, որ Կովկասի մէջ երբ քիչ ու շատ նպաստաւոր հող ստեղծուեցաւ ընկերութարական պայքարին, Հ. Յ. Դաշնակցութիւնը նուիրուեցաւ այդ գործին եւ ունեցաւ աւելի շատ կազմակերպուած աշխատաւորութիւն, քան որեւէ ուրիշ կուսակցութիւն մը. իսկ միւս կողմէ՝ Տաճկահայաստանի մէջ ամենանուազ չափով ընկերութարական գործունէութեան հող չըլլալուն — չէ՞ որ կեանքի տարրական ապահովութիւն իսկ չկար — Դաշնակցութիւնը բացառաբար նուիրուեցաւ ժողովուրդին ինքնապաշտպանութեան եւ հայութեան քաղաքական ազատութիւններու տիրացման :

Արդ՝ անցեալի իր այս գործունէութեան մէջ՝ Դաշնակցութիւնը ընկերութարական ըլլալով, ինչո՞վ մնասեց հայ ժողովուրդին զուտ ազգային շահերուն, կը հարցնենք աջակողմեան քննադատներուն : Եւ կամ միաժամանակ տաճկահայերու դատին ծառայելով ինչո՞ւ հակընկերութարական դարձաւ ան՝ կը հարցնենք ձախակողմեան քննադատներուն :

Լ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-  
ԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԷՆ ՅԵՏՈՅ

Հայաստանի հանրապետութեան կազմութենէն  
յետոյ, Լ. Յ. Դաշնակցութիւնը դառնալով պետա-  
կան ղեկավար կուսակցութիւն, իր բովանդակ ուչն  
ու միտքը յատկացուց երկրին սահմաններուն  
պաշտպանութեան եւ ներքին վերաշինութեան գոր-  
ծին :

Ա. — Դաւանակցութիւնը յայտարարեց հողերու  
պետականացում : Հայաստանի սահմաններէն ներս  
բոլոր մշակելի հողերը օրէնքով պիտի առնուէին ա-  
ղաներու, պէկերու եւ զանազան մեծ կալուածատէ-  
րերու ձեռքէն եւ պիտի յանձնուէին պետութեան :  
Հողը կը պատկանի անոր, ով որ հողին վրայ կ'աւ-  
խատի : Ա՛յս էր ղեկավար սկզբունքը :

Հողերու պետականացման այս քայլը՝ առնուած  
Դաշնակցութեան կողմէ, ոչ միայն փայլուն յաջո-  
ղութիւն մըն էր ընկերավարական սկզբունքին, այլ-

եւ ամենախմաստուն կարգադրութիւն մը՝ ազգային, պետական ու քաղաքական շահերու տեսակէտէն :

Արդարեւ, ո՞վ չգիտէր թէ Հայաստանի հանրապետութեան սահմաններուն եւ անոր կցելի թրքահայ նահանգներուն մէջ հողերուն մեծագոյն մասը մասնաւոր սեփականութիւնը կը կազմէր այս կամ այն կալուածատէրին :

Մեր գիւղացիութիւնը միայն վերջին երեսուն տարիներու ընթացքին, ամենէն աւելի զոհարերողը եղաւ ի խնդիր հայկական ազատագրութեան : Ան ոչ միայն տուաւ ինչ որ ունէր, այլեւ ամենէն աւելի իր արիւնն էր որ հոսեցաւ եւ վերջապէս իր արիւնովն էր որ կերտուեցաւ Հայաստանի անկախութիւնը :

Ստեղծուեցաւ Հայաստանի ազատութիւնը . բայց այդ ի՞նչ տեսակ ազատութիւն էր, որուն համար արիւն տուող դասակարգը, հայ գիւղացիութիւնը, նորէն պիտի շարունակէր մնալ նոյն ճորտի, լայալի գրութեան մէջ, այս կամ այն հայ աղային կամ մուսուլման պէկին, փաշային կամ տէրէպէյիին մօտ :

Արդ՝ թէ՛ մեր պետութիւնը ապահովելու համար մասնաւորաբար իսլամ կալուածատէրերու մենատիրութենէն, թէ՛ մեր հողավար գիւղացիութեան քայքայուած տնտեսութիւնը փրկելու եւ թէ՛ այդպիսով պետութեան համար կարեւոր հասոյթներ ապահովելու եւ երկրին արդիւնարեքութիւնը զարգացնելու համար, հրամայական պահանջ մըն էր հողերու պետականացումը : Այս պահանջը այն-

քան անառարկելի էր, որուն Հայաստանի ոչ-ընկեր-  
վարական կուսակցութիւններն իսկ հարկադրուե-  
ցան գլուխ ծռել եւ զայն արձանադրել իրենց ծրա-  
գիրներուն մէջ :

Բ. — Բանւորական օրինագիծ : . Հ . Յ . Գաշնակ-  
ցութիւնը այնքան միամիտ չէր հաւատարու համար  
թէ՛ պետութիւն մը կազմուելուն պէս արդէն իսկ  
բաւարար հող կը ստեղծուի ընկերվարական դոր-  
ծունէութեան, եւ սակայն, ան կը տեսնէր թէ սկը-  
սած էին ու պիտի սկսէին զանազան արդիւնաբերա-  
կան ձեռնարկներ, գլխաւորաբար հայ ժողովուր-  
դին անհրաժեշտ պիտոյքներու հայթայթման եւ  
Հայաստանի հում նիւթերուն շահագործման հա-  
մար, եթէ քաղաքական պայմանները երթալով ան-  
նպաստ չդառնային եւ եթէ միանգամ ընդմիջտ ա-  
պահովութիւնը հաստատուէր մեր սահմաններէն  
ներս :

Բնականաբար երկրին կառավարութեան սլար-  
տականութիւնն էր՝ զանազան օրէնքներով ճշդել  
իրաւունքներու եւ պարտականութեանց սահմաննե-  
րը դրամագլուխի տէրերուն եւ աշխատաւորներուն  
միջեւ : Ու գաշնակցական կառավարութիւնը քուէ-  
արկեց օրէնքներ՝ որոնցմով ոչ թէ ծայրայեղ, այլ  
ընկերվարական նուազագոյն ծրագրին ամենատար-  
րական պահանջները կ'ապահովուէին :

Այսպէս՝ Հայաստանի մէջ հիմնուելիք դործա-  
րաններուն մէջ դործաւորները պէտք էր աշխատ-  
ցրէին օրը 8 ժամ :

Գործաւորութիւնը իրաւունք կ'ունենար կազ-  
մակերպուելու եւ իր շահերը պաշտպանելու օրինա-

կան ձեւերով :

Գործաւորութեան ապահովութիւն կը տրուէր զանազան վտանգներու, արկածներու եւայլնի դէմ :

Կիները նուազ պէտք էր աշխատէին քան տղամարդիկ, տրուած ըլլալով անոնց Փիզիքական կազմը :

Մանուկները պէտք էր արգելուէին փապրիֆաներու մէջ աշխատելէ եւ պարտաւորիչ կերպով դպրոց յաճախելով՝ հայրենիքին ուսեալ զաւակներ պէտք էր դառնային, եւն., եւն. :

Դաշնակցութեան աջակողմեան քննադատները, որոնք հալար փրցուցին թէ Դաշնակցութիւնը իր ընկերավարական ծայրայեղ պահանջներովը հայ ազգային շահերը կործանեց, թո՛ղ լաւ գիտնան որ այդ «ծայրայեղ» կոչուած պահանջներէն մեծ մասը Հայաստանի իրենց ալ համախոհներուն ծրագրին մէջ արձանագրուած են : Կեղծ են անոնք թէ իրական՝ ատիկա իրենց գիտնալիք բանն է, բայց իրականութիւնը այն է, որ երկրին ժողովրդական եւ Ռամկավար կուսակցութիւններուն ծրագրին մէջ կան յիշուած վերոյիշեալ պահանջներուն գլխաւորները :

Այս կէտը կը շեշտենք մասնաւորաբար ցոյց տալու համար թէ՛ որքան անհիմն եւ շիլ նկատուածներու արդիւնք են աջակողմի քննադատներուն ըսածները, եւ թէ ինչպէս իրենց քննադատութիւնով, ուղղակի ինքզինքնին ամբաստանած կ'ըլլան իբր «հայութեան կործանիչ թշնամիները», քանի որ իրենց ալ ծրագրին մէջ հիւրընկալած են ընկերվա-

րական այն պահանջները, որոնց համար կը դատա-  
պարտեն Դաշնակցութիւնը :

Բայց աջակողմը դեռ ուրիշ քննադատութիւն-  
ներ ալ ունի :



## ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆՆ Է ՊԱՏՃԱՌԸ՝

### ԱՆՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ

Բայց ի՞նչ օգուտ տուաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին՝ իր ընկերվարական դործունէութիւնով, կը հարցնեն աջակողմեան քննադատները ու կը պատասխանեն այդ հարցումին, յիշելով բազմաթիւ «փաստ»եր որոնցմով հիմնովին հակառակ եզրակացութեան կը յանդին: Անոնք կ'ըսեն.

Դաշնակցութիւնը ընկերվարական դառնալով պառակտում սերմանեց հայ ժողովուրդին հատուածներուն միջեւ: Ու այնպէս մը կ'ուզեն հաւատացնել որ եթէ այդ դժբախտ վարդապետութիւնը որդեգրուած չըլլար Դաշնակցութեան կողմէն եւ մուտք չգործէր հայութեան մէջ, ա'լ բոլոր հայերը Քրիստոսի պատուիրածին նման եղբայրներ պիտի դառնային. ամէն մէկ հայ իր հայրենակցին սիրտը չկտորելու համար ո'չ միայն պիտի ուզէր կատարել անոր բոլոր պահանջները, այլ եթէ ապտակ

մ'իսկ ստանար իր աջ երեսին, ձախն ալ պիտի դարձրնէր նոյն տարօսին ենթարկելու :

Աջակողմեան «բարեխիղճ» քննադատները եթէ տակաւին հաւատացողներ գտնեն, ապահովարար չեն քաշուիր յայտարարելէ թէ՛ հայ ժողովուրդին մէջ «ցեղային» նկատուած երկպառակութեան ըզգացումը, հին հայոց նախարարական տուներուն պայքարներէն՝ մինչեւ Հայաստանի Հանրապետութեան համար ֆօալիսիօն դահլիճի մը մերժման պարագան, ամէնը կը սկսին ու կը ծնին Դաշնակցութեան ընկերվարական ըլլալուն ազիտալի պատճառէն???

Ի՞նչ, կը խորհիք թէ՛ «հին ատենն ալ ընկերվարութիւնը կամ Դաշնակցութիւնը գոյութիւն չունէին» ըսելով պիտի յաջողիք ջրե՞լ անոնց փաստը : Ամենեւի՛ն : Չէ՞ որ այսօրուան պառակտիչ Դաշնակցականները կը սերին երէկուան իրերամերժ նախարարական սերունդէն . չէ՞ որ այդ նախարարներն ու անոնց հետեւորդները նախահայրերն են այսօրուան Դաշնակցականներուն՝ եւ չէ՞ որ արալիզմ-ի, ժառանգականութեան օրէնքով յատկութիւնները կը փոխանցուին, կը տեւեն ու կը վերյայտնուին սերունդէ սերունդ . . . :

Անոնք որ Դաշնակցութեան ընկերվարական հանգամանքին կը վերագրեն վերջին տարիներու ընթացքին հայ ժողովուրդին մէջ տիրող անհամաձայնութիւնները, արդեօք պահ մը կ'անդրադառնա՞ն իրենց շուրջը կատարուածներուն, տեսնելու համար թէ՛ արդեօք ո՞ր աստիճանի սրտառուչ համերաշխութիւն մը կը տիրէ հայութեան ոչ-ընկեր-

վարական հատուածներուն եւ կուսակցութիւններուն միջեւ, որոնք զիրար կը բզկտեն, մինչեւ իսկ երբ համաձայներ են սկզբունքով ու կը մնայ միայն համաձայնութիւն մը՝ անունիւ շուրջ...:

Աջակողմեան այդ քննադատները կը բարեհաճի՞ն հեղ մը գոնէ ցնցել իրենց յիշողութեան ջիղերը եւ տեսնել թէ՛ իրենք ու իրենց կուսակցութիւնները հայ ժողովուրդին ո՞ր խմբակցութեան, քանի՞երրորդ ստորաբաժանումը կը կազմեն: Ու տակաւին կրնա՞ն առանց երեսնին կարմրելու խոստովանիլ թէ՛ ի՞նչ ամօթալի ու արիւնոտ կռիւներէ վերջ միայն երեւան եկած է իրենց կոտորակային կազմը:

Բայց իսկապէս չկա՞ն ու չեղա՞ն պարագաներ ուր Դաշնակցութիւնը իր ընկերվարական գաղափարներուն պատճառով՝ հարկադրուած ըլլար այլ լամերթ ուղղութեան մը հետեւելու՝ հայութեան տարրեր հատուածներուն հանդէպ:

Անշուշտ ոչ ոք կրնայ պահանջել որ որեւէ կուսակցութիւն չհետեւի իր դաւանած վարդապետութեան եւ իտէալին: Որովհետեւ այդ վարդապետութիւնն ու իտէալը կը բխին ուղղակի զիրենք դաւանողներուն տնտեսական, քաղաքական, մտաւոր ու հոգեկան շահերէն եւ որովհետեւ ամէն անհատ կ'ունենայ այն տեսակ մտածելակերպ ու դաւանանք որպիսին կը տրամադրէ իր պատկանած դասակարգին շահը: Ու ինչպէս որ չենք կրնար զատել մորթը միսէն, նոյնպէս չենք կրնար անջատել գաղափարները իրենց հետեւորդներուն դասակարգային շահերէն: Բացառութիւնները դուրս են կանոնէ:

Այս իսկ պատճառով մէկը չկրնար արգիլել որ աշխատաւոր դասակարգը չունենայ ընկերութարական խոհալը եւ չպայքարի կապիտալիզմի կեղեքումներուն դէմ :

## Ո՞Վ Է ԱԶԳԸ

Բայց շահեկան պարագան այն չէ՛ թէ Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին միւս հատուածներէն տարրեր խտնալ մը որդեգրած է: Կարելոր է միայն գիտնալ թէ՛ այդ «տարրեր խտնալները» ի՞նչ շափերով հակադիր ընթացան հայ ժողովուրդին «ազգային» շահերուն հետ:

Նախ ուզենք թէ չուզենք պիտի հասկնանք թէ ի՞նչ են իրականին մէջ «ազգային» կոչուած շահերը եւ թէ որո՞նց կը պատկանին անոնք: Այո՛, ճիշդ այս կէտն է արժանի լուսարանութեան եւ մենք պիտի գիտնանք թէ՛ ի՞նչպէս կ'ըլլայ որ կարգ մը հատուածներ իրենց մենաշնորհը դարձուցեր են «ազգային» շահերը եւ ամէն հրապարակի վրայ անուրդի կը հանեն զանոնք. ի՞նչ տեսակ մանաւանջ է այդ ազգային շահը որ առատօրէն կը տեղայ կարգ մը մարդոց գլուխներուն վրայ. — ապահովարար շատ քիչ բան միայն գանկերէն ներս մանկելու պայմանով — իսկ ուրիշ շատերուն տեսողութեան անգամ չ'ենթարկուիր:

Արդարեւ՝ համաձայն Գաշնակցութեան աջա-  
կողմեան քննադատներուն տրամարանութեան՝ հայ  
ժողովուրդը պէտք է երկու որոշ մասերու բաժնել.  
Ա. անոնք որ ազգ են, ունին ազգային շահեր եւ ի-  
րաւունք՝ զանոնք սաշտոյանելու, անոնց անունով  
խօսելու. Բ. անոնք որ դուրս են ազգուք-ենէն,  
զուրկ են ազգային շահերէ եւ իրաւունք չունին ան-  
ոնց անունով խօսելու: Իսկ թէ ինչպէ՞ս կարելի է  
զանազանել ասոնք իրարմէ, ոչի՞նչ. շատ հեշտ է:  
Այսպէս օրինակ՝

Կը կանչենք մեզ հանդիպող հինգ անձեր, կը  
ստուգենք անոնց հայ ըլլալը՝ համաձայն աւագանի  
մկրտութեան թուղթին եւ սկտական տոմարին, եւ  
կը սկսինք կարգաւ հարցաքննել — որովհետեւ չը  
մոռնանք ըսել թէ՛ միայն ծագումը չի բաւեր  
«ազգ»ին անդամ նկատուելու համար:

— Ի՞նչ է անունդ, մականունդ, զբաղումդ եւ  
կուսակցութիւնդ:

Ա. — Արամ Կիրակոսեան, րէննպէրուքիւն կ'ը-  
նեմ, գիւղացի եմ, Գաշնակցութեան կը սպասկա-  
նիմ:

Բ. — Մարկոս Արամեան, զործարանային բան-  
ւոր եմ, եւ Գաշնակցական:

Գ. — Լեւոն Մինասեան, արհեստաւոր եմ, կօշ-  
կակար եւ Գաշնակցական:

Դ. — Հմայեակ Սարնեան՝ նստաբաւաճառ եմ,  
Գաշնակցական:

Ե. — Զարեհ Արեւեան, խմբագիր եմ, Գաշնակ-  
ցական:

Այս հինգ հայերուն վերջին հարցում մըն ալ  
կուտանք :

— Ի՞նչ խոչալի հաւատացող էք :

Ընկերովարութեան, կը պատասխանեն հինգը  
միասին :

— Հասկցուեցաւ, կը պատասխանենք խոյն,  
հինգ ճամբորդներուն միասին. դուք ազգ չէք եւ ի-  
րաւունք չունիք խօսելու ազգային շահերու մասին :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ ընկերովարական էք եւ Դաշնակ-  
ցական :

Կը կանչենք ուրիշ խումբ մը հայեր, եւ կու-  
տանք միեւնոյն հարցումները : Ահա եւ անոնց պա-  
տասխանները .

Ա. — Համբարձում Աղան, կալուածատէր  
եմ, Ռամկավար կուսակցութեան կը պատկանիմ :

Բ. — Լեւոն Պէկեան, սեղանաւոր, Ռամկավար :

Գ. — Արամ Փողեան, առեւտրական՝ Ռամկա-  
վար :

Դ. — Մանուկ Համբերողեան, Փողեանի մաղա-  
գային ծառան եմ, քուէս կուտամ էֆէնտիխ կու-  
սակցութեան :

Ե. — Վաղարշ Վախունի, խմբագիր, Ռամկա-  
վար :

Վերջին հարցում մը՝ բոլորին .

— Ընկերովարակա՞ն էք :

— Ատելով կ'ատենք զայն :

— Դուք ազգին հարազատ գաւակներն էք եւ ի-  
րաւունք ունիք խօսելու ազգային շահերու մասին,  
կը պատասխանենք իրենց դոհունակ ժպիտով :

Ինչպէս կը տեսնուի այս զուարճալի մէթոտը  
ամենէն գործնականն է եւ կտրուկը՝ «ազգ»ը «ոչ-  
ազգ»էն զանազանելու համար. մէթոտ մը որ չա-  
փազանց հաճելի կը թուի աջակողմեան քննադատ-  
ներուն :

Երբ կ'ըսեն թէ՛ Դաշնակցութիւնը ընկերվա-  
րական դառնալով ազգը երկպառակութեան՝ մատ-  
նեց, թէ՛ հետեւաբար ան դուրս է ազգութենէ եւ  
իրաւունք չունի վտանգելու ազգային շահերը իր  
գործունէութիւնովը, չեն բացատրեր դժբախտա-  
բար թէ ի՞նչ մահացու մեղք է եղեր ընկերվարու-  
թիւնը, որուն համար ազգութենէն դուրս ն՛.տե-  
ցինք առաջին խումբի հայերը, որոնք գիւղացի էին,  
բանուոր, արհեստաւոր, մանր առեւտրական եւ  
մտաւորական: Եւ թող աջակողմեան քննադատնե-  
րը բարի ըլլան մեզ հասկցնելու թէ Դաշնակցու-  
թեան կործանած ու վտանգած «ազգային շահ»ե-  
րուն մէջ արդեօք մաս եւ քաթին չունի՞ն գիւղացին  
ու գործաւորը. իսկ եթէ ունին, այդ ի՞նչ տեսակ  
փանալարներ են եղեր ընկերվարականները որ ի-  
րենց ձեռքով իրենց տունը կը քանդեն ու իրենց  
չահերը կը խորտակեն . . . :

Քիչ մը տրամաբանութիւն, ի սէր ձեր «ազգ»ին :

Բայց մեր ճանչցած ազգը բոլորովին տարբեր  
կերպարանք ունի վերոյիշեալ խեղանդամ «ազգ»էն,  
ու մեր գիտցած «ազգային շահերը» բոլորովին  
տարբեր կը մեկնուին ծանօթ զուարճալի մեկնու-  
թենէն :

*Բազմապիսի  
հարցերի  
հարց-թիւ  
Բազմապիսի*



## Ո՞Վ ԻՐԱԻՈՒՆՔ ՈՒՆԻ ԽՕՍԵԼՈՒ ԱԶԳԻՆ ԱՆՈՒՆՈՎ

Հ. Յ. Դաշնակցութեան աշխատաւոր զանգուածները առանց՝ վարանուժի կը յայտարարեն թէ ընկերավարական են՝ որովհետեւ իրաւագուրկ են եւ ընչագուրկ եւ բնականարար չեն կրնար պաշտպանել եւ դովարանել կապիտալիստական իրաւակարգը որ իրենց ու ամբողջ աշխարհին թշուառութեան պատճառ է եղած :

Բայց միթէ մահացու մե՞ղք է եղեր տիրող կարգերուն դէմ արտայայտուած այս դժգոհութիւնը : Ո՞վ կրնայ պահանջել թուրքին կամ քիւրտին եւթաղանին տակ հեծկլտացող հայ գիւղացիէն , որ օրհնէնք կարգայ այն ձեռքին որ իր վզին կը մօտեցընէ այդ արիւնոտ դործիքը . . . : Հապա ո՞վ կը համարձակի պահանջել աշխատաւոր դասակարգէն՝ հայ կամ օտար , որ չբողոքէ զինքը տնտեսապէս ստրկացնող եւ իր քրտինքը շահագործող ցեցերուն դէմ :

Դաշնակցութեան աջակողմեան քննադատներուն սիրտը դող կ'իյնայ ամէն անգամ երբ կը լսեն

ընկերութեան անունը, որ կարմիր լաթի մը մը նման կը խրտչեցնէ զիրենք ու անոնք մոռցած՝ ողջմտութիւնն ալ, տրամարանութիւնն ալ, կը պոռան միաբերան.

— Դուք ազգը կը կործանէք ձեր ընկերութեանով:

Բայց՝ «Եթէ սոխ չէք կերած, ինչո՞ւ բերաննիդ կը կծուընայ» կ'ըսէ ժողովրդական առածը: Եթէ իրենք կեղեքող դասին չեն պատկանիր կամ անոր պաշտպանները չեն, ինչո՞ւ կը դայրանան երբ այդ դասին դէմ բողոք կը բարձրացուի: Յետոյ այդ ո՞ր ատենէն սկսեալ շահագործող դասերը միայն «ազգ» դարձան, եւ իրաւունք ստացան անոր անունով խօսելու, եւ ո՞ր ատենէն ու ինչո՞ւ համար աշխատաւոր դասակարգերը նկատուեցան «ազգազուրկ» ու մինչեւ իսկ «ազգազաւ»:

Գիւտ մը չեն ըներ անոնք որ կը յայտարարեն թէ հայ ազգին մէջ չկայ այն դասակարգային շերտաւորումը՝ որ յատուկ է Եւրոպայի կամ Ամերիկայի: Եւ սակայն «ճանճն ալ իր ոյժերուն չափով կը բզղայ»

Տեսնենք այժմ թէ հայ ժողովուրդին ո՞ր դասերն են որ առաւելապէս կը մարմնաւորեն ազգութեան հանդամանքները եւ հաւատարմօրէն կը պաշտպանեն զանոնք. համեմատաբար հայ առանձնաչնորհեալ ու դրամատէ՞ր դասերը, որոնց անունով կը փաստարանեն աջակողմեան ջննադատները՝ թէ՞ հայ գիւղացին, դործաւորը, արհեստաւորը, մանր առեւտրականը եւ մտաւորականը:

Մեզի արդէն ծանօթ են ազգութեան ստորոգե-

լիները՝ լեզուն, կրօնը, արենակցական կապը, հայրենի աւանդութիւնները, վերջապէս բնակավայրը եւն. : Թուենք մի առ մի թէ ազգութեան այս կենսական յատկութիւնները ո՛ր դասակարգերուն քով եւ ի՞նչ չափ հարազատ պահպանուած են, հասկնալու համար թէ ո՞վ աւելի իրաւունք ունի խօսելու ազգի անունով :

Ամէն երկրի մէջ ալ առանձնաշնորհեալ ու բարձր դասերը իրենց ստացած կրթութեան շնորհիւ հեռացեր են իրենց ազգէն ու մինչեւ իսկ ամօթ նկատեր են այդ անունը իրենց համար, ինքզինքնին նկատելով մէկ մէկ ֆօսֆօլօլիտ, համաշխարհաքաղաքացիներ, ահա թէ ինչպէս՝

Ա.— Արտօնեալ, բարձր դասերը ամէն ազգի մէջ ալ պատիւ չեն սեպեր խօսիլ իրենց մայրենի լեզունով, եւ միշտ օտար կրթարաններու մէջ կը դաստիարակեն իրենց զաւակները :

Բ.— Այդ դասուն մէջ յաճախադէպ ու գրեթէ սովորական են օտարներու հետ ամուսնութիւններ, որոնց հետեւանքով իրենց սեփական ազգին հետ ունեցած արենակցական կապը կը խաթարուի :

Գ.— Գրեթէ բարձր դասուն պատկանող ու անոր համապատասխան կրթութեան տէր ոչ մէկ անձ հաւատարիմ ու հաւատացող է իր ազգային դաւանանքին :

Դ.— Բարձր դասու պատկանող հասարակութեանց մէջ շատ քիչ բան կրնաք գտնել իբր մնացորդ իրենց հարազատ ազգային աւանդութիւններուն, ոչ երգը, ոչ նիստուկացը, ոչ պատմութիւնները, եւ կամ այլ սովորութիւն :

Ե.— Բարձր դասերը, մանաւանդ հայերու մէջ, երբեք տրամադիր չեն եղած իրենց հայրենի հողին վրայ բնակելու, հոն աշխատելու, հոն պայքարելու, ճաշակելու հայրենիքի դառնութիւններն ու քաղցրութիւնները ու ընդհակառակն ամենէն աւելի անոնք են որ նախընտրած են արտասահմանի հանդստաւէտութիւնը :

Զ.— Հայրենիքը վտանգի մէջ եղած պահուն, ե՞րբ է եղած որ բարձր դասերը մօտենան իրենց արիւնը գոհաբերելու, ինչ կ'ըսեմ, անոնք մինչեւ իսկ իրենց դրամը խնայած են հայրենիքի փրկութեան համար . . . :

Ու տակաւին մեր աջակողմեան քննադատները համարձակութիւն կ'ունենան այդ ասպազայնացած դասը նկատելու իրր ճշմարիտ «ազգ» եւ անոր կը վերապահեն այդ մասին խօսելու իրաւունքը . . .

Իսկ ի՞նչպէս կը վերաբերուին աշխատաւոր դասակարգերը, գիւղացին, բանւորը եւն. իրենց ազգային ստորոգելիներուն հետ :

Աճէն ոք գիտէ, օտարներուն քով թէ մեր մէջ, գիւղացին ու բանւորը եւ նման դասերը իրենց մայրենի լեզուն հաստատօրէն պահպանած՝ օտար լեզուներ չեն գիտեր ու չեն խօսիր : Անոնք միմիայն իրենց ազգին կամ աւելի ճիշդը իրենց գիւղացիներուն հետ կը կնքեն իրենց ամուսնութիւնները, եւ ցեղին արիւնը հարադատօրէն կը ժառանգեն յաջորդարար : Անոնք չնորհիւ իրենց մտաւոր վիճակին ամենէն աւելի ջերմեռանդ հետեւորդներն են իրենց ազգային դաւանանքին : Անոնք կը սնանին ու կ'ապրին միայն իրենց հայրենի աւանդութիւններով ,

ազգային երգերով ու հէքեաթներով եւ կը պահ-  
պանեն ամէն կարգի սովորութիւնները: Անոնք են  
որ կը մնան կապուած իրենց հայրենի հողին, ան-  
սասան ժայռի նման, հայրենիքի շոր հացն անգամ  
նախընտրելով օտարին կարկանդակէն: Եւ վերջա-  
պէս աշխատաւոր դասերն են որ ամէն անգամին ալ  
իրենց արիւնը կուտան երբ պէտք է հայրենիքը  
պաշտպանել թշնամիին դէմ եւ անոր պայքարնե-  
րովն է որ կը կերտուի ու կը պահպանուի ազգին ա-  
զատութիւնը:

Եւ սակայն այդ աշխատաւոր դասակարգը ո-  
րուն կը պատկանի Հ. Յ: Դաշնակցութիւնը իրա-  
ւունք չունի խօսելու «ազգին» անունով որովհետեւ  
ան ընկերավարական է եւ «ազգադաւ» կը յայտարա-  
րեն աջակողմեան «ազնիւ» հակառակորդները...

Ո՞վ է պայքար ստեղծողը մեր ազգին մէջ. —

Յատկանշական պարագան այն է տակաւին, որ  
հակառակ արտօնեալ դասերուն այդ ապազգայնա-  
ցած հանգամանքին, անոնց դէմ՝ ճշմարտապէս ազ-  
գային մնացած աշխատաւորութեան կողմէ, դոնէ  
հայ իրականութեան մէջ՝ ներկայիս պայքար չէ  
ստեղծուած:

Ուշագրաւ է որ «ազգ»-ին կողմէ եւ «համերաշ-  
խութեան» անունով ճղակտոր եղող այդ բարձր  
դասերը եւ անոնց մտայնութեան տէր ու անոնց  
պաշտպան աջակողմեան քննադատները՝ իրենք են  
որ կը ստեղծեն ու կը հրահրեն պայքարը հայու-  
թեան մէջ, շնորհիւ այն մտայնութեան որ «ազգու-  
թիւնը» իրենց մեկաշնորհը դարձնել կ'ուզեն, հա-

կառակ անոր որ թերեւս ոչինչ ունին պահպանած  
զուտ ազգային հանգամանքէն :

Արդարեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը որ իր բաղ-  
կացուցիչ աշխատաւոր տարրերուն անունով շատ  
աւելի իրաւասու է խօսելու ազգին կողմէ, ան, կը  
յայտարարէ թէ՛ իմ իտէպնեքովս ընկերվարական  
սակայն անոնց իրականացման համար ես անժամա-  
նակ պայքարի չեմ մտած եւ չեմ մտնար : Որովհե-  
տեւ հայկական միջավայրը տարրեր է Եւրոպակա-  
նէն : Մենք ունինք աւելի կենսական, աւելի անմի-  
ջական աշխատանք մը կատարելու, ու ատիկա մեր  
ազգին քաղաքական անկախութեան ասպնջութու-  
թիւնն է :

Դաշնակցութիւնը կը յայտնէ անվախ թէ ինք  
ընկերվարական է, բայց ան այս պահուս իր բոլոր  
ոյժերով լծուած է հայրենիքի պաշտպանութեան  
գործին : Ան հրաւեր կ'ուզդէ «ազգ»ը իրենց մեկա-  
ւորի դարձնող տարրերուն քէ, վերջ տուէ՛ք ձեր  
ազգակործան դաւերուն, եկէ՛ք քով քովի կռուինք  
մեր ալ ձեր ալ քեզմախիսն դէմ, մինչեւ շինենք մեր  
ազգին բոյնը, ունենանք մեր սեփական ամէնուս  
պատկանող հողամաս մը, հոն ազատօրէն կարե-  
նանք խօսիլ մեր ալ ձեր ալ մայրենի լեզուով, հոն  
հաստատուի մեր սեփական պետութիւնը, հոն  
բացուին մեր կրթարանները, հոն այլեւս մէկը չը  
գտնուի որ մեզ հալածէ իբրեւ հայերու :

Այս ծանր ու երկարատեւ աշխատանքներուն  
միջոցին մենք պայքար չունինք իրարու դէմ, բոլոր  
հայերը եղբայր են. հայրենիքը վտանգի մէջ է, եւ  
բուն իսկ ժամանակն է ճշմարիտ համերաշխութեան

որուն անունով դուք կը խօսիք :

Այս գերագոյն այս նուիրական ու ճշմարտապէս ազգային պայքարի միջոցին խտիր չկայ ընկերավարականին եւ ոչ ընկերավարականին միջեւ, նիշդ այնպէս ինչպէս որ հինգ տարի շարունակ աշխարհիս բոլոր ընկերավարականները խտրութիւն չըրին երբ կողք կողքի գիրենք շահագործող դասերուն հետ կռուեցան խրամներու մէջ՝ երբ վտանգը ած էր հայրենիքը. որովհետեւ այդ հայրենիքը ինչպէս գործաւորին՝ նոյնպէս եւ գործարանատէրին էր : Գերման ու Ֆրանսացի ընկերավարականները որոնք իրարու դէմ ամենէն առաջ կռուի ճակատը վազած էին, վերջ տուած էին դասակարգային պայքարին ու պահանջներուն իրենց կապիտալիստ դասերուն դէմ :

Անշուշտ ոչ ոք կրնար պահանջել որ անոնք նաեւ հրաժարէին ընդամիշտ իրենց ընկերավարական խտէալներէն. այդ կարգի պահանջ մը ծիծաղելի ու անբնական պիտի ըլլար, քանի որ այդ գաղափարին որդեգրումը կախում ունէր ոչ թէ իրենց ցանկութենէն, այլ իրենց տնտեսական վիճակէն, ու տնտեսական վիճակին փոփոխութիւնն էր որ միայն պիտի կարենար վերջ տալ իրենց ալ խտէալներուն հետապնդութեան :

Նոյն եւ նման է պարագան, ընկերավարական Դաշնակցութեան համար : Ոչ ոք կրնայ պահանջել որ ան հրաժարի իր ընկերավարական խտէալներէն, որովհետեւ այդ խտէալները կը բխին զինքը բազկացնող աշխատաւորութեան տնտեսական դասակարգային շահերէն. անոնք կը մնան այնքան ատեն

որ աշխարհիս բոլոր ընչազուրկ դասերուն նման  
հայ աշխատաւորութիւնն ալ կ'ապրի ընչազուրկ :  
Եւ սակայն այդ վաղուան հարցն է, այսօր Դաշնակ-  
ցութիւնը Հայաստանի մէջ հայ ազգին քաղաքա-  
կան ազատութեան պայքարը ունի որպէս գերագոյն  
առաջադրութիւն, որուն իրականացման համար  
հայ բոլոր կազմակերպութիւնները կրնան համա-  
գործակցիլ, ցոյց տալու թէ որքան անկեղծօրէն  
ազգասէր են :

Արդ կը տեսնուի ուրեմն որ Հ. Յ. Դաշնակցու-  
թեան ընկերավարական խոչալները ոչ միայն մազա-  
չափ իսկ չեն վնասեր հայ ազգին շահերուն, ոչ մի-  
այն անհամերաշխութեան սրտճառ չեն տար, անոր  
հատուածներուն միջեւ, այլ ընդհակառակն, այդ  
խոչալներուն հաւատացողներն են որ համերաշ-  
խութեան կոչը կ'ուղղեն ազգին, որուն հարազատ  
զաւակներն են իրենք, ազգին շահերուն տրուած ա-  
մէն մէկ հարուած բուն իսկ իրենց սիրտն է որ կը  
խոցէ, որուն համար անոնք կը գոչեն միաբերան  
նախ քաղաքական ազատութիւն, ազգային անկա-  
խութիւն, յետոյ տնտեսական կռիւ, դասակարգա-  
յին պայքար :

Այժմ մեզի պարզ է թէ ո՞վ աւելի իրաւունք ու-  
նի խօսելու ազգին անունով՝ ընկերավարակա՞նը թէ  
հակընկերավարակա՞նը :

*Բարձր աչ կարգի, ան աչ  
խոս-թիւն, շատ քաղաքակրթ  
զայ սիր է ան ինչ որ ինչ որ*



## ԻՆՁՈ՞Ւ ԴՐԱՄԱՏԷՐԵՐԸ ԶԵԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ

Ի՞նչ կայ աւելի բնական քան այն ենթադրու-  
թիւնը թէ՛ դրամատէրերը չեն ախորժիւր ընկերվա-  
րականներէն ու չեն վստահիր անոնց : Ճիշդ այս  
պատճառով՝ կը տրամաբանեն աջակողմեան քննա-  
դատները, այնքան ատեն որ Դաշնակցութեան նը-  
ման ընկերվարական կուսակցութիւն մըն էր Հա-  
յաստանի կառավարութեան ղեկավարը, անշուշտ  
հայ թէ օտար որեւէ դրամատէր պիտի չուզէր իր  
դրամագլուխը շահագործման դնել հայ հողին վը-  
րայ : Չէ՞ որ ընկերվարականները դէմ են անհատա-  
կան սեփականութեան եւ համայնացնել կ'ուզեն ա-  
մէն բան, հետեւաբար դրամատէրերը վախնալով  
որ Դաշնակցութիւնը պիտի բռնադրաւէր եւ համայ-  
նացնէր իրենց դրամագլուխը, եւ անոր շահագործ-  
ման միջոցները, չուզեցին որեւէ ճարտարարուես-  
տական եւ արդիւնաբերական ձեռնարկ կատարել :  
Հետեւանքը այն եղաւ որ մեր երկիրը ետ մնաց

տնտեսապէս բարգաւաճելէ եւ մեր ժողովուրդը անդործ ու անպատասպար զոհ եղաւ սովին, համաճարակներուն եւ հազար տեսակ թշուառութեան: Ահա՛ արդիւնքը Գաշնակցութեան ընկերվարական դառնալուն, կը պատգամեն քննադատները:

Այս քննադատութիւնը՝ որ Հայաստանի հանրապետութեան հաստատման օրէն իսկ հրապարակ դրուեցաւ եւ որ այժմ ալ դեռ ի դօրու է, ծնունդ առած է ընկերվարական վարդապետութեան մասին Գաշնակցութեան քննադատներուն ունեցած նախնական հասկացողութենէն, եթէ անշուշտ չուզենք զայն վերագրել յետին նպատակներու:

Մեր նախորդ էջերով մենք ծանօթացանք թէ ի՞նչ խախուտ տրամաբանութեամբ կ'առաջնորդուին անոնք որ ընկերվարութիւնը կը ներկայացնեն իբր կողոպուտի միջոց: Այժմ մենք զխտենք նաեւ թէ աշխարհիս մէջ ոչ մէկ ընկերվարական կուսակցութիւն ձեռնարկած է անմիջականօրէն դրամադրուիսի բռնադրաման դործին, բացի ոռւս պօլչեւիկներէ, որոնց մասին առանձինն պիտի խօսինք:

Աւելին կայ, մենք զխտենք թէ ընկերվարականները ոչ միայն դէմ չեն կապիտալի զարգացման եւ ծաւալումին, այլ անոնք են ամենէն առաջ ու ամենէն աւելի շահագրգռուած, որ դրամադրուիսը, որքան հնար է շուտ եւ լայն չափերով դայ նուաճել աշխարհը իր համայնակուլ ընթացքով:

Ընկերվարութիւնը մեծ հրճուանք կը զգայ երբ կը տեսնէ որ կապիտալիստները կուզան իրենց դրամադրուիսը շահագործելու յետամնաց անկիւն-

ներու մէջ, երբ հոն կը լսուի դործարանային սու-  
լիչը, որ հազարաւոր դործաւորներ դէպի հնոց  
կը հրաւիրէ, երբ կը սուրայ շողեկաւքը, երբ դոր-  
ծարանային ծուխն ու մուրը կուգան ամպոտել  
մաքուր հորիզոնը:

Ինչո՞ւ սակայն այդ ցանկութիւնը: Անոր հա-  
մար որ՝ ընկերավարութեան յաջողութեան միակ մի-  
ջոցը, եւ աշխատաւորները տնտեսական կռիւի մղե-  
լու միակ պատեհութիւնը կապիտալիզմի զարգա-  
ցումն է: Չէ՞ որ ցորեն ցանելու համար հարկ է նախ  
հերկել հողը: Ընկերավարական խռատները հասա-  
րակութեան մէջ ցանելու համար ալ՝ հարկ է նախ  
ունենալ մշակուած հող, որ կը ստացուի միայն  
դրամադրութեամբ, եւ անոր շահագործումով:

Արդ, Հ. Յ. Գաշնակցութիւնը ընկերավարական  
իր խռատներով՝ երբ Հայաստանի պետութիւնը կը  
դեկլարէր, բնականաբար նախանձախնդիր էր ս-  
վերջապէս օր մը հայ իրականութեան մէջ ալ ըն-  
կերավարութիւնը տարածուէր: Բայց ի՞նչպէս, ի՞նչ  
ձեւով եւ կամ ե՞րբ տեղի պիտի ունենար այդ փրօ-  
փականտը: Այս մասին մէկ պատասխան միայն կա-  
րելի է տալ. — Հայաստանի մէջ իրապէս ընկեր-  
վարութիւն կարելի պիտի ըլլար տարածել այն ա-  
տեն, երբ հոն եւս Եւրոպայի եւ Ամերիկայի նման  
հող պատրաստուէր: Իսկ այդ հողը ե՞րբ էր որ կը  
ստեղծուէր: Անտարակոյս, միայն այն ժամանակ,  
երբ կապիտալիստական տնտեսութիւնը կուգար  
քանդելու եւ յեղաշրջելու հայ ժողովուրդին նախ-  
նական տնտեսութիւնը, երբ երկաթուղիները սու-  
րային Մասիսի ստորոտէն մինչեւ Միացեալ Հա-

յաստանի հեռաւոր սահմանները, երբ հայ ժողովուրդին ընչազուրկ մասը իր օրապահիկը երթար ճարելու հիմնուելիք գործարաններու մէջ եւ երբ ծուխն ու մուրը մեր ալ պայծառ երկինքը ամպոտէին :

Ինչպէս ջուրը անհրաժեշտ է ձուկին գոյութեան համար, նոյնպէս եւ կապիտալիստական տնտեսութիւնը՝ անհրաժեշտ է ընկերութարական փրօփականաւոր յառաջ տանելու համար :

Ուրեմն, ընկերութարական հայ կառավարութիւնը ոչ միայն Հայաստանը ներմուծուելիք դրամագլուխները կողոպտելու խելացնոր մտադրութիւնը չէ ունեցեր, ու չէր կրնար ունենալ, այլ իրականին մէջ, Գաշնակցութիւնը ամէն միջոց գործ դրած եւ ամէն հնարաւոր ապահովութիւնը տուած էր որպէս զի հայ կամ օտար դրամատէրերը գային Հայաստանի մէջ օգտագործելու իրենց դրամագլուխը, փոխանակ արտասահմանի :

Հայ ժողովուրդին տնտեսական դարգացման տեսակէտէն խիստ ցանկալի այդ կապիտալիստ հիւրերը մեր սահմաններէն ներս հրաւիրելու համար, ընկերութարական դաշնակցական կառավարութիւնը մինչեւ իսկ աւելի շատ զիջումներ ըրաւ քան որեւէ պետութիւն կ'ընէ իր հողին մէջ : Ան արտօնեց որ համեմատաբար աւելի լայն հնարաւորութիւններ ստանային, հայ դրամատէրերը, կարենալ աւելի շահաւէտօրէն օգտագործելու իրենց դրամագլուխը : Այո՛, Գաշնակցութիւնը ամէն զիջում ըրաւ որպէսզի գային, միայն թէ գային, ուղէին գալ մեր երկիրը : Ու այս մտահոգութիւնը անշուշտ

անոր համար էր որ մեր երկիրն ալ ճարտարար-  
ուեստօէն զարգանար, մեր մէջ եւս ստեղծուէին  
դասակարգային սուր հակադրութիւններ, եւ որպէս-  
զի իրապէս կարելի ըլլար խօսիլ ու գործել յանուն  
ընկերավարական խոչալներու: *կարգաւորութեան ստոր կարգ*

Եւ սակայն այս բոլորը մնացին ձայն բարբա-  
ռոյ եւ մեր երկին մէջ ոչ ոք ուզեց գալ իր դրամա-  
զլուխը օգտագործելու: Ինչո՞ւ համար արդեօք:

Ոչ թէ անոր համար որ Դաշնակցութիւնը հա-  
լածեց կապիտալիստները եւ կամ դրամատէրերը  
վախցան դաշնակ կառավարութեան ընկերավարական  
հանդամանքէն, այլ այն միակ ու շատ պարզ պատ-  
ճառով որ հայ թէ օտար դրամատէրերը մեր երկ-  
րին մէջ չգտան ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ,  
որպէսզի իրենց կապիտալը բիսկի ենթարկէին: *Եւր թիւ*

Հայաստանի պետութեան հիմնուծէն մինչեւ իր  
երկուք ու կէ՞ տարուան հանրապետական ժամա-  
նակամիջոցը, հայ ժողովուրդը շրջապատուած մէ-  
կէ աւելի թշնամիներով, օր ու արեւ շտեսաւ ու չը  
կրցաւ մինչեւ իսկ իր քաղաքական տարրական ա-  
պահովութեան տիրանալ, որովհետեւ մերթ մէկ  
մերթ միւս սահմանէն ներս կը խուժէին թշնամիները  
եւ կը խանդարէին վերաշինութեան խաղաղ աշ-  
խատանքները:

Արդ, ո՞ր կապիտալիստն էր որ պիտի համար-  
ձակուէր այդ վտանգաւոր եւ անապահով կացու-  
թեան մէջ մեծկակ գումարներ մտցնել Հայաստան,  
չահագործելու, երբ հայ պետութեան թշնամիները  
մշտական սպառնալիք կը կազմէին երկրին համար:

Ահա քաղաքական այս անապահով կացութիւնն

էր խրտչեցնողը հայ եւ օտար դրամատէրերը հայ պետութենէն եւ ոչ թէ ընկերվարական կառավարութեան մը ներկայութիւնը :

Իրականին մէջ կապիտալիստները շատ աւելի լաւ ըմբռնած են ընկերվարութեան դիրքը իրենց հանդէպ քան իրենց փաստաբանները : Անոնք համոզուած են թէ ոչ մէկ ընկերվարական կառավարութիւն կամ կուսակցութիւն զիրենք պիտի ուզէ հալածել՝ որովհետեւ եթէ իրենք հալածուին եւ հարկադրուին փախուստ տալ, իրենց հետ միասին ընկերվարական գործունէութեան հողն ալ կը չքանայ :

Ընկերվարականը վախ չունի կապիտալի նուաճումէն, որովհետեւ որքան որ շուտ եւ որքան շատ դարգանայ կապիտալիզմը, այնքան շուտ եւ այնքան մեծ չափերով կը գոյանայ իր մէջի թոյնը, գիտակից ու կազմակերպեալ աշխատաւորութիւնը, որ պիտի թունաւորէ զինքը եւ մահացնէ :

Այժմ դառնանք ձախակողմեան քննադատներուն :

## Ի՞նչ Կ'ԸՍԵՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

## ՁԱԽԱԿՈՂՄԵԱՆ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ

Աւելի սկզբունքային եւ հետաքրքիր են Դաշնակցութեան ձախակողմեան քննադատներուն ըսածները, զոր խտացած կը դանենք հետեւեալ հատուածներուն մէջ.

«Հայ ժողովուրդի քաղաքական ազատագրութեան դատը իր վերջին փուլի մէջ, պատմական իրողութիւնների նոր դասաւորութեան հետեւանում, եկել զուգադիպուել է հայ աշխատաւորութեան տնտեսական ազատագրումի մեծ գործին» :  
(«Ե. Հ.» 921, Մարտ 4) :

Նոյն միտքը աւելի պատկերալից արտայայտուած է հետեւեալ պարբերութեան մէջ.

«Հայ ազատագրութեան աշտարակաշինութիւնը արհամարհելով քաղաքական բարձունքները, քեւակոխում է դէպի ընկերային, տնտեսական ազատագրութեան երկիւնքները» :

Հետեւաբար՝

«Կորած ենք մենք, հայերս, եթէ չկարողանանք

ըմբռնել ուսական յեղափոխութեան համաշխարհային արժէքը» :

*Քանի որ՝*

«Տարրական իրողութիւն մըն է որ կապիտալի տապալումը Ռուսաստանում հետզհետէ ընդարձակուել եւ դարձել է համաշխարհային կապիտալի տապալման խնդիր առհասարակ» :

*Արդ՝ իբր եզրակացութիւն վերոյիշեալ մտքերուն՝*

«Երբ ազգային-պետական կեանքի մէջ ընկերվարական եւ պուրժուապետական սկզբունքների խնդիրներ են առաջանում, Դաւնակցութիւնը պարտի կանգնիլ անտեղիտալիօրէն ընկերվարական սկզբունքի վրայ՝ ընդդէմ պուրժուապետականի» :  
(«Արօր», նոյն հեղինակէն) :

*Աւելին եւս, ոչ միայն ազգային, այլ,*

«Երբ միջազգային կապիտալիզմի եւ միջազգային աշխատաւորութեան շահերը իրար են բախում կեանքի կամ մամուլի մէջ, համոզուած դաշնակցականի պարտականութիւնն է՝ կանգնիլ աշխատանքի սկզբունքի վրայ ընդդէմ կապիտալի» :  
(«Արօր») :

*Եւ որովհետեւ այդպէս չէ վարուած Հ. Յ. Դաշնակցութիւնը, հետեւաբար ան դարձեր է՝*

«Պահպանողական, հակայեղափոխական, հակաաշխատաւորական եւ ուրեմն նաեւ հակադաւնակցական», ու «եթէ Քրիստափորը եւ Զաւարեանը կենդանութիւն առնէին, նրանք պիտի ասէին քէ մենք դաշնակցականներ չենք» : («Արօր») :

*Դաշնակցութեան ձախակողմեան քննադատնե-*



ըր երկու որոշ եւ մինչեւ իսկ իրար հակասող մասերու կը բաժնուին :

Առաջին՝ ծայրայեղ ձախակողմը, որուն հիմնական մտքերը արտագրեցինք վերը եւ որոնց համեմատ Դաշնակցութիւնը իր ընկերվարական սկզբունքները յարգելու համար՝ պէտք է հետեւի ոուս սօլշեւիկներուն, որոնց ստեղծած յեղափոխութիւնը արդէն համաշխարհային բնոյթ ստացեր է եւ եկած է լուծելու հայ ժողովուրդին ոչ միայն քաղաքական, այլ եւ տնտեսական ազատութեան հարց

Երկրորդ՝ պահպանողական ձախակողմը, որ առաջինին նման չի հաւատար թէ հասած է ժամանակը միջազգային կապիտալի տապալման եւ համաշխարհային յեղափոխութեան, չընդունիր նաեւ թէ Դաշնակցութեան ընկերվարական ծրագիրն է հարկադրողը որ սօլշեւիկեան ոչ ժիմը որդեգրուի, այլ ան դիտել կուտայ թէ՛ մեր կամքէն անկախ՝ հայ ժողովուրդին գլխուն պայթած է ոուսական վտանգ մը, եւ մեր քաղաքականութիւնը կը պահանջէ որ մենք ենթարկուինք անոնց, քանի որ չենք կրնար այլապէս վարուիլ, սուրը մեր կոկորդին դրուած է, մենք ճնշումի տակ են :

Այս վերջին քննադատներուն պատասխանած ենք, իր ատենին «Հայրենիք»ի մէջ, «Սովիէտական Ռուսաստան եւ անոր ուշ մնացած ջատագովները» յօդուածաշարքով :

Այժմ մեր դրադման առարկան կը կազմեն «ծայրայեղ ձախակողմին» քննադատութիւնները, որոնց հիմքը, ինչպէս տեսանք, վերը յիշուած գաղափարներն են եւ որոնք սովիէթականութիւնը

կ'ուղեն պարտադրել Դաշնակցութեան եւ հայ ժողովուրդին ոչ թէ իբր անխուսափելի վտանգ մը, որուն պէտք է ընդառաջել դիւանագիտական համակերպութիւնով մը, այլ իբր ծրագրային պահանջ մը, եւ որ պէտք է նկատել իբր մեր իսկ իտէալին յաղթանակը:

Ուրեմն մեզի կը մնայ նախ ծանօթանալ ոռւս պօլշեւիկներուն ստեղծած յեղափոխութեան հետ, հասկնալու համար թէ՛ ի՞նչ է պօլշեւիկեան շարժումը եւ թէ ան իրականութեան մէջ ո՛ր աստիճան կրցաւ գործադրել քօմիւնիստական իտէալները բուն իսկ Ռուսաստանի մէջ, — ալ չենք խօսիր համաշխարհային յեղափոխութեան մասին —, ու եթէ չկրցաւ իրականացնել ընկերավարութեան հեռաւոր նպատակները, ի՞նչ էր գլխաւոր խոչընդոտը, եւ թէ ասկէ յետոյ հնարաւօ՞ր է անոր «լիակատար» յաղթանակը:

Այս հարցը ճշդեւէ ու ըմբռնելէ յետոյ է որ պիտի կարենանք պատասխանել այն հարցին թէ հայ ժողովուրդը կրնա՞ր ինքն ալ նոյն ճամբուն հետեւիլ, եւ իր երկրին մէջ իրականացնել պօլշեւիզմը, եւ թէ պէ՞տք էր առնէր այդ քայլը:

## Ի՞նչ է ՊՕԼՇԵԻԻԶՄԸ

Պօլշեիզմը հարագատ ծնունդն է  
ռուսական ոգիին.—

Հասկնալու համար թէ ի՞նչ է ընկերվարական  
խտէալներուն ռուսական միջավայրին մէջ ստացած  
նորօրինակ գունաւորումը, հարկ է թափանցել  
բուն իսկ ռուս ցեղին առանձնայատուկ ոգիին ու  
անոր արտայայտման ձեւերուն :

Ռուս ոգին՝ յաւիտենական դժգոհը իրականէն  
ու հնարաւորէն, ընկերային սիւսքէմներու եւ մարդ-  
կային երջանկութեան համար առաջադրած իր մի-  
ջոցներուն մէջ եւս նոյն յաւիտենական դժգոհն է  
ու որոնողը, եւ նոյն ծայրայեղ հակումներով թա-  
փառողը՝ միշտ ի խնդիր անհասանելիին ու անկա-  
րելիին :

Ռուսական ոգիին այդ խիզախ արտայայտու-  
թիւնը ոչ մէկ վտանգ կը հաշուէ ու ոչ մէկ կայան  
կ'ուզէ ունենալ, այլ միշտ վեր՝ իր միջավայրէն,  
վեր՝ իրական պայմաններէն, վեր՝ ցեղին Փիղիքա-  
կան ոյժերուն սահմաններէն ու վեր՝ ամէն բանէ :

1905-ի ոսկական յեղափոխութեան միջոցին՝ ոսկա մտաւորականութիւնը դեռ եւս հզօրապէս կանգուն ցարին բանակներուն դէմ՝ հրապարակ հանեց հարիւր հազարաւոր կազմակերպուած բանւորներ՝ որոնց միակ գէնքը իրենց մերկ կուրծքերն էին եւ չոր բազուկները . . . : Ու երեւակայել որ այդ մերկ կուրծքերուն կոթնած՝ ոսկա յեղափոխական կազմակերպութիւնները կը յուսային, կը հաւատային տիրանալ ոչ միայն քաղաքական, այլ եւ տնտեսական ազատութեան, որուն մեծ սկզբունքները կ'ողողէին հրապարակը :

Ի՞նչ եղաւ արդիւնքը այդ յեղափոխութեան, ոչինչ՝ բայց եթէ՝ հոկտեմբերեան մանիֆէսթ մը, որուն շնորհած ազատութիւնը, տնտեսական չըլլալէ զատ քաղաքական ալ չէր, այլ կատարեալ յիթուածք մը, ճիւղած ու ճմլած սահմանադրութիւն մը, որ ապա շնչահեղձ եղաւ ցարական թունաւոր շունչին տակ :

Ռոսկա յեղափոխական սերունդը յետոյ միայն զգաց, երբ արդէն դառն յուսախարութեան էր մատնուեր, թէ այլ է կամենալը, այլ է կարենալը, թէ յաջողութեան համար չբաւեր միայն բարձր սկզբունքներ յեղյեղել, շատ բաներ խոստանալ, մինչ իրական կեանքը եւ նիւթական սլայմանները այլամերժօրէն հակադիր են թէ՛ մեր ցանկութիւններուն, թէ՛ մեր սկզբունքներուն եւ թէ՛ մեր խոստումներուն :

Ահա նոյն այս չափ ու կշիռ չճանչցող եւ միայն մտքի թռիչքներով առաջնորդուիլ ուզող ոսկա ցեղին առանձնայատուկ ողիին հարազատ արդիւնքն է

ներկայ պօլշեւիզմը, որուն կրած ցաւագին յուսա-  
խարութիւններուն եւ պարտութեան պատճառը  
նոյնպէս հարկ է որոնել ո՞րս ոգիին մէջ:

Ամբոխը՝ ամէն ազգի մէջ ալ կրաւորական գոր-  
ծիքն է, որուն շնորհիւ միայն կ'իրականացուին բո-  
լոր մեծ խաչալները: Ճիշդ է թէ ան զուրկ է հարկ  
եղած դիտակցութենէ, զուրկ է սեփական կամեցո-  
ղութենէ, եւ սակայն նորէն ա'ն է որ հօրապէս իր  
կնիքը կը դնէ ամէն շարժման վրայ: Ամբոխին հա-  
մակրանքն ու հակակրանքը վճռական ազդակներն  
են որ պատճառ կը հանդիսանան յաջողութեան կամ  
ձախորդութեան՝ դրեթէ բոլոր ձեռնարկներու հա-  
մար:

Իսկ ի՞նչպէս կը շահուին համակրանքները այդ  
Մեծ Երախային, եթէ ոչ խոստումներով, թէկուզ  
ըլլան անիրականանալի, ցնորական, այլ միայն մեծ  
ու փայլուն, որոնք կտրուկ ըլլան, որոնք չնմանին  
հիներուն՝ որոնցմէ զգուած կ'ըլլայ ամբոխը:

Արդարեւ աշխարհիս բոլոր մեծ սկզբունքները  
հրապարակ դրուած են զանազան մեծ ու փայլուն  
խոստումներով, որոնց շլացուցիչ շողերուն ետե-  
ւէն ամբոխներուն նուագադոյն կամքերն իսկ կը շո-  
ղիանան: Այդպէս վարուած են մասնաւորաբար  
բոլոր կրօններու հիմնադիրները, որոնք երկնային  
դրախտներ խոստանալով՝ անոնց ստուերներուն ե-  
տեւէն քաշ տուած են միլիոնաւոր ժողովուրդներ:

Նոյն մէթոտին դիմեցին եւ պօլշեւիզմի հիմ-  
նադիրները Ռուսաստանի մէջ, եւ ըրին խոստում-  
ներ, իրապէս մեծ ու փայլուն, որ թէեւ համապա-  
տասխան ո՞րս մեծ ազգին որոնող ու դժգոհ ոգիին,

բայց որոնց իրագործման համար ո՛չ գիտական, ո՛չ տնտեսական եւ ո՛չ իսկ բարոյական հիմունքներ կային ցարեքու երբեմնի կայսրութեան մէջ:

Ի՞նչն էր էութիւնը պօլշեւիկեան շարժումին:— ԱՆՄԻՋԱԿԱՆ իրագործումը բոլոր այն իտէալներուն եւ սկզբունքներուն, որոնք ՀԵՌԱԽՈՐ նպատակներն են ընկերվարութեան եւ որոնց ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ իրագործման համար կազմակերպուած են բոլոր ընկերվարական կուսակցութիւնները:

Ձեջումը մասնաւոր սեփականատիրութեան, եւ անով հաստատուն՝ դասակարգային խտրականութեան, խորտակումը՝ բոլոր այն կարգերուն, ուր ահաւոր զրկանքներու եւ թշուառութեան մատնուած են միլիոնաւոր մարդ արարածները՝ աշխատաւոր դասակարգէն, եւ անոնց փոխարէն վերահաստատումը՝ աշխատանքի եւ վայելքի հաւասարութեան արդար ու բանաւոր կարգերուն, որոնց ներքեւ մարդը ազատ պիտի ապրի իր նմանին տնտեսական եւ ամէն կարգի զերութենէն եւ բնութեան տուած ու մարդուն ստեղծած բոլոր բարիքները՝ հասարակաց բարօրութեան ու երջանկութեան միայն պիտի յատկացուին:

Ահա էութիւնը, իր գաղափարական մաքրութեան մէջ՝ պօլշեւիկեան շարժումին, որ էութիւնն իսկ է, ընկերվարական շարժումին առհասարակ:

Եւ սակայն որպիսի՞ հսկայական տարբերութիւն՝ այդ վեհ իտէալներուն եւ այն եղանակին միջեւ, որով ոռուս պօլշեւիկները կը յաւակնին գործադրութեան դնել զանոնք: Որպիսի՞ թիւր ըմբռնողութիւն՝ մարդկային տնտեսական զարգացման

Եւ անոր յեղաշրջման կարելիութիւններու մասին :  
Որպիսի՛ բիրտ ու անմարդկային մէթոտ՝ որով իբր  
թէ պիտի իրականացուին ճշմարտապէս մարդկայ-  
նական նպատակները :

Եթէ այդ նուիրական գաղափարները՝ որոնց  
արտասանութիւնն իսկ երկիւղածութեամբ պիտի  
կատարուէր, լեզու ունենային՝ գերագոյն ընդվը-  
զումով մը, պիտի պոռային զիրենք չարաչարօրէն  
սրբապղծողներու երեսին՝ ու պիտի ըսէին .

— Մի՛ վրդովէք մեր նուիրական անդորրը, ո-  
րովհետեւ մենք չենք ուզեր մեր անասակ վեհոթ-  
թիւնը պղծել արիւնի ու աւերներու մէջէն եւ ի գին  
անպատիւ սակարկութիւններու շահուած թագաւո-  
րութիւնով մը :

Այնուհետեւ հարկ է քրքրել թէ իրապէս ի՞նչ  
չահեցաւ ընկերվարական վարդապետութիւնը՝  
մինչեւ իսկ այդ կարգի բիրտ ու անբնական մէ-  
թոտներու կիրառումէն : Պէտք է ամէն ոք հասկնայ  
թէ՛ ինչե՛ր խոստացան եւ սակայն ի՛նչ տուին պօլ-  
չեւիկները ուս ժողովուրդին մասնաւորաբար եւ  
աշխատաւոր դասերուն ընդհանրապէս :

## ԻՆՉՈ՞Ւ ԶԱԽՈՂԵՑԱԻ ՊՕԼՇԵՒԻԶՄԸ

Պօլշեւիկեան խոստումները՝ քա-  
ղաքական հողի վրայ.—

Երբ ցարին կառավարութիւնը տապալեցաւ եւ սօցիալիստ յեղափոխական կուսակցութեան պարագլուխ Քերենսկին կազմեց ժողովրդական նոր կառավարութիւնը եւ իրեն գլխաւոր մտահոգութիւնը դարձուց արտաքուստ՝ ուսս պետութեան սահմաններուն պաշտպանութիւնը, իսկ ներքուստ՝ ցարական պետութեան փտտած օրկանիզմին ախտահանութիւնը, ուսս սօց. դեմոկրատ մեծամասնական (պօլշեւիկ) հատուածին պատկանող դործիչները՝ ղեկավարութեամբ իրենց հռչակաւոր տեսարան եւ կորովի պարագլուխ Լէնինի, չուղեցին ենթարկուիլ յեղափոխական կառավարութեան, չդոհացան ցարին տապալումին հետեւանքով ստեղծուած նոր պայմաններով. յայտարարեցին թէ ա՛յդ չէր այն կառավարութիւնը՝ որուն համար իրենք նետուեցան յեղափոխական ալիքին



մէջ եւ տապալեցին ցարը, եւ թէ վերջապէս պէտք է շարունակել յեղափոխութիւնը մինչեւ աշխատաւորութեան վերջնական իտէալներուն յաղթանակը:

Ու ինչպէս երբեմն ցարին՝ այժմ ալ իրենց բովանդակ դէնքերը ուղղեցին Քերենսկիի կառավարութեան դէմ՝ ընելով հետեւեալ ամբաստանութիւնները եւ խոստումները.

Ա.— Քերենսկիի կառավարութիւնը դործիք եղած կապիտալիստ պետութիւններու ձեռքին՝ կը շարունակէ ցարին մէթոտներով թափել ոռւս ժողովուրդին արիւնը, պատերազմներու մէջ— մենք պատերազմ չենք ուղեր եւ իսկոյն որ տապալենք Քերենսկին եւ հիմնենք մեր կարմիր ուժիւմը, բոլոր զինուորները իրենց տուները պիտի վերադառնան:

Բ.— Քերենսկին չտուաւ մեզի ո՛չ մամուլի, ո՛չ ժողովներու եւ խօսքի ազատութիւն, պօլշեւիկ ուժիւմը կը խոստանայ տալ քաղաքացիական կատարեալ ազատութիւն Ռուսիոյ բոլոր քաղաքացիներուն:

Գ.— Կորչի՛ դադանի դիւանագիտութիւնը. ոչ մէկ կառավարութիւն իրաւունք ունի իր ժողովուրդէն դադանի՝ դաշինք կուելու եւ կամ համաձայնութիւն կնքելու: Մինչեւ իսկ բանակցութիւնները պէտք է կատարուին հրապարակաւ եւ մամուլի կամ այլ միջոցներով մատչելի դառնան ժողովուրդին:

Դ.— Ամէն ազգ, մեծ թէ փոքր, իրաւունք ունի կազմելու իր ազատ եւ անկախ պետութիւնը: Ոչ մէկ հալածանք եւ ոչ մէկ ազգի դէմ:

Ահա քաղաքական լաւագոյն խոստումները, որոնց դործադրութեան առաքելութիւնով՝ հրապարակ իջան ոուս պօլշեւիկները :

Ու եղաւ որ անոնք յաջողելով հմայել ամբոխը, իրենց վաշտուն խոստումներով, տապալեցին Քերենսկիի կառավարութիւնը եւ հաստատեցին կարմիր սովիէթական կառավարութիւն :

Բնականաբար ամէն մարդ իրաւունք ունէր արդար հետաքրքրութեամբ մը անհամբեր՝ սպասելու որ պօլշեւիկները դործադրէին իրենց խոստումներէն զոնէ վերոյիշեալ մէկ քանի կէտերը, զուտ քաղաքական հողի վրայ :

Ի՞նչ եղաւ սակայն արդիւնքը այդ խոստումներուն .

Ա. — Ոչ միայն վերջ չգտաւ պատերազմը, այլ բազմապատկուեցան ռազմաճակատները, արտաքիններուն վրայ բարդուելով ե՛ւ ներքին կռուադաշտեր : Ռուս ամբողջ երիտասարդութիւնը նորի նորոյ զինուորագրուեցաւ, եւ հինգ տարիներու արիւնոտ կռիւներէն վերջ՝ ահա չորս տարիներ եւս նոյն շիրիմնատեսիլ խրամները կը մնան անոնց համար իբր միակ հանգստավայրեր . . . :

Բ. — Կարմիրները ստեղծեցին ռէժիմ մը, ահաւոր, մահասարսուռ, ուր ո՛չ միայն խափանուեցան տարբեր հոսանքներու օսկանները, արդիլուեցան տարբեր քաղաքական կազմակերպութիւնները եւ սաստուեցաւ ազատ խօսքը, այլ միտքն իսկ, մտածումն իսկ դեռ ուղեղին մէջ՝ բռնադատուեցաւ, ի՞նչ կ'ըսեմ, ահաբեկուեցաւ : Այսպէս, պօլշեւիկեան ռէժիմը մահուան դատապարտեց ո՛չ մի-

այն անոնք որ իրենց սկետութեան դէմ տարրեր ուրոնի միջոցներով կը գործէին, այլ եւ անոնք, որ տարրեր կերպով կը մտածէին եւ որոնց մտածումը միայն մտածում էր եւ ոչ թէ գործ :

Գ.— Գաղտնի դիւանագիտութեան դէմ պատգամող եւ անոր ջնջումը պահանջող կարմիրները, երբ իշխանութեան տիրացան, աւելի գաղտնի, աւելի դաւադրական դիւանագիտութիւն մը որդեգրեցին եւ իջա՛ն իջա՛ն մինչեւ իսկ արիւնոուշտ ոճրագործներու հետ եղբայրական գաղտնի դաշինքներ կնքելու, այդ ալ՝ . . . ընդդէմ իր ազատութեան համար ողջակիզուած ազգի մը եւ անոր աշխատաւորական սկզբունքներու հաւատացող կառավարութեան . . . :

Դ.— Եւ վերջապէս փոքր ազգերու համար ազատութիւն խոստացող քոմիւնիսթ կառավարութիւնը, առաջին իսկ առթիւ կռիւի մտաւ ցարերու կայսրութեան բեկորներուն վրայ նորաստեղծ սկետութեանց դրեթէ բոլորին հետ, Լեհաստան, Ուքրանիա, Լիթուանիա, Ատրպէճան, Վրաստան, եւ վերջապէս եկան խորտակելու Հայաստանի անկախութիւնը, միշտ՝ յանուն ազգերու ազատութեան . . . :

Այսպէս իրագործեցին ոուս պօլշեւիկները քաղաքական հողի վրայ իրենց տուած խոստումները :

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ

### ՅՈՅՍԸ ԽՈՐՏԱԿՈՒԱԾ

Ռուս սօլշեւիկ պարագլուխները անդամ մը չը տիրացան քաղաքական իշխանութեան եւ զգացին թէ տէրն են միլիանաւոր սուիններու, չուղեցին այլեւս գոհանալ միայն քաղաքական յաղթանակներով ու շարունակեցին պայքարը, նոյն սուիններուն ոյժովը՝ վերջ տալու համար կապիտալիզմի տիրապետութեան :

Անոնք խորհեցան որ եթէ պրօլէտարիատը այս անգամ ալ փախցնէ առիթը եւ իր քաղաքական իշխանութիւնը օգտագործելով վերջնական հաշուեյարդար մը չկատարէ կեղեքող դասակարգերուն հետ, ա՛լ դժուար թէ նման պատեհութիւն մը կարենայ ստեղծել եւ ընկերվարական սկզբունքները պիտի շարունակեն մնալ մշտապէս իրր հեռաւոր իտէալ՝ աշխատաւոր ժողովուրդին համար :

Կապիտալիզմը տապալեցաւ եւ համայնավարութիւնը իրագործելու այս յանդուզն առաջադրու-

Թիւնը թէեւ յաւակնութիւն մը, այլ սակայն հոգե-  
բանօրէն ըմբռնելի է, եթէ նկատի ունենանք անոր  
ծնունդ տուող երկու հիմնական պատճառները, ո-  
րոնք գործի մղեցին ոուս պօլշեւիկները, լաւատես  
ակնկալութիւններով:

Առաջին՝ 120 միլիոննոց ուսական կայսրու-  
թեան տէր-տիրականը պրօլէտարիատն էր, որուն  
տիրապետութեան աւելի հզօր ու ահարկու, ահ ու  
սարսափ կը սիրէր ցարերու երբեմնի կայսրութեան  
մէկ ծայրէն միւսը: Այդ տեսակ ոյժ մը՝ խորհուե-  
ցաւ, ի վիճակի էր տնտեսական յեղաշրջումներ կա-  
տարելու ոչ միայն իր միջավայրին, այլ ամբողջ  
աշխարհին մէջ:

Երկրորդ՝ ոուս աշխատաւորութեան օրինակը  
մեծապէս խրախուսիչ ու վստահութիւն ներշնչող  
պիտի ըլլար մեծ ազդերու պրօլէտարիատին հա-  
մար, որ հինգ տարիներու ահաւոր զրկանքներուն  
կուրծք տալէ յետոյ, յաղթական թէ պարտուող՝  
պատերազմէն դուրս կուգար ճղակտոր, բարոյա-  
լքուած ու մանաւանդ լի ատելութեամբ հանդէպ  
իր կառավարութեան եւ անոր տիրապետող դասե-  
րուն: Այդ դժգոհ եւ յուսահատ աշխատաւորու-  
թիւնը արտասահմանի մէջ՝ անշուշտ որ պիտի  
նետուէր սկսուած նոր յեղափոխութեան գիրկը, ու  
այդպիսով պիտի իրականանար ոուս պօլշեւիկնե-  
րուն երեւակայած համաշխարհային մեծ յեղափո-  
խութիւնը:

Եւ գործի սկսան ոուս պօլշեւիկները:

Ու պահ մը լռեց բանականութեան ձայնը, տե-  
ղի տալով սուրի շաշիւնին, թնդանօթի ու գնդացի-

րի որոտին : Համամարդկային խոչալներու այդ  
մեծ որրանը դարձաւ ահաւոր ոճրաստան մը :

Քանդեցին ինչ որ կար կապիտալիստական ,  
վերջ տուին մասնաւոր սեփականատիրութեան , ըս-  
տաննեցին ու անհետացուցին կապիտալիստները ,  
չէզոքացուցին զինուորական դասը ու իրենց են-  
թարկեցին , եւ վերջապէս տէր դարձան ոռւսական  
միջավայրին մէջ՝ ամէն բանի :

Ռուսական կոմունիզմը ոչ եւս է . —

Քանդումի դործը աւարտեցաւ յաջողութեամբ :  
Կը մնար շինելը :

Անցան չորս տարիներ՝ այդ օրէն , ու մենք այ-  
ժրմ հնարաւորութիւն ունինք վերադնահատելու ի-  
րերը եւ հաշուելու թէ իրապէս ի՞նչ յաջողութիւն  
ունեցաւ ոռւս յեղափոխութիւնը , տնտեսական հո-  
ղի վրայ : Եւ առանց ճիշդի մենք կուզանք սա եզրա-  
կացութեան թէ՛

Ա. — Համաշխարհային յեղափոխութեան ա-  
ղաղակը մնաց ձայն բարբառոյ յանապատի : Եւրո-  
սոյայի աշխատաւորութիւնը շատ հեղ զլացաւ մին-  
չեւ իսկ պղատոնական ձեւով իր համակրանքները  
յայտնելու ոռւս ընկերվարականներուն , որոնք  
բաժնուելով Բ . Միջազգայնականէն , կազմեր էին  
նոր Գ . Քօմիւնիստական Միջազգայնական մը :

Բ. — Խոստացեալ քօմիւնիզմը ոչ միայն մնաց  
անհետեւորդ՝ արտասահմանի աշխատաւորութեան  
կողմէ՛ այլ եւ դարձաւ մեռեալ տառ մը՝ բուն իսկ  
ոռւսական միջավայրին մէջ եւ ոռւս բանւորութիւ-

նը որ իրր թէ «չափազանց շահագործում» կը նկատէր 8 ժամ օրական աշխատանքը, պօլշեւիկեան արդի ուժիմին տակ իր կամքէն անկախ եւ էարկադրաբար աւելի քան 10 մինչեւ իսկ 12 ժամուան աշխատանքի է բռնադատուած: Այդ գործաւորութիւնը ոչ մէկ միջոց ու հնարաւորութիւն ունի իր ազատ միտքն ու կամքը արտայայտելու: Պօլշեւիկեան տիրապետւորան մի եւ հսկայական մկրատով խուզած է բոլորին մտածողութիւնը:

Չէ՞ որ աշխատաւորութիւնը աւելնալ է կացութեան, չէ՞ որ այժմ ան ինքն իրեն համար? է որ կ'աշխատի, հետեւաբար եթէ պէտք ըլլայ գործարաններու մէջ օրական 24 ժամ եւս պիտի տքնի, եւ կամ տասնեակ տարիներ եւս խրամներու մէջ տառապի...

Գ.— Պօլշեւիկի հանճարեղ տեսարան լէնին, մէկէ աւելի անդամներ իր իսկ խօսքովն ու դրչովը յայտարարեց ու խոստովանեցաւ քօմիւնիզմի սընանկութիւնը: Անկէ յետոյ նոյն այդ պօլշեւիկ պարագլուխներուն կողմէ ձեռք առնուած միջոցները եկան ապացուցանելու թէ իրապէս Ռուսաստանի մէջ քօմիւնիզմը ոչ եւս է:

Հարկ է ընդունիլ թէ լէնին, ամենէն աւելի հեռաւոր՝ պօլշեւիկ պարագլուխներուն մէջէն, վերջին ատենները միշտ ալ վերապահութիւնով է արտայայտուած քօմիւնիզմի անմիջական իրականացման հնարաւորութեան մասին: Այդ իսկ պատճառով լէնին եղած է իր ընկերներուն մէջէն ամենէն աւելի մեղմ ու գործնական քաղաքականութեան կողմնակից:

Անգլիացի հրապարակագիր Ուէլզին կողմէ՝ սօլշեւիզմի թերի գործերու մասին իրեն եղած դիտողութեանց պատասխանելով՝ Լէնին կ'ըսէ .

«Եւ սակայն դուք պէտք չէ մոռնաք թէ մեր կատարածները դեռ ՓՈՐՁԵՐ են» :

Այդ մէկ խօսքովը Լէնին փառաւոր ապտակ մը կուտայ իր իսկ ընկերներէն շատ շատերուն՝ որոնք սօլշեւիզմը կ'ուզէին ներկայացնել որպէս վճռուած ու անթերի իրականութիւն մը, որուն միայն ենթարկուիլ պէտք էր : Ատով միանգամայն Լէնին կը յօժարի խոստովանիլ իրենց գործած թերութիւնները, որովհետեւ եթէ «փորձ» է իրենց կատարածը, փորձը կրնայ միշտ ալ սխալիլ, անկատար ըլլալ, հետեւաբար սրբազրուիլ, փոփոխուիլ, եւ, ինչո՞ւ չէ, նաեւ բոլորովին դէն շարտուիլ որպէս անժամանակ ու ձախորդ :

Գ. — Քօմիւնիզմը սնանկացաւ, որովհետեւ ոուս սօլշեւիկները մասնաւոր սեփականութիւնը խորտակելէ յետոյ, այժմ հարկադրուած են նորէն փանչնալ անհատական սեփականութիւնը ոչ միայն արդիւնքին, ստեղծուած հարստութեան, այլ եւ արտադրութեան միջոցներուն, հարստութեան աղբիւրներուն համար : Արդարեւ այսօր ոուս դիւզացին իր անհատական սեփականութեան մէջ՝ աւելի ապահով, ամուր եւ մինչեւ իսկ սանձարձակ է քան ցարին օրովը : Ռուս մուժիկը տէրն է, լիազօր ու կամայական թէ՛ իր հողին, թէ՛ իր գործիքներուն եւ թէ՛ իր արդիւնաբերած իրեղէններուն : Ու անհատական սեփականութեան այս աղաղակող ձեւը, որ ժխտումն իսկ է համայնավարութեան գաղափա-



րին՝ թոյլատրուած, ի՞նչ կ'ըսեմ, հովանաւորուած է նոյն ինքն համայնավար (քօմիւնիսթ) պօլշեւիկեան կառավարութեան կողմէ :

Ե.— Պօլշեւիզմը սնանկացաւ, որովհետեւ պօլշեւիկեան տիրապետութեան ենթակայ ժողովուրդները իրենց իսկ կառավարութեան կողմէ այժմ իրաւունք ստացեր են ազատ առուտուր կատարելու: Ոչ միայն գիւղացին արտօնուած է իր ուզած ապրանքը բերելով վաճառելու, այլ եւ քաղաքացի թոյլատրուած է խանութներ բանալու եւ իր անհատական շահը ապահովելու: Առեւտրական դասերուն կողմէ առուծախի միջոցաւ ապահովուած շահը արդէն ինքնին դարձեր է նոր դրամագլուխ, կապիտալ, եւ յատկացուած է շահագործման, ու իր կարգին՝ ինչպէս ամէն շահագործուող կապիտալ հակամէտ է մեծնալու: Ու երեւակայել որ կապիտալիզմի տասպալումը աւետող պօլշեւիզմն է որ կը պահպանէ այս նոր կարգի կապիտալը եւ կապիտալիստը:

Զ.— Պօլշեւիկներուն երեւակայած քօմիւնիզմը վիժեցաւ՝ որովհետեւ այսօր ան դեռ երեխայ մը՝ խանձարուրին մէջ, ահա նորէն ի նոր կը յանձնուի կապիտալիզմի պաշտպանութեան, կապիտալիզմին որ կաթի վոխարէն թոյն պիտի տայ անոր:

Արդարեւ կրնա՞ք երեւակայել ոուս «քօմիւնիստական կառավարութիւն մը, որ հրաւիրէ Եւրոպացի եւ Ամերիկացի կապիտալիստները Ռուսիա մտնելու, մենաշնորհներ ստանալու, հանքեր շահագործելու, եւ ի լրումն ամենեցուն՝ այդ գործա-

բաններուն մէջ աշխատցնելու բուն իսկ ոուս գործաւորը :

Ի՞նչ նպատակ կը հետապնդեն կապիտալիստները, երբ կ'ուզեն զանազան մենաշնորհներ ստանալ կամ ճարտարարուեստական արդիւնաբերական ձեռնարկներ կատարել. — անշուշտ՝ հարստանալ եւ իրենց դրամագլուխը բազմապատկել : Իսկ թէ կապիտալիստները ինչպէս կը հարստանան, մենք արդէն շատ լաւ գիտենք : Գիտենք թէ՛ միայն ու միմիայն աշխատաւորութեան չվճարուած յաւելեալ աշխատանքին արդիւնքն է որ հարստութիւն կը ստեղծէ :

Արդ՝ կարելի՞ է կօմիւնիստական անունը տալ կառավարութեան մը, որ թոյլ կուտայ, — յօժարակամ թէ բռնադատուած, արդիւնքը միեւնոյնն է — որ եւ է կապիտալիստ ոտքը իր հողէն ներս կոխէ եւ իր իսկ քօմիւնիստ քաղաքացիները շահագործելով հարստանայ :

Ո՛չ, հազար անգամ ո՛չ, ատիկա ֆօմիւնիզմ չէ, ոչ իսկ անոր ստուերը, այլ քերեւս միայն վիժուածքը :

Լէնին՝ անդրկովկասեան հանրապետութիւններուն ուղղած իր վերջին նամակին մէջ, բարձրաբարբառ կը յայտարարէ թէ՛ ժլատ մի ըլլաք, հրաւիրեցէք արեւմտեան դրամատէրերը եւ քոզ գանձեր երկիրները շահագործելու, որքան կրնաք շատ եւ շուտ :

Այո՛, բայց ո՞ւր կը մնայ ձեր քօմիւնիզմը, որուն անունով դուք մեր սեփական պետութիւնները քանդեցիք, — կը հարցնեն անդրկովկասեան աշխա-

տաւորները, քանի որ մեզ կրկին կապիտալիզմին  
գիրկը կը նետէք... :

Պօլշեւիկներուն խօսքին եւ գործին միջեւ այս  
աղաղակող հակասութեան եւ առհասարակ պօլշե-  
ւիզմի կրած ճախողութիւններու պատճառները կը  
տեսնենք յաջորդով :

## ՊՕԼՇԵՒԻԿԵԱՆ ՆԱՀԱՆՋԸ ԴԷՊԻ

### ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

Մենք տեսանք թէ ոուս պօլշեւիկները չկրցան իրագործել իրենց խոստումներուն ոչ միայն քաղաքական, այլ եւ մասնաւորաբար տնտեսական մասը: Տեսանք թէ՛ երեք տարիներու դառն փորձառութիւններէն յետոյ՝ ոուս կառավարութեան պարագլուխները հարկադրուեցան հիմնովին լքել պայքարի իրենց արտառոց մէթօտը, եւ ընդունելով թէ իրենց կատարածը փորձ մըն է, սկսան քայլ առ քայլ նահանջել, դէպի ետ, դէպի նախկինին հակառակ ու հակասող ուղղութիւն մը:

Եւ մի զարմանաք, երբ կը տեսնէք թէ այդ նոյն պարագլուխներն են որ այսօր հրապարակաւ կը յայտարարեն ու կ'ընդունին թէ՛

Ա.— Չիրականացաւ ֆօմիւնիզմը Ռուսիոյ մէջ, մինչեւ իսկ երբ ամէն բան ենթարկուած է պրոլետարական տիրապետութեան, երբ, չկան կասկիտալիստներ եւ խորտակուած է իրենց տիրապետու-

թիւնը, երբ օրէնքով վերջ դրուեցաւ մասնաւոր սե-  
փականատիրութեան, եւ երբ աշխատաւորութիւնը  
անսահմանօրէն լիազօր՝ տէրն է երկրին թէ՛ քաղա-  
քական իշխանութեան եւ թէ՛ բովանդակ տնտեսու-  
թեան :

Բ. — Չիրականացաւ համաշխարհային յեղափո-  
խութիւնը, որը ամենամօտաւոր իրազօրոճելի հա-  
ւանականութիւնը կը թուէր, ու այս պահուսս սուս  
աշխատաւորութիւնը հանուր աշխարհի կապիտա-  
լիզմի դէմ իր սկսած պայքարին մէջ նոյնպէս ա-  
ռանձին է ու անհետեւորդ ինչպէս որ չէր իր սկըզբ-  
նաւորութեան ատենը :

Համաշխարհային յեղափոխութեան նախափոր-  
ձին այս ձախողութիւնը ոսւս պօլշեւիկները կ'ու-  
զեն վերադրել եւրոպական ընկերվարականներու  
անդիտակից ու պահպանողական հանդամանքին ու  
փրփրոտ շրթներով շանթեր կը տեղան անոնց դըլ-  
խուն, դանոնք որակելով՝ «դեղին, յետադէմ, ա-  
ջակողմեան», եւն. :

Եւ սակայն մեղքը արեւմտեան աշխատաւորու-  
թեանն է որ ոսւսական մէթոտներով չյեղափոխ-  
ուեցաւ թէ՛ ոսւս պօլշեւիկներունը, որոնք երեւա-  
կայական յեղափոխութիւններ նշմարած են ամենու-  
րեք եւ չեն կրցած հասկնալ թէ «ամէնքը խաղի չեն  
ելներ, երբ իրենք ծափ կը զարնեն» :

Ուրեմն ի՞նչ շահ մնաց բոլոր այդ շունդալից  
յայտարարութիւններէն ու արիւնոտ պայքարնե-  
րէն. — քանդուած երկիր մը եւ ցաւադինօրէն տան-  
ջահար ժողովուրդ մը, որ անօթի փորով փիլիսո-  
փայութիւն կ'ընէ :

Արդարեւ, շնորհիւ մէկ կողմէն նախկին ցարական կառավարութեան աւերիչ ուժի մին ու հնդամեայ ընդհանուր պատերազմին պատճառած կորուստներուն, եւ նաեւ շնորհիւ պօլշեւիկեան երեք տարուան անստեղծագործ ու սպառիչ տիրապետութեան՝ այսօր Մեծն Ռուսիա թէեւ արտաքուստ միլիոնաւոր սուիններու վրայ կռթնած՝ իրականին մէջ ու ներքուստ ահաւոր աւերակոյտ մըն է, ամէն կողմէ պաշարուած, ուր արդիւնաբերութիւնը իսպառ կանգ է առեր, իսկ կապիտալիստական շրջանէն մնացած ժառանգը արդէն վաղուց սպառեր է:

Ահա ճիշդ այսօրուան այդ անմխիթար կացութիւնը եւ վաղուան սոսկատեսիլ հեռապատկերն էին որ հարկադրեցին ուսս քօմիւնիստները հրաժարիլ ե՛ւ անմիջական յաջողութեան յոյսէն ե՛ւ կապիտալիզմին դէմ սկսած իրենց նորօրինակ պայքարէն: Այդ էր պատճառը որ Լէնինն հարկադրուեցաւ ստորագրել հետեւեալ տողերը, որոնք կարծես թէ դուրս եկած են խոհեմ պատուելիի մը դրչէն եւ ոչ թէ անձի մը՝ որ կարմիր առաջնորդն է եղեր քօմիւնիզմին եւ համաշխարհային յեղափոխութեան:

«ԱԻ ԵԼԻ ՄԵՂՄՈՒԹԻԻՆ, ԶԳՈՒՇԱԻՈՐՈՒԹԻԻՆ, ԶԻԶՈՂՈՒԹԻԻՆ դէպի մանր պուրժուազին, մտաւորականութիւնն ու յատկապէս դէպի գիւղացիութիւնը»: (Լէնինի նամակը, 11 ապրիլ 921, Մոսկուա): (Ընդդժումները միշտ մերն են. Ա. Վ.):

Լսեցէք դեռ հետեւեալ տողերը հասկնալու համար թէ ինչ ողբալի հակասութեան մէջ են այն պօլշեւիկները, որոնք դեռ երէկ համաշխարհային

անմիջական յեղասիրտութիւն կը պոռային եւ կը դատապարտէին արեւմտեան ընկերվարականները, որոնք նոյն նպատակին հասնելու համար աւելի մեղմ ու դանդաղ քաղաքականութեան մը կը հետեւէին փոխանակ հուրի եւ սուրի :

«Աւելի մեղմ, աւելի զգուշաւոր, աւելի ՍԻՍ-ՏԷՄԱԹԻՔ ՓՈՒՅԱՆՑՈՒՄ ԴԷՊԻ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ. ահա քէ ի՞նչը հնարաւոր եւ անհրաժեշտ է : (Լէնինի նամակը) :

Սխաթէմաթիք, այսինքն կանոնաւոր, աստիճանական փոխանցում դէպի ընկերվարութիւնը . . . :

Ի՞նչպէս հաւատանք թէ այս մտքերուն հեղինակը՝ ստեղծողն ու ղեկավարողն է այն շարժման՝ որ յայտարարեց թէ կապիտալիզմի տիրապետութեան դէմ պայքարը պէտք է տարուի սուրով եւ հուրով, թէ բռնութիւնը, որուն արդիւնքն են դրամատիրական ներկայ կարգերը, ի վիճակի է նաեւ վերջ տալու այդ նոյն կարգերուն : Ի՞նչպէս հաւատանք թէ ա՛յն շարժումն է սա, որ ծաղրեց ու արհամարհեց ընկերվարական լաւագոյն մտածողութեան տէր տեսաբանները, որոնց մեղքը այն էր որ աստիճանաբար ու սխաթէմաթիք կերպով կ'աշխատէին ընկերվարութեան իրականացումին : Ի՞նչպէս հաւատանք որ նախկին ընկերվարական սխաթէմաթիք գործելակերպին դէմ սխաթէմաթիք ու կատաղի կռիւ մղող Լէնինը՝ այսօր ելեր է յայտարարելու թէ ընկերվարութեան իրականացումին համար ԱՆ-ՀՐԱԺԵՇՏ է ՍԻՍԹԷՄԱԹԻՔ, կանոնաւոր եւ աստիճանական փոխանցում կատարել, եւ ոչ թէ ինչպէս պօլշէւիզմը միամտութիւնը ունեցաւ յայտարարե-

լու, խստորէն, բռնի, անկանոն ու անսխաթէմաթիք պայքար մը . . . :

Իսկ թէ ինչպէս պօլշեւիկները խաչ քաշեցին իրենց հակակապիտալիստական բուռն ու բիրտ մէթոտներուն վրայ եւ գացին կրկին կապիտալիստներուն աջակցութիւնը մուրալու, էր հասկնանք հետեւեալ տողերէն .

«Տնտեսապէս միանգամայն պէտք է յենուիլ դրամատիրական արտասահմանի հետ ապրանքային փոխանակութեան վրայ, ժլատ չըլլալ, թող անստանայ տասնեակ միլիոնաւոր հանքային ամենաթանկագին արտադրութիւններ : (Լէնինի նամակէն) :

Տեսա՞ք ձախորդութեան մէջ շոայլ դարձողները :

Մոսկուայի քօմիւնիսթ մասնաճիւղերու միացեալ ժողովին մէջ Լէնին խօսելով դրամատիրական աշխարհին հետ վերստին յարարերութեան մտնելու հարցին շուրջ, կ'ըսէ .

«Այդ քայլը խաղաղութիւն չի նշանակեր : Պատերազմ, կռիւ կայ, միայն տարբեր ձեւով է որ կը մղուի, ձեւ մը որ մեզի աւելի նպաստաւոր է :

Նախապէս պատերազմը կը մղուէր սուիներով, թէնքերով, հրացանով, հիմա առեւտրական հողի վրայ կը տարուի : Բնաւ չենք ենթադրած պուրժուազիան ջախջախելու միայն զինու զօրութեամբ» :

Բայց Լէնին չըսեր թէ այս յետին ժամու իրենց «խաղաղ միջոցներով» պայքարը կապիտալիզմին դէմ՝ ինչո՞վ կը տարբերի արեւմտեան ընկերվարա-



կաններուն տարիներէ ի վեր հետեւած պայքարի ձեւէն. գործելակերպի տարբերութիւն մը՝ որուն համար իբր թէ հրապարակ իջան իրենք: Արդ, կը հարցնենք, ինչո՞ւ ուրեմն որդեգրեցին այդ արիւնոտ քաղաքականութիւնը, քանի որ վերջ ի վերջոյ պիտի դային իրենց իսկ դատապարտած խաղաղ «առեւտրական» հողի վրայ տարուելիք պայքարին . . . :

Իսկ եթէ կ'ուզէք հասկնալ թէ նախկին համաշխարհային յեղափոխութեան կարմիր տեսարանը որքան համեստունակ դարձեր է այժմ իր յաւակնութիւններուն մէջ, կարդանք յետս կոչումի սա ուշադրաւ տողերն ալ.

«Ըսած ենք ու կը կրկնենք հիմա քէ մենք համաշխարհային յեղափոխութեան շղթայի միայն մէկ օղակը կը կազմենք եւ պուրժուազիան միայն մեր ջանքերով տապալելու յաւակնութիւնը երբեք ունեցած չենք»:

Մի՞թէ:

Արդարեւ թաւական հաճելի տրամաբանողներ են պօլշէւիկները: Հարցուցէք անոնց թէ՛

— Ո՞րն էր յաջողութեան գրաւականը ոուս պօլշէւիկներուն սկսած քօմիւնիստական շարժման, ու անոնք ձեզի կը պատասխանեն.

— Բոլոր երկիրներու աշխատաւորութեան միացած ջանքերով ստեղծուելիք համաշխարհային յեղափոխութիւնը:

— Հարցուցէք կրկին թէ՛ երեք տարիներ անցան, տեղի ունեցա՞ւ ակնկալուած համաշխարհային պրօլէտարական յեղափոխութիւնը կամ կրնա՞յ ու-

նենալ մօտ ատենէն : Ու անոնք ձեզ կրկին կը պատասխանեն

— Ո՛չ :

— Հետեւաբար եւ կ'ընդունի՞ք թէ ձախողած է ձեր շարժումը : Այս անգամ անոնք դիտու յանաս շարժումով մը ձեզի կ'ըսեն .

— Ո՛չ :

Եւ սակայն դուք պէտք չունիք անոնց բերնէն լսելու ձեր հարցին դրական պատասխանը . Քանի որ վերջերս իրենց ամբողջ գործունէութիւնը փառաւոր հաստատումն է իրենց անտեսական սկզբունքներուն ձախողութեանը :

Յայց ի՞նչն էր միակ, գերադոյն եւ հիմնական պատճառը, որով պարտուեցաւ ուսու քօմիւնիստական շարժումը եւ անգործութեան դատապարտուեցան անոր հռչակած մեծ ու փայլուն սկզբունքները :

ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆԸ  
ՀՈՂ ՉԵՆ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՆ

Կան մտածողներ, մինչև իսկ ընկերավարական շարքերու մէջէն, որոնք ոչ մէկ ընկերավարական անկեղծ եւ մաքուր դադարավարականութիւն չտեսնալէ դատ՝ ուսս պօլշէլիկներուն քով, զանոնք կը նկատեն ուղղակի ցարին հետեւորդները, որոնց համար քօմիւնիզմը, համաշխարհային յեղափոխութիւնը եւ համամարդկային իտէալները պարզապէս իրր քօղ կը ծառայեն, թաքցնելու համար Մեծն Ռուսաստան մը հիմնելու եւ համասլաւական տիրապետութեան նպաստելու ազգայնական յետին նպատակները :

Դեռ քանի մը ամիս առաջ էր, դերման ընկերավարականներու քլվիզիօնիստ հատուածին պարագլուխը եւ անուանի տեսարան Պէրնշտայն՝ իր իսկ ստորագրութեամբ դուրս եկած էր մերկացնելու Լէնինի անձնաւորութիւնը, եւ անոր դեկավարած պօլշէլիկեան շարժումը :

Պէրնշտայն թիւերով ու պաշտօնական փաստաթղթերով ցոյց կուտար թէ Լէնինը ուրիշ մէկը չէ, բայց թէ գերման Քայզերին գործակալը, որ հսկայական գումարներ է ստացեր գերման սպայակոյտէն, ցարը տապալելու, ներքին յեղափոխութիւն յառաջ բերելու եւ Ռուսիոյ ոյժը տկարացնելու խոստումով:

Այս հարցը պահ մը այնքան մեծ շահագրգռութիւն ստացաւ որ մինչեւ իսկ Րայխստակին մէջ հարցապնդումներ տեղի ունեցան այդ մասին:

Եւ սակայն մենք ամենեւին տրամադիր չենք ուստական յեղափոխութեան ձախողութիւնը վերադրելու իր գեկաւարներուն յետին նպատակներով առաջնորդուած ըլլալուն:

Չենք ընդունիր թէ՛ յանուն ընկերավարութեան տարիներ շարունակ թէ՛ Ռուսիոյ եւ թէ՛ արտասահմանի մէջ ցարին ու ցարական մտայնութեան դէմ բիւր գրկանքներով ու հարածուելով պայքարող եւ ընկերավարական լուրջ մտածողներու կարգին իր շատ յարգելի տեղը գրաւող Լէնին՝ կրնայ երբ եւ իցէ իջնալ մինչեւ այն աստիճան, որ դառնայ սովորական աղենտ մը, լրտես մը, ու այդ ամէնը՝ ի խնդիր մէկ քանի հազար մարքի...: Ո՛չ, այդ արդէն չափազանց է:

Չենք ուզեր հաւատ ընծայել մինչեւ իսկ այն ամբաստանութեան թէ՛ ոուս սօլչեւիկները արժանաւոր յաջորդներն են ցարին, որոնք ուրիշ սեւէ մտահոգութիւն չունին՝ բացի Մեծն Ռուսաստան մը եւ սլաւական տիրապետութիւն մը հաստատելու իտէալէն: Եւ թէ այդ իսկ պատճառով էր որ շուտով

սնանկացան իրենց մեծաշունդ յայտարարութիւնները ընկերավարութեան մասին :

Այս պահուս հաճելի է մեզ ենթադրել ու հաւատալ թէ՛ գոնէ պօլշեւիզմի անուանի պարագլուխները, ճշմարտապէս առաջնորդուած էին համայնավարական խռատները իրագործուած տեսնելու անչահախնդիր ցանկութիւնով, ու ըստ այնմ պիտի մօտենանք փնտռելու եւ գտնելու իրական ու դերագոյն պատճառը իրենց անյաջողութեան :

Ինչո՞ւ ուրեմն չիրականացաւ քօմիւնիզմը Ռուսիոյ մէջ :

Հոս արդէն մենք հարկադրուած ենք ակնարկ մը նետելու դէպի մեր դրքին սկիզբները, վերջիշելու եւ հասկնալու համար թէ ընկերավարութիւնը ի՞նչ պայմաններու տակ կը զարգանայ եւ թէ մանաւանդ ե՞րբ եւ ի՞նչ պայմաններով հնարաւոր է անոր իրականացումը :

Ողբալի է մտայնութիւնը այն մարդոց՝ որոնք կը հաւատան թէ ուր որ աղֆատութիւն կայ, հոն է որ գոյութիւն կ'ունենայ ընկերավարութիւնը : Այդպիսիները կ'աղաւաղեն ու կ'այլանդակեն ընկերավարութիւնը եւ գայն կը նկատեն որպէս թշուառութեան վարդապետութիւն մը :

Յաճախ բեմերու վրայ կամ այլուր, կը հանդիպինք կուսակցափոխ սովիէթամոլներու, որոնք կը յայտարարեն .

«Անոնք որ կը պատճառարանեն թէ պօլշեւիզմը բռնի ու արուեստականօրէն փաթթուեցաւ հայ ժողովուրդի վրին, եւ թէ պօլշեւիզմի բնաւ հող չկար Հայաստանի մէջ, անոնք ուրեմն կ'ընդունին

թէ՛ հայ ժողովուրդը աղքատ չէ, թշուառ չէ, այլ պուրթուաներէ կը բաղկանայ»:

Ահա այդ իսկ դօսացած մտայնութեան մէջ պէտք է որոնել արժատները այն բոլոր արկածախնդրութիւններուն, որոնց մղուեցան ոուս եւ հայ պօլշեւիկները եւ որոնց հետեւանքը դժբախտաբար՝ եղաւ Ռուսիոյ համար աղիտալի, իսկ հայ ժողովուրդին համար՝ բիւր անդամ կսկծալի:

Հոս է չարիքին արժատը:

Թշուառութիւնն ու աղքատութիւնը ընկերավարական իտէալներու իրականացման իբր լաւագոյն հող նկատելնուն համար էր որ՝ ոուս պօլշեւիկները շուռ տուին դէմքերնին արեւմտեան գիտակից ու կազմակերպուած բանւորութենէն, զայն կոչելով՝ «հակայեղափոխական, գեղին, պահպանողական», եւ մօտեցան արեւելքին, իսլամական մոլեռանդ ու տգէտ աշխարհին, կազմեցին արեւելքի քօմիւնիստներու համաժողովներ, եւ պահ մը կարծիրն ու կանաչը պապտուեցան գիրկ գրկի, յանուն խոցոտուած ու լղրճուած ընկերավարութեան մը:

Չէ՞ որ Արեւելքի մէջ աւելի համատարած ու ահաւոր չափերու է հասած թշուառութիւնը. չէ՞ որ աղքատութիւնը եւ տգիտութիւնը բովանդակ քաղաքակրթութիւնն է կանաչներու աշխարհին, հետեւաբար հող կայ հոն ընկերավարութեան, հող կայ պօլշեւիզմի, հող՝ քօմիւնիզմի...:

Պատկերը նոյնն էր նուազ տարբերութեամբ եւ մտայնութիւնը նոյնը՝ մուժիկներու աշխարհին, նաեւ Ատրպէճանի, Վրաստանի եւ Հայաստանի վերաբերմամբ: Չէ՞ որ այդ պետութիւններն ալ մերկ

էին, ու նօթի, ուրեմն եւ լաւագոյն միջավայրն էին քօմիւնիզմին:

Ընկերավարութիւնը մերկութեան եւ անօթութեան հետ շփոթողները կը մոռնան սակայն՝

Ա.— Թէ՛ ընկերավարութիւնը ծնունդն է պատմական որոշ (վերջին) դարաշրջանի մը, եւ տնտեսական որոշ, իւրայատուկ պայմաններու, որոնց կապիտալիստական անունը կուտանք:

Բ.— Թէ՛ թշուառութիւնն ու աղքատութիւնը գոյութիւն ունէին դեռ դարեր առաջ, մարդկութեան ծագումէն ի վեր, եւ սակայն ո՛չ մէկ միամիտ անձ կը փորձուի ընկերավարութեան խօսքն իսկ ընել այդ շրջաններուն վերաբերմամբ:

Գ.— Թէ՛ մարդկութեան տնտեսական զարգացման ամենավերջին, եւ միւսներու հետ բազմատեսիլ՝ աւելի կատարեալ ու յառաջդիմական շրջանը կազմող կապիտալիզմն էր որ յառաջ բերաւ ճարտարարուեստի զարգացումը, որ ստեղծեց տնտեսութեան նորագոյն ձեւ մը, հիմը դրաւ դրամագլուխին կապիտալիստականօրէն շահագործման, երբ դրամագլուխը ստացաւ յարատեւ աճելու եւ մեծնալու բնոյթ մը: Կապիտալիզմն էր որ մարդկութիւնը բաժնեց երկու որոշ մասերու՝ մին ան՝ որ սեփականատէրն է արտադրութեան, հարստութիւն ստեղծող բոլոր միջոցներուն, դրամագլուխ, գործարան, մեքենայ եւն., իսկ միւսը՝ վարձու աշխատանքով ապրող՝ բոլորովին սեփականագուրկ եւ կամ շատ չնչին եւ ապրելու անբաւարար սեփականութեան տէր մասը:

Դ.— Թէ՛ կապիտալի զարգացումը իր բնոյ-

թովն իսկ համաշխարհային, եւ մեծնալու հակա-  
մէտ՝ կը ձգտի տնտեսական արդիւնարերական մի-  
ջոցներուն կատարելութեան ու զարգացման, կը  
կատարէ նոր գիւտեր, նոր հնարքներ, որոնցմով  
նպատակ ունի որքան կարելի է շատ ասորանք ար-  
տադրել եւ աժան ծախել, սնանկացնելով իրմէ պըզ-  
տիկները եւ կեդրոնացնելով դրամագլուխը համե-  
մատարար սակաւաթիւ անձերու ձեռքը:

Ե.— Թէ՛ կապիտալիստական այդպիսի հսկայ  
ու զարգացեալ ձեռնարկութեանց մէջ աշխատող  
միլիոնաւոր աշխատաւորները, իրենց գործին բե-  
րումովն իսկ արդէն բարձրացած կ'ըլլան մտաւոր  
ու բարոյական որոշ սահմանի մը, որովհետեւ  
մարդկային հասարակութիւններու միտքը եւ զար-  
գացումը ուղիղ կը համեմատի իրենց ժամանակին  
տնտեսական ու ճարտարարուեստական զարգաց-  
ման, տեղի ունեցած գիւտերուն, մեքենական կա-  
տարելութեան եւայլնի հետ:

Զ.— Եւ թէ վերջապէս նարտարարուեստի այդ հա-  
մեմատարար աւելի քան ներկայիս՝ կատարելագործ-  
ման, մրցակցութեան հետեւանալով՝ դրամագլուխի  
աստիճանական կեդրոնացման շրջանի աշխատաւոր-  
ութիւնն է միայն որ իր գիտակցութիւնով եւ կազ-  
մակերպուած միջոցներով պիտի տիրանայ արտա-  
դրութեան բոլոր միջոցներուն, եւ որպէս թոյն մը՝  
կապիտալիզմի ծոցին մէջ իսկ գոյացած՝ պիտի  
թունաւորէ եւ տապալէ գինքը, եւ պիտի իրագործէ  
ընկերվարական համայնատիրական իրաւակարգը:

Այո՛, այդ ժամանակ, այդ ձեւով ու այդ հա-  
սունութեան տէր աշխատաւորութեան միջոցով մի-



այն իրականութիւն կը դառնան ընկերվարական հե-  
ռաւոր խոչալները :

Արդ՝ Ռուսաստանը ունի՞ պահանջուած այդ  
պայմանները : Ռուսաստանը հասած է տնտեսական  
այն կատարելութեան եւ տէ՞րն է արտադրական այն  
միջոցներուն , որ կարեւայ հոչակել համայնատի-  
րութիւն եւ ինքն իր իւղովը տապկուիլ : Եւ վերջա-  
պէս ոուս ժողովուրդը , որուն 95 առ հարիւր տո-  
կոսը կազմուած է առասպելական տգիտութեան  
մէջ տապլտկող մուծիկներէ , որոնք կարմիր վե-  
րարկուն հազած՝ դեռ ցարին պատկերը կը կրեն ի-  
րենց կուրծքին վրայ եւ խաչ կը հանեն անոր ի-  
տես . . . այդ ոուս մուծիկը կրնա՞յ հիմնադիրն ըլ-  
լալ եւ կերտել վաղուան ընկերային նոր իրաւա-  
կարգը՝ որ շատ աւելի բարդ պիտի ըլլայ քան ներ-  
կայիս , եւ որուն կառուցման համար աւելի ընդու-  
նակութիւն , աւելի պատրաստութիւն , աւելի հան-  
ճար պէտք է քան թէ կապիտալիզմի տիրապետու-  
թեան ներքեւ :

Ո՛չ , հազար անգամ ո՛չ :

Ռուսաստանը կը ներկայացնէր ընդարձակա-  
ծաւալ այլ անմշակ , ճարտարարուեստական տեսա-  
կէտէ յետամնաց երկիր մը , իսկ ոուս ժողովուրդը  
միլիոններու աղքատ , տղէտ ու թշուառ հօտ մը ու  
ճիշդ այդ պատճառով ձախողեցաւ քօմիւնիզմը :

Թշուառութիւնը , մերկութիւնը , անօթութիւնը  
եւ տգիտութիւնը իրենց ծայրայեղ աստիճանին մէջ  
ոչ թէ կը մօտեցնեն , այլ կը հեռացնեն ժողովուրդ-  
ները ընկերվարութենէն : Ընդհակառակը , երբ ոեւէ  
երկրի մը աշխատաւորութիւնը կապիտալիզմի շա-

Հագործումին ենթակայ, այլ սակայն ունի նիւթա-  
պէս աւելի բարօր վիճակ, բարեկեցիկ պայմաններ,  
որոնց հետեւանքով իր միտքն ալ որոշ չափով զար-  
գացած է ու յառաջդիմած՝ այդ աշխատաւորու-  
թիւնն է ահա, որ կրնայ չարն ու բարին զանազա-  
նել, գիտակցիլ իր տնտեսական դրութեան եւ գնա-  
հատել արժէքը կազմակերպեալ պայքարին:

Ինչ հսկայական տարբերութիւն որ կայ Ռու-  
սաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի եւ Անգ-  
լիոյ, Ամերիկայի ու Ֆրանսայի երկիրներուն միջեւ  
ճարտարարուեստական զարգացումին ու յառաջդի-  
մութեան տեսակէտէն, նոյն տարբերութիւնը կը  
գտնենք նաեւ երբ կը բաղդատենք այդ երկիրներու  
ժողովուրդները իրարու հետ: Այսպէս, քով քովի  
դրէք ամերիկացի գործաւոր մը՝ ոռւս մուժիկի մը,  
Ֆրանսացի գործաւոր մը՝ թուրք համմալի մը եւ  
անգլիացի գործաւոր մը՝ պարսիկ տատաշի մը հետ,  
այն ժամանակ դիւրաւ կը հասկցուի թէ ո՞ր եր-  
կիրներու մէջ իրապէս հող կայ ընկերվարութեան  
եւ թէ ո՞ր ժողովուրդները ատակ են ըմբռնելու այդ  
վարդապետութիւնը եւ անոր իրականացման հա-  
մար աշխատելու:

Յամենայն դէպս Ռուսաստանը չէր այն երկի-  
րը, որ պիտի կարենար ներկայիս իրականացնել քո-  
միւնիզմը:

Աւելին կայ դեռ:

Ռուս ժողովուրդը ձախողեցաւ իր մեծ ձեռնար-  
կին մէջ՝ ոչ թէ որովհետեւ իր ղեկավարները ան-  
կեղծ, համոզուած ընկերվարականներ չէին, ոչ թէ  
անոր համար որ համաձայնական պետութիւնները

Թշնամական դիրք բռնեցին իր հանդէպ, ո՛չ: Քօմիւնիզմը Ռուսիոյ մէջ անհնար էր յաջողցնել եթէ մինչեւ իսկ ամբողջ աշխարհը իր համակրանքը յայտնէր, ու հանգիստ ձգէր զայն իր վիճակին մէջ առանձին: Պօլշեւիզմի անյաջողութեան պատճառները ոչ թէ արտաքին են, այլ ներքին: Անոնք թաղուած են ու կը մնան ռուսական միջավայրին մէջ, անոնք բուն իսկ Ռուսիոյ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ:

Ի զուր չէ որ արեւմտեան երկիրներու ընկերվարականները իրենց յաջողութեան յոյսը կապած են իրենց տնտեսական պայմաններու զարգացման հետ:

Ռուս սօցիալիստ մտաւորականութիւնը ուսական միջավայրը նկատի չառաւ ինչպէս որ էր իրականին մէջ, այլ ինչպէս ինքը կ'ուզէր: Ռուս Ժողովուրդին ղեկավարները գերզնահատեցին իրենց պայմանները, ու ձախողեցան: Տնտեսական պայմանները ունին իրենց զարգացման մասնաւոր եղանակ մը, անոնք չեն ենթարկուիր մեղի, վեր են մերցանկութիւններէն, տնտեսական պայմաններու վերայ ազդելու միակ կերպը՝ զանոնք ըմբռնելն է:

Պօլշեւիզմը յաջողելու շանս կ'ունենար միայն այն պարագային, երբ Ռուսաստանը ի վիճակի ըլլար միայնակ վարելու իր տնտեսութիւնը, եւ բաւարարելու իր Ժողովուրդին բազմատեսակ կարիքներուն: Իսկ սեփական անկախ տնտեսութեան համար, — որուն դեռ ոչ մէկ պետութիւն տիրացած է բառին իսկական առումով — Ռուսաստանը պէտք էր ունենար ոչ միայն ամէն կարգի անհրաժեշտ հում

նիւթեր, եւ հանքեր, այլ մանաւանդ միջոցներ՝  
զանոնք շահագործելու համար, կատարելագործը-  
ւած ճամբաներ՝ փոխադրութեան համար, հարիւր  
հազարաւոր գործարաններ՝ հուժմ նիւթերու ձեւա-  
փոխման եւ անհրաժեշտ իրեղէններու պատրաս-  
տութեան համար, այլեւ ժողովուրդ մը, որուն  
մտավիճակին համապատասխան ըլլալը եւ որը կա-  
րենար ըմբռնել կատարուած յեղաշրջումը եւ աջա-  
կից հանդիսանար անոր եւ ոչ թէ մնար իբր կրաւո-  
րական գործիք: Ահա թէ ի՞նչ բաներու պակասն էր  
որ մեռցուց քոմիւնիզմը դեռ իր խանձարուրին մէջ:

Պօլշեւիզմը պէտք էր գար արդէն իսկ ստեղծը-  
ւած ու կատարելագործուած տնտեսութիւն մը  
ժառանգելու, որովհետեւ այդ է միայն իր գոյու-  
թեան հիմնական պայմանը, քոմիւնիզմը կ'իրա-  
կանացուի միայն՝ արդէն իսկ համայնացուելու  
աստիճան հասունցած տնտեսութեան մը մէջ: Այ-  
լապէս հարկադրուած պիտի ըլլայ դիմելու կապի-  
տալիստներուն օժանդակութեան, մենաշնորհներ  
խոստանալու, շահագործման ազատութիւն տալու,  
քայլ մը որուն հարկադրուեցաւ դիմել վերջ ի վեր-  
ջոյ լէնինի կառավարութիւնը, որով եւ վերջ տըր-  
ուեցաւ ներկայիս քոմիւնիզմը Ռուսիոյ մէջ իրակա-  
նացնելու ցնորքին:

Ռուսիոյ տնտեսապէս յետամնաց վիճակն էր  
ուրեմն որ ձախողեցուց պօլշեւիզմը այդ երկրին  
մէջ եւ հարկադրեց լէնինը իր ամենավերջին ճառին  
մէջ, աւելորդ անգամ եւս խոստովանելու:

«Կօմունիզմի իրականացման համար մեր յոյ-  
սերը չիրականացան՝ ու այսօր մենք ստիպուած

ենի կրկին դիմելու դէպի մանր պուրժուական տըն-  
տեսութիւնը, իբր միակ միջոցը որով պիտի կարե-  
նանք փրկել մեր երկրին քանդուած տնտեսութի-  
ւնը» :

Ասով անգամ մը եւս ապացուցուեցաւ թէ՛ ըն-  
կերվարութիւնը արդիւնքն է տնտեսական որոշ  
պայմաններու, որոնց կատարեալ զարգացումն է որ  
պիտի բերէ իր յաղթանակը, զանդադ այլ հաստա-  
տուն քայլերով՝ ու աստիճանական ընթացքով :

Անգամ մը եւս պարզուեցաւ թէ ընկերվարու-  
թիւնը անխզելի կապերով կապուած է կապիտա-  
լիստական տնտեսութեան հետ, թէ միայն թշուա-  
ռութիւնն ու աղքատութիւնը չեն կրնար բաւարար  
հող նկատուիլ ընկերվարական գործունէութեան եւ  
մանաւանդ անոր հետաւոր խռատներու իրականաց-  
ման համար, եթէ մանաւանդ այդ թշուառութիւնն  
ու աղքատութիւնը ուղղակի եւ անմիջական ար-  
դիւնքը չեն կապիտալիստական տնտեսութեան եւ  
անոր զարգացման :

Այսպէս Ռուսիան աղքատ էր, թշուառ, մերկ  
ու սոված, բայց այդ վիճակը ուղղակի հետեւանքն  
էր ոչ թէ կապիտալիզմի այդ երկրին մէջ ունեցած  
զարգացումին եւ կատարելութեան, այլ թերեւս  
ճիշդ հակառակը, այդ վիճակը արդիւնքն էր կապի-  
տալիզմի Ռուսիոյ մէջ ունեցած յետամնացութեան,  
ու հոն տիրող նախակապիտալիստական տնտեսու-  
թեան, բարձր ճարտարարուեստի չզոյութեան,  
զարգացած եւ դիտակից ու կազմակերպեալ աշխա-  
տաւորութեան բացակայութեան :

Ահա թէ ինչ անհամապատասխան եւ սխալ պայ-  
մաններու տակ էր որ փորձուեցաւ կօմիւնիզմը եւ  
ահա թէ ինչու ձախողեցաւ ան :

## ՊՕԼՇԵՒԻԿՆԵՐԸ

### ԻՐԵՆՔ ԶԻՐԵՆՔ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ

Այժմ մենք դործ ունինք հայ քոմիւնիստներու, եւ անոնց պաշտպան՝ Դաշնակցութեան ձախակողմեան քննադատներուն հետ :

Մենք արդէն որոշ ու իրական փաստեր եւ տուեալներ ունինք մեր ձեռքին մէջ եւ գիտենք թէ՛

Ա.— Քօմիւնիստական շարժումը պօլշեւիկ Ռուսիոյ մէջ կատարեալ ձախողութեան մատնուած է : Այդ երկրին մէջ ստեղծուած անհանդուրժելի կացութիւնը հարկադրած է իր կառավարութեան նորանոր քայլեր առնելու դէպի կապիտալիզմը, յարգելու մասնաւոր սեփականութիւնը, ազատութիւն տալու առեւտուրի եւ դրամադրութի զարգացման եւ հետեւաբար շահագործման, հրաւէր ուղղելու օտար կապիտալիստներուն, հանքեր եւ մենաշնորհներ տալու անոնց եւ արտօնելու որպէսզի Ռուսիոյ հողին վրայ շահագործեն քօմիւնիստ դործաւորին ճակատին քրտինքը :

Բ. — Համաշխարհային յեղափոխութիւն մը յա-  
ռաջացնելու յոյսը՝ որով ծիայն կարելի պիտի ըլլար  
ամրապնդումը՝ Ռուսիոյ մէջ քոմիւնիստական ու-  
ժիմին, չիրականացաւ ու դարձաւ ծաղրանքի ա-  
ռարկայ կապիտալիստներուն, եւ կատարեալ ան-  
տարբերութեան հանդիպեցաւ՝ բոլոր երկիրներու  
ընկերավարականներուն կողմէ :

Գ. — Իրականութեան հետ նաեւ՝ բովանդակ  
աշխարհը դատապարտեց տնտեսական կարգերը  
զէնքի ուժով յեղաշրջելու ուսական բռնի մեթոտ-  
ները, որոնք ամբողջովին վիժեցան, տալով ըս-  
պասուածին հակառակ բացասական արդիւնքներ :

Դ. — Ռուսական ներկայ յեղափոխութիւնը ճա-  
խողեցաւ որովհետեւ համապատասխան չէր տնտե-  
սական զարգացման օրէնքներուն, որովհետեւ Ռու-  
սաստանը տնտեսապէս պատրաստ եւ ի վիճակի չէր  
ընկերավարական վերջնական իտէալները իրականա-  
ցրելու, տրուած ըլլալով ճարտարարուեստի եւ  
մեքենականութեան յետամնացութիւնը եւ անոր իբր  
արդիւնք ժողովուրդին տգիտութիւնը :

Ահա՛ պայմաններու այս անհամապատասխան  
դասաւորութեան հետեւանքով է որ պօլշեւիկեան  
խռատներու ձախողութիւնը տեղի ունեցած է Ռու-  
սիոյ մէջ, ուս ժողովուրդին համար, այն աստի-  
ճան որ պօլշեւիկները իրենք իսկ պօլշեւիկ չեն այս  
պահուս, եւ ո՛չ ֆօմիւնիստ :

Իսկ ի՞նչ եղան միեւնոյն խռատները եւ որքա՞ն  
իրականացան կամ կրնային իրականանալ քոմիւ-  
նիստական տեսակէտները՝ Հայաստանի մէջ, հայ  
ժողովուրդին համար, քարոզուած հայ քոմիւնիստ-



ներէ, հայ պօլշեւիկներէ :

Ամէն բանէ առաջ հարկադրուած ենք ընդունելու թէ՛ ճարտարարուեստական զարգացման տեսակէտէն՝ եթէ Ռուսաստանը Եւրոպայի կամ Ամերիկայի նկատմամբ յետընկաց դաւառ մըն է, Հայաստանը ոչ թէ վերջիններուս՝ այլ Ռուսաստանի հետն իսկ բազմատելով՝ գիւղ մըն ալ չէ, խրհիք մըն է, ոչ իսկ չէն խրճիթ մը, որովհետեւ անոր պատերը քանդուած են, սիւները տապալած եւ կիսով հըրդեհուած աւերակոյտ մըն է :

Իրողութիւնները մերկ են ու պերճախօս :

Փախուստի ճամբայ չկայ :

Մենք այժմ կը բռնենք օձիքէն թէ՛ հայ պօլշեւիկներուն Հայաստանի մէջ գտնուող եւ թէ անոնց շողերովը գունափոխ՝ արտասահմանի նորընծաներուն եւ անոնց կուտանք հետեւեալ պարզ հարցումները ու կ'ունենանք զոյգ մը խօսակցութիւն :

1.— Ծի՞շղ է որ դուք ուղեցիք եւ յաջողեցաք տապալել Հայաստանի նախորդ հանրապետական կառավարութիւնը եւ ինչո՞ւ արդեօք :

2.— Ծի՞շղ է որ ձեր միակ ու գերագոյն մտահոգութիւնն էր՝ քօմիւնիզմը տարածել հայ ժողովուրդին մէջ եւ այդ ուղղութեամբ քայլեր ալ առիք, ինչո՞ւ եւ ինչպէս արդեօք :

Այս մեր առաջարկները այնքան պարզ ու բացայայտ են որ ինքնին հարց իսկ չեն, այլ կատարուած իրողութիւններ՝ որոնց վերյիշումը սակայն մեզ պիտի տայ նոր լուսարանութիւններ :

Ահա եւ մեր հարցին պատասխանը՝ հայ պօլշեւիկներէն :

1.— Այո՛, մենք մեր յամառ, երկարատեւ մերթ  
դաւադրական մերթ ալ յայտնի գործունէութեամբ  
եւ մեզ հետ ունենալով մեր ուսու եւ մուսուլման ըն-  
կերները յաջողեցանք տապալել Հայաստանի նա-  
խորդ կառավարութիւնը :

2.— Տապալեցինք Հայաստանի կառավարու-  
թիւնը՝ որովհետեւ ան կը գտնուէր Գաշնակցու-  
թեան ձեռքը որ «գեղին» ընկերութարականներուն կը  
պատկանի եւ իրապէս պուրժուական է, որովհետեւ  
ան յարաբերութիւնը չէր ուզեր խզել կապիտալիստ  
Եւրոպայի եւ Ամերիկայի հետ եւ որովհետեւ ի մի  
բան չէր ուզեր ֆոմիւնիզմը իրականացնել հայ աշ-  
խատաւորութեան համար :

Պօլշեւիկներու կողմէ մեր շարադրած այս պա-  
տասխանը այնքան հարազատ է եւ զերծ չափազան-  
ցութենէ որ պատահած հայ պօլշեւիկ մը, պիտի  
ուզէ վաւերացնել զայն, եթէ անչուչտ մենք բաւա-  
կան չնկատենք իրենց կողմէ արդէն իսկ երեւցած  
նոյնիմաստ բազմաթիւ դրութիւնները, որոնք զեղ-  
նած տերեւներու նման եւ զպրոցականի շարադրելու  
կարողութենէն իսկ զուրկ տղոց կողմէ ցանցնուած  
են հոս ու հոն :

Այժմ ներողութիւն խնդրելով մեր ընթերցող-  
ներէն, պահ մը խօսքը պիտի տանք քօմիւնիստնե-  
րուն, պօլշեւիկ պարագլուխներուն, որպէսզի իրենք  
ըսեն ու խոստովանին թէ երբ Հայաստանի նախկին  
կառավարութիւնը տապալեցին որպէսզի ֆոմիւնիզմ  
տարածեն Հայաստանի մէջ, ինչե՛ր գտան այդ երկ-  
րին մէջ եւ ինչպէս ու ինչքան իրականացուցին ի-  
րենց պօլշեւիկեան սկզբունքները : Հայ պօլշեւիկ-

ներուն դէմ աւելի ջախջախիչ պատասխան քան իրենց ստորագրածները, չէր կրնար ըլլալ: Անոնք պատմական մնալու սահմանուած մէկ մէկ փաստաթղթեր են:

Հայաստանի առաջին սովիէթական խորհուրդին վարչապետ Պ. Կասեան, որ թաթար եւ ուսս գինուորներուն սուիններովը Հայաստան մտաւ քոմիւնիզմ տարածելու, դեռ երկու ամիս չէր անցած, ի մէջ այլոց հետեւեալ խիստ ուշադրաւ յայտարարութիւնները ըրաւ, Երեւանի քոմիսէրներու խորհուրդին, ներկայութեան, Հայաստանի ներքին կացութեան մասին, իր տուած մէկ զեկոյցով:

«Երկիրը աւերուած է, երկաթուղին բոլորովին փայփայուած է, պարենաւորման մթերանոցները պարապ են, վառելիք չկայ:

«Հայաստանի մէջ կազմակերպուած բանւորութիւն չկայ, խոշոր արդիւնաբերութիւն չկայ եւ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՈՐԾԱԴՐԵԼ ԿԱՅՈՒՆ ՔՕՄԻՒՆԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

«Խոշոր գործարանները անշուշտ ազգայնացած են քայց անոնց թիւը այնքան քիչ է որ կարելի է համրել մատի վրայ:

«Հայաստանը առաւելապէս գիւղացիական երկիր է, մանր արդիւնաբերութեամբ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՈՐԾԱԴՐԵԼ ՍՈՎԻԷՏԻՍԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՆՈՅՆԻՍԿ ՍՈՎԻԷՏԻՍԿԱՆ ԱՏՐՊԷՃԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»:

Կարելի չէ<sup>o</sup>: Բայց չէ<sup>o</sup> որ դուք այդ ու միայն այդ նպատակով Հայաստան մտաք եւ տապալեցիք անոր կառավարութիւնը...:

Կրնայի՞ք երեւակայել, ամբաստանութեան ու դատապարտութեան աւելի ծանր խօսք հայ քօմիւնիստներուն կատարած դործին դէմ, քան իրենց պետին այդ յայտարարութիւնները...

Այլ առակ լուարուք:

Հայաստանի սովիէթական խորհուրդին նոր վարչապետ Պ. Միասնիկեան Հայաստանի քաղաքական կացութեան մասին իր տեսութիւնները պարզելով կ'ըսէ.

«Վերջ ի վերջոյ ի՛նչ է ֆօմիւնիզմը աշխատանքութեան համար: Գիւղացիի համար՝ ան՝ գիւղացիութիւնն է առանց շահագործման, իսկ բանւորի համար կուշտ կեանքն է»:

Տեսա՞ք այժմ որքան պարզ ու խեղճուկրակ բան է եղեր քօմիւնիզմը: Այս հաշուով երբ գիւղացի մը երկու եղ եւ քիչ մը հող ունենայ վարէ ու ցանէ, ինչպէս եւ բանւոր մը երբ 8-10 ժամ օրական աշխատելով քիչ մը կանոնաւոր վարձք ստանայ եւ կուշտ ապրի, երկուքն ալ իսկոյն ֆօմիւնիստ?? եղած կ'ըլլան: Իրապէս մարդ կը մեղքնայ թէ ի՞նչպէս՝ ամբողջ կապիտալիզմը դողացնող եւ «համաշխարհային յեղափոխութիւն» պատգամող սօլշեւիկ քօմիւնիստական շարժումը՝ եկեր ու կձկտեր է յիշեալ համեստ բանաձեւին տակ: Բայց արդէն ամէն ոք կը հասկնայ թէ վեանքը, իրական ու տնտեսական պայմաններն են որ այդպէս կը համեստացնեն ամենէն անուղղայ յօխորաններն անդամ: Դեռ լսենք Պ. Միասնիկեանը:

«Այստեղ կացութիւնն ուրիշ է, քան Ռուսաստան: Ռուսաստան կար խոշոր պուրժուազի, դասա-

կարգային շերտաւորումը մեծ էր : Հայաստանի մէջ  
խոշոր պուրժուազի չկայ, մտաւորականութիւնը  
ուրիշ բնոյթ կը կրէ քան Ռուսաստանի մէջ : Գիւ-  
ղացիութիւնը նոյնպէս շերտաւորուած չէ : Տիրող  
տիպը միջին գիւղացիութիւնն է . քարտարագործա-  
կան պրօլէտարիա չունինք : Եղած սակաւաթիւ բան-  
ւորութիւնը կապուած է գիւղի հետ : ԱՌԱՅԺՄ  
ՄԵՆՔ ԶԵՆՔ ԿԱՐՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆՕՐԷՆ ՇԵՐ-  
ՏԱՒՈՐԵԼ ԳԻՒՂԱՅԻՈՒԹԻՒՆԸ :

*Ուշադրութիւն ընենք հետեւեալ տողերուն եւս ,  
որոնք գլուխ դործոց են ինքնին .*

«Մեր գործը տնտեսական շինարարական խրն-  
դիրն է : ԺԱՄԱՆԱԿԸ ԶԷ ԹԷՕՐԻԱՆԵՐՈՒ : Քօմիւ-  
նիզմը , միջազգայնականութիւնը տօնական խօսքեր  
չեն : Քօմիւնիզմ , ինտերնացիօնալ կը նշանակէ գիւ-  
ղացիին համար խաղաղութիւն , հող , սերմնցու ,  
կուտ կերակուր : Այս քօմիւնիզմին մենք պէտք է  
ծառայենք» :

*Ո՞վ դուն Աստուծոյ համեստ ծառան , հասցա ք-  
սէ՛ , թէ՛ ձեզմէ առաջ արիւն քրտինքով աշխատան-  
քի լծուած Հայաստանի հանրապետական կառավա-  
րութիւնը ի՞նչ բանի կը ծառայէր . . . Ու եթէ դուք  
այդչափ արիւնէ , կոտորածէ ու աւերներէ յետոյ  
եկած էք խոստովանելու թէ՛ հայ աշխարհին մէջ  
ուրիշ բան կարելի չէ ընել , բայց թէ՛ ձեր նախորդ  
կառավարութեան ընելիքները , այն ատեն ո՞վ պի-  
տի ըլլայ ձեզ պատասխանատուութեան հրաւիրող  
եւ անարդանքի սիւնին դամոզը :*

*Ի լրումն ամենեցուն , լսենք նաեւ թէ՛ պօլշե-  
ւիզմի Աստուածը՝ Լէնին ինչ խորհուրդներ կուտայ*

իր հայ եղբայրակիցներուն եւ ինչպէս կը յանդիմանէ զանոնք՝ կատարուած ծայրայեղ, սխալ ու կապկորէն ընդօրինակուած քայլերուն համար :

«Ամենէն կարելորը այն է որ անդրկովկասի քօմիւնիստները հասկնան իրենց կացութեան առանձնայատկութիւնը, իրենց հանրապետութիւններու կարգուսարքը, որ տարբեր է ոուս հանրապետութեան կացութենէն ու պայմաններէն, ՀԱՍԿՆԱՆ ՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ է ՈԶ ԹԷ ԸՆԴՕՐԻՆԱԿԵԼ ՄԵՐ ԹԱՔԹԻՔԸ, ԱՅԼ ՄՏԱԾՈՒԱԾ ԿԵՐՊՈՎ, ՉԵՒԱՓՈԽԵԼ ԶԱՅՆ :

«Կովկասը կարող է աւելի շատ եւ աւելի հեշտ «համակեցութիւն» եւ ապրանքային փոխանակութիւն հաստատել դրամատիրական արեւմուտփի հետ :

«Այս չէ ամբողջ գանազանութիւնը : Բայց մատնանշուած գանազանութիւնները բաւական են հասկրնալու համար որ ԱՆՀՐԱԺԵՇՏ է ԱՅԼ ԹԱՔԹԻՔ :

«Աւելի մեղմութիւն, զգուշաւորութիւն, գիջողութիւն դէպի մանր պուրժուագին մտաւորականութիւնը, եւ գիւղացիութիւնը» :

Այս անդուգական տողերով Լէնին խոստովանած կ'ըլլայ ու կը զատապարտէ միանգամայն բոլոր այն վայրագ մեթոտները զորս զործ դրին հայ քօմիւնիստները իրենց ցեղակիցներուն վրայ, յանուն վարդապետութեան մը, որուն հռչակաւոր տեսարանին խիղճն անգամ ընդվզած է, եւ որ հարկադրեց Հայաստանի ժողովուրդը ձիւնին ու բուքին, մերկ ոտարորիկ սարերը բարձրանալ, քան թէ

ենթարկուիլ պօլշեւիկեան անմարդկային հալածանքներուն :

Արդարեւ եթէ Պ. Կասեանի օրուան հայ սովիէթը Օթարպէկեան սարսափներով չահաբեկէր ողջ հայութիւնը, Լէնին հարկ պիտի չտեսնար ո՛չ փոխելու Կասեանի դահլիճը, եւ ոչ ալ նոր վարչապետ Պ. Միասնիկեանի միջոցաւ մեղմութեան այս խրատները տալու :

Արտասահմանի հայ քոմիւնիստները որոնք չգիտնալ կը ձեւացնեն վերջին հակապօլշեւիկ շարժման պատճառները եւ Դաշնակցութիւնը կ'ամբաստանեն, թող լաւ մը կարգան Լէնինի այս խիստ կարեւոր նամակը, ստանալու համար իրենց արժանի պատասխանը :

«Ո՛չ թէ պէտք է ընդօրինակել մեր թափափր, կը շարունակէ Լէնին, այլ անկախօրէն պէտք է խորհրդածել նոր իւրատեսակութեան, պայմաններու եւ արդիւնքներու պատնառներու մասին : Չե՞զ ՄՕՏ ՊԷՏՔ է ԻՐԱԳՈՐԾԵԼ 1917 եւ 1921 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՓՈՐՁԻ ՈՉ ԹԷ ՏԱՌԸ, ԱՅԼ ՈԳԻՆ, ՄԻՏՔԸ, ԴԱՍԵՐԸ» :

Եւ սակայն ո՞վ այսպէս շարունակաբար խելացի դասեր պիտի տայ Հայաստանի պօլշեւիկ դասատուներուն, Լէնին շատ հեռու է, իսկ հայոց երկիրը նոր փորձերու չի դիմանար այլեւս . . . :

## ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ՝ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ՊՕԼՇԵՒԻԿՆԵՐՈՒՆ

Նախորդ գրուած քներով հասկցանք երկու պարզ ճշմարտութիւններ.

Ա.— Ռուս պօլշեւիկները փորձեցին իրականացնել կօմիւնիզմը իրենց երկրին եւ համաշխարհային յեղափոխութիւնը՝ ընդհանուր աշխարհի մէջ, բայց ձախողեցան եւ իրենց ամենամեծ սարազլուխը՝ Լէնինի միջոցաւ եկան խոստովանելու թէ՛ «համաշխարհային յեղափոխութիւնը չիրականացաւ, կօմիւնիզմը ձախողեցաւ Ռուսաստանի մէջ, մեր փրկութիւնը կը կայանայ այժմ՝ վերադարձին մէջ կրկին՝ դէպի մանր պուրժուական տնտեսութիւնը» :

Բ.— Հայ պօլշեւիկները հետեւելով իրենց ուսուցողափարակիցներուն, փորձեցին Հայաստանի մէջ իրականացնել կօմիւնիզմը, բայց իրենք ալ իրենց կարգին ձախողութեան մատնուելով՝ իրենց երկու վարչապետներուն՝ Կասեանի եւ Միասնիկեանի



րերնով եկան խոստովանելու թէ՛ «Հայաստանի մէջ կօմիւնիզմի հող չկայ, թէ կօմիւնիզմը հայ գիւղացիին համար ներկայիս կը նշանակէ անօթի չմեռնիլ» :

Տեսնենք թէ այժմ ինչե՛ր կ'ըսեն՝ կօմիւնիզմը Հայաստանի մէջ իրագործուած կարծող՝ արտասահմանեան հայ պօլշեւիկացածները :

Ի՞նչ... կը խորհիք թէ՛ կօմիւնիզմի ձախողութեան մասին Լէնին եւ հայ պօլշեւիկ պարագլուխները իրենց խոստովանութեան խօսքը ըսելէ յետոյ, այլեւս ըսելիք բան չի՞ մնար՝ արտասահմանեան յետին ժամուն պօլշեւիկացածներուն : Կը սխալիք : Լսեցէ՛ք, ահա իրենց պատգամը, որ կը հնչէ Քօլօմպօսի հեռաւոր աշխարհէն :

«Մենք պիտի ըմբռնենք այս տարրական իրողութիւնը որ երբ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԴԱՐՁԵԼ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԱՊԱԼՄԱՆ ԽՆԴԻՐ առհասարակ, դրանով հայկական դատի ճակատագիրը աւելի որոշակի եւ անքակտելիօրէն կապուել է ռուսական յեղափոխութեան ճակատագրի հետ» : 4 ապրիլ, 1921, Ե. Հ. յօդուած Ս. Ս.ի :

Յարգելի յօդուածագիրը թող ներողամիտ ըլլայ, եթէ խեղճ հայ ժողովուրդը իրեն նման չէ կըրցած ըմբռնել թէ՛ «Կապիտալի տապալումը Ռուսաստանում դարձել է համաշխարհային կապիտալի տապալման խնդիր առհասարակ» . թող ներողամիտ ըլլայ կ'ըսենք, որովհետեւ փոքրիկ ու փկար հայ ժողովուրդէն առաջ, նոյն ինքն լայնածաւալ Ռուսիոյ կօմիւնիստական կառավարութեան ղեկավար,

սօւլշեւիզմի հիմնադիրը եւ անոր արժանաւոր տեսարան Լէնին անգամ՝ իր կարգին, չէ կրցած ըմբռնել մեր յարգելի յօդուածագիրին յիշած «տարրական իրողութիւնը» թէ՛ տապալած է?? կամ տապալուելու վրայ??? ոչ միայն ուսական, այլ «համաշխարհային կապիտալը»: Կը զարմանա՞ք տեսնելով սօլշեւիզմի աստուծուն Լէնինի կատարեալ անտեղեակութիւնը՝ իր իսկ ստեղծած շարժման գտած անսպասելի յաջողութեան մասին՝ ինչպէս որ մեզի հաւատացնել կ'ուզէ մեր հայ յօդուածագիրը, բայց ահա Լէնինի բուն խօսքերը.

«Ըսած եմք ու կը կրկնենք հիմա քէ մեմք համաշխարհային յեղափոխութեան եղբայր միայն մէկ օղակը կը կազմենք եւ ՊՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՄԻԱՅՆ ՄԵՐ ԶԱՆՔԵՐՈՎ ՏԱՊԱԼԵԼՈՒ ՅԱԻԱԿՆՈՒԹԻՒՆԸ ԵՐԲԵՔ ՈՒՆԵՑԱԾ ԶԵՆՔ»:

Լէնին, որ իր յոյսը կտրած «համաշխարհային յեղափոխութենէն» ու «կապիտալիզմի տապալումէն» սկսած է դիմել Եւրոպայի եւ Ամերիկայի կապիտալիստներուն որպէսզի գան կրկին կապիտալիզմը հաստատեն իր երկրին մէջ, արդեօք որքա՞ն, որքա՞ն պիտի ուրախանայ խեղճ մարդը, եւ ի՞նչ հաճելի անակնկալ մը պիտի ունենայ, երբ օր մը, առտուն կանուխ, շարագուշակ երազանքի մը ցաւատանջ խոկումներէն յետոյ, յանկարծ ստանայ թարգմանութիւնը հայու մը յօդուածին որ իրեն պիտի աւետէ թէ հասեալ է ժամը փրկութեան, յորում «պուրժուագիւտան ձեր ջանքերով տապալելը» ոչ միայն «յաւակնութիւն» մը չէ, այլ կատարուած իրողութիւն մըն է, որովհետեւ «ԿԱՊԻՏԱԼԻ ՏԱ-

ՊԱՆՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԴԱՐՁԵԼ Է ՀԱՄԱՇ-  
ԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԱՊԱԼՄԱՆ ԽՆԴԻՐ ԱՌ-  
ՀԱՍԱՐԱԿ» եւ թէ Ռուսիան ոչ թէ մնացեր է որպէս  
սոսկական «օղակ» մը եւ այն ալ շղթայէն փրթած  
վար ինկած օղակ մը, ինչպէս յուսահատօրէն կը  
խորհի Լէնին, ալլ այդ օղակը վարակեր է ամբողջ  
շղթան, որ այժմ ահա կը բոցավառի արեւելեան  
վառ կարմիրովը, ինչու որ ռուսական յեղափոխու-  
թիւնը ստացեր է «համաշխարհային արժէք» :

Ո՞ւր կը մնայ Լէնինի մեծութիւնը եւ յանուն  
կոմունիզմի տիրապետութեան կատարած իր աշ-  
խատանքին արժէքը :

Եթէ Լէնին կոմունիզմը ներկայացուց որպէս  
ծրագիր ու անոր գործադրութեան մէջ անճրկե-  
ցաւ, հայ յօդուածագիրը զայն կը ներկայացնէ որ-  
պէս կատարուած իրողութիւն, հոգ չէ թէ իր երե-  
ւակայութեան մէջ ըլլայ ան : Ահա թէ ո՞ւր է իր  
մեծութիւնը :

Արդ՝ մենք թողունք Լէնինը որ դեռ մրափէ իր  
անգիտակից քունով, մինչեւ որ արտասահմանէն  
պօլշեւիկացած հայէ մը ստանայ աւետիսը իր ցա-  
խաւեր գործին անակնկալ «յաջողութեանը», իսկ  
մենք լսենք թէ մեր տեսանողը դեռ ինչ անաթեմա-  
ներ կը կարդայ մեր գլխուն վրէժխնդիր Եհովայի  
մը բարբառով .

«ԿՈՐԱԾ ԵՆՔ ՄԵՆՔ ՀԱՅԵՐՄ, եթէ չկարողա-  
նանք ըմբռնել ռուսական յեղափոխութեան ՀԱՄԱՇ-  
ԽԱՐՀԱՅԻՆ ԱՐԺԷՔԸ» (նոյն յօդուածէն) :

Բայց մեր մե՞ղքը ինչ է որ պիտի «կորսուինք»  
անոր համար որ չենք ըմբռնած մեր ըմբռնողութե-

նէն վեր բաները: Հապա ինչ ըսենք սա Լէնինին որ նոյնպէս չէ ըմբռներ իր կատարած յեղափոխութեան «համաշխարհային արժէքը», եւ իր թաթիկներուն վրայ համեստօրէն ետ կը նահանջէ, մինչեւ՝ իր 38 միլիոն ոուս սովահար ազգակիցներուն համար ողորմութիւն մուրալու աստիճան, այն կապիտալիստ պետութիւններէն որոնք հայ տեսանողին մըտքին մէջ վաղուց տապալած???? էին արդէն: Մեր յարգելի յօդուածագիրը ինչո՞ւ կը սպառնայ կորած հոչակել իր ազգը, թերահաւատութեան մեղքի մը համար, որուն նախակարապետը ամենէն առաջ ինքը Լէնինն է...:

Ու դեռ ամենուրեք «համաշխարհային յեղափոխութիւն» մը տեսնելու այդ թշուառագոյն երազանքն է որ Բարելոնեան խառնակութիւն մը յառաջ բերած է կարգ մը մարդոց մտքերուն մէջ:

«Հայ ազատագրութեան աշտարակաշինութիւնը՝ արհամարհելով քաղաքական բարձունքները՝ թեւակոխում է դէպի ԸՆԿԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԿԻՆՔՆԵՐԸ» կը պատգամէ նոյն տեսանողը, որ եթէ վար իջնայ իր մտքին մէջ բարձրացուցած «աշտարակէն» եւ խօսի մեր լեզուով, ըսել կ'ուզէ պարզապէս թէ «Հայաստանը ներկայիս պօլշեւիկներու տիրապետութեան ներքեւ ոչ միայն «քաղաքական» ազատութեան է տիրացեր, այլ եւ մտեր է «ընկերային, տնտեսական??? ազատութեան եւ կօմիւնիզմի» տիրապետութեան մէջ...:

Արդեօք ի՞նչ պիտի ըսեն մեր ազգակիցները, որոնք կը տապալակին Հայաստանի ահաւոր զրկանքներուն եւ թշուառութեան մէջ, երբ լսեն խօսքերը

սա կուշտ փորով մուէզզինին, որ «աշտարակ»ին ծայրէն «տնտեսական ազատութեան» եւ կօմմիւնիզմի էզանը կը կարդայ իրենց ցաւատանջ գլուխներուն :

Անգամ մըն ալ եւ երիցս կրկնենք աշտարակեան սլատգամները՝ թէ Հայաստանը տնտեսական ազատութեան մէջ է թեւակոխեր, եւ բնականաբար կօմմիւնիզմն ալ Հայաստանի մէջ... (ականջը խօսի Հայաստանի սարերուն վրայ «տնտեսապէս ազատ» այլ խոտ կրծող որբերուն եւ այրիներուն)... Այս աշտարակային դրախտարոյր խօսքերուն հէտ նաեւ ինչպէ՛ս չյիշենք Մարդոյ որդուն խօսքը՝

«Հազար երանի հողով աղքատներուն...» :

Բայց կ'երեւայ թէ՛ մեր մուէզզինին ձայնը, աշտարակին ամպերուն հաւասարող բարձրութեան պատճառով չէ հասեր մինչեւ Հայաստանի սօլչելիկ վարչապետները, որոնցմէ առաջինը Պ. Կասեան ահա թէ ի՞նչ կ'ըսէ մեր մուէզզինի կողմէ «տնտեսական ազատութեան» եւ կօմմիւնիզմի մէջ թաթխուած Հայաստանի համար :

«Հայաստանի մէջ կազմակերպուած բանւորութիւն չկայ, խոռոք արդիւնաբերութիւն չկայ եւ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՈՐԾԱԴՐԵԼ ԿԱՅՈՒՆ ԿՕՄԻՒՆԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ : Հայաստան առաւելապէս գիւղացիական երկիր է, մանր արդիւնաբերութեամբ : ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՈՐԾԱԴՐԵԼ ՍՈՎԻԵՒԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՅՆԻՍԿ ՍՈՎԻԵՒԱԿԱՆ ԱՏՐՊԷՃԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ» :

Այժմ տեսա՞ք թէ ի՞նչ է եղեր «տնտեսական ա-

ազատութեան մէջ թեւակոխած» Հայաստանի վիճակը :

Անդամ մըն ալ մէջ բերենք պօլշեւիկ Հայաստանի երկրորդ վարչապետ, Պ. Միասնիկեանի վրկայութիւնը, «տնտեսական ազատութեան մէջ թեւակոխած» Հայաստանի մասին,

«Այստեղ կացութիւնը ուրիշ է քան Ռուսաստանը: Ռուսաստան կար խոշոր պուրժուազի, դասակարգային շերտաւորումը մեծ էր: Հայաստանի մէջ խոշոր պուրժուազի չկայ, մտաւորականութիւնը ուրիշ բնոյթ կը կրէ քան Ռուսաստանի մէջ: Գիւղացիութիւնը նոյնպէս շերտաւորուած չէ: ԱՌԱՅԺՄ ՄԵՆՔ ԶԵՆՔ ԿԱՐՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆՕՐԷՆ ՇԵՐՏԱԻՈՐԵԼ ԳԻՒՂԱՅԻՈՒԹԻՒՆԸ»:

Իսկ Պ. Միասնիկեանի վարժիքով «կօմիւնիզմը եւ տնտեսական ազատութիւնը» ներկայիս հայ ժողովուրդին համար, «տօնական խօսքեր» չեն, ոչ ալ անշուշտ՝ աշտարակային պատգամներ, այլ «ԿՕՄԻՒՆԻԶՄ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԳԻՒՂԱՅԻՒՆ ՀԱՄԱՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, ՀՈՂ, ՍԵՄՆՑՈՒ ԵՒ ԿՈՒՇՏ ԿԵՐԱԿՈՒՐ»:

Տեսա՞ք այժմ որքան տարբերութիւն կայ եղեր հողին վրայ կեցած խօսողին եւ աշտարակին ծայրէն պատգամողին միջեւ...:

## ՊՕԼՇԵՒԻԶՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ ՄԻՄԻԱՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑ Է ԵՒ ՈՉ ԵՐԲԵՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Մենք տեսանք թէ պօլշեւիզմը, քոմիւնիզմը, մէկ խօսքով ընկերովարութեան հեռաւոր ու ամբողջական իտէալները տարածելու առաքելութիւնը՝ քարուքանդ, պրիշակ դարձած Հայաստանի մէջ եւ հարիւր հազարներով որբեւայրիներէ բաղկացած հայ ժողովուրդին համար՝ դարձաւ իսկական «Մապլարեան» առաքելութիւն մը, որուն անմօրուս հեղինակները՝ համեւրոպական կապիտալը?? տապալած ըլլալու դոհունակութեամբ՝ իրենք զիրենք դարձուցին մէկ մէկ հարազատ հերոսներ՝ Սէրվանտէսի ծանօթ վէպին:

Այդ ծիծաղելի այլ բիւր անգամ ողբալի դերին մէջ գտնուող Հայաստանի հայ պօլշեւիկները եւ արտասահմանի իրենց վոյր վկաները չկրցան զանազանել եւ իրարու հետ շփոթեցին՝ հայ ժողովուրդի քաղաքական եւ հայ ժողովուրդի տնտեսական շահերը:

Հայաստանի հայ պօլշելիկները եւ արտասահմանի մէջ իրենց հետեւորդները ուղեցին պօլշելիզմը, քօմիւնիզմը ներկայացնել հայ ժողովուրդին համար որպէս տնտեսական անհրաժեշտութիւն մը : Անոնցմէ ոմանք կուրօրէն հաւատացին թէ՛ հայ ժողովուրդին տնտեսական դրութիւնը հասունցեր է, զարգացեր ու բարձրացեր է մինչեւ այն աստիճանը ուր անհրաժեշտութիւն մըն է այլեւս հայկական կապիտալիզմի?? տապալումը եւ քօմիւնիզմի տիրապետութիւնը : Իսկ անոնցմէ կարգ մը ուրիշներ ալ միամտութիւնը ունեցան կարծելու թէ՛ քօմիւնիզմը վարելի է տարածել նաեւ ու ամենէն աւելի Հայաստանի նման տնտեսապէս քայքայուած ու յետամնաց երկիրներու մէջ, որոնք շնորհիւ իրենց աղքատութեան՝ ի վիճակի չեն կապիտալիստական ուժեղ ընդդիմութիւն մը ցոյց տալու իրենց խտէպներուն իրագործման դէմ : Ծիշդ նման այն մարդուն՝ որ սուրը աջ ու ձախ օդին մէջ կը տարուբերէ եւ որովհետեւ ընդդիմութեան չհանդիպիր, կը խորհի թէ աշխարհին յաղթած է ու բոլոր մարդիկ նուաճած . . . :

Բայց միթէ պօլշելիզմը բնաւ առնչութիւն չունէ՞ր մեզ հետ եւ մենք պարտաւորուած չէինք շրիման մտնելու անոր հետ :— Առնչութիւն ունէր ու այդ՝ միմիայն քաղաքական տեսակէտէն :

Հոս արդարութեան, իրաւունքի, ազգերու նըւիրական ազատութեան մասին խօսք չի կրնար ըլլալ, որովհետեւ աշխարհիս մէջ պիտի չգտնուի թերեւս պարկեշտ մէկը՝ որ իրաւունք տայ հզօրին՝ բռնարարելու տկարին իրաւունքը, միջամուխ ըլլա



լու անոր ներքին գործերուն, խլելու անոր ազատութիւնը և իրեն ենթարկելու զայն : Ո՛չ, հոս արդարութեան հետ գործ չունինք մենք, այլ քաղաքականութեան հետ, տիպլումասիի հետ, որ արեւմտեան ըլլայ թէ արեւելեան, մեծ ազգին ըլլայ թէ փոքրին, ընկերավարական թէ հակընկերավարական՝ այն իմաստով որ հասկցուած է ցայժմ դիւանագիտութիւնը, խարդախ է, անարդար է, բռնաւոր է, քսու, այլ քան խիղճ ու սրտնիկ :

Ահա նման դիւանագիտութեան մը հետ էր որ գործ ունէինք մենք, որ մեզի կը ներկայանար իբր կատարեալ ռուսական վտանգ մը, որուն դէմ մենք անգոր էինք մարտնչելու եւ որուն հետ մենք ուղէինք թէ չուղէինք, մեր կամքէն անկախ հարկադրուած էինք իրաւախոհութեան մը դալ, համաձայնեցնելու ջանալ մեր շահերը անոնցինն եւ եթէ ոչ շահով՝ այլ գոնէ նուազագոյն վնասով մը սրծիլ անկէ :

Կրկնենք անգամ մըն ալ՝ սուլշեւիկ կառավարութեան հետ մեր այս իրաւախոհութիւնը ոչ մէկ ատեն արդիւնքը եւ սրահանջը չէր Հայաստանի տընտեսական դրութեան, որ իբր այդպիսին մղոններով ու աշխարհներով հեռու էր սուլշեւիզմի եւ քոմիւնիզմի գաղափարէն՝ բառին ռուսական ըմբռնողութեամբ :

Կը սխալին չարաչար նաեւ անոնք որ մ'ենթադրեն թէ Հայաստանը կրնար կամ կրնայ ապրիլ առանձինն, առանց կարեւորութիւն տալու իր մեծ դրացիին ու անոր հետ հասկացողութեան մը դալու : Այո՛, պէտք էր եւ ուշ չէ տակաւին գտնելու այդ

հասկացողութեան եզրը: Հայաստանի բնական աշխարհագրական դիրքը եւ քաղաքական ճակատագիրը այդ ընել կը բռնադատեն մեզ:

Ո՛վ չըմբռնէր կամ դէժ վերթայ ոռւսական վրտանգին կը վտանգէ հայութեան բախտը:

Ո՛վ ոռւսական վտանգը կ'ըմբռնէ իբր տնտեսական պահանջ հայ ժողովուրդին համար, նոյնպէս կը խորտակէ հայութեան բախտը:

Իսկ ով կ'ըմբռնէ ոռւս պօլշեւիկեան վտանգը որպէս Հայաստանի համար քաղաքական հարց մը եւ կը ջանայ ամէն միջոցաւ անոր առաջքը առնել, գոհացնել զայն առանց մեծ կորուստի եւ կամ թերեւս, ո՞վ գիտէ երկուստեք շահաւոր դուրս գալու ձեւով, ահա ա՛ն է որ պիտի փրկէ հայութեան բախտը:

Պէտք է համաձայնիլ ոռւս պօլշեւիկներուն հետ՝ ոչ թէ Հայաստանի մէջ քօմիւնիզմը տարածելու մանկամիտ ակնկալութեամբ, այլ միայն եւ միմիայն ու պարզապէս մեր պետութեան քաղաքական անկախութիւնը փրկելու համար:

Պէտք է հայերը հաշտուին պօլշեւիկներուն հետ այնպէս ինչպէս իրենք պօլշեւիկները հաշտութիւն կնքեցին Մոսկովայի Քէմալին հետ: Ու ինչպէս որ Լէնինո-Քէմալ համաձայնութեան հետեւանքով Լէնին մոսկովման ջղարձաւ, սարըխ չիաթթեց իր գլուխը եւ ոչ ալ Քէմալը քօմիւնիստ դարձաւ, նոյնպէս եւ մենք պիտի համաձայնինք ոռւսին հետ՝ առաջնորդուելով սոսկ քաղաքական ակնկալութեամբ, առանց հայ ըլլալէ դադրելու եւ հայութեան շահերը վտանգելու:

Մեր Հայաստանի անկախութեան եւ մեր ժողովուրդին փրկութեան համար՝ ինչո՞ւ չէ, եթէ հարկ ըլլայ Լէնինի հետն ալ կը պագտուինք, Քէմալին հետ ալ: Եթէ հարկ ըլլայ փոխել պետութեան ձեւը սովիէթականի եւ տնտեսական ձեւը քոմիւնիստականի, ինչո՞ւ չէ, այդ ալ կ'ընենք, ինչպէս որ է ներկայիս, որովհետեւ այդ պետութիւնը, այդ տնտեսութիւնը ժողովուրդին համար են ստեղծուած, նախ ժողովուրդը պէտք է փրկել:

Եւ սակայն ոուսին հետ համաձայնինք թէ Համաձայնութեան, Լէնինի ձեռքը սեղմենք թէ Քէմալին, պօլշեւիկեան ըլլանք թէ ոչ պօլշեւիկեան, մէկ ճշմարտութիւն կայ ու կը մնայ մեզի համար, պարզ, արեւի նման պայծառ՝ այն է թէ՛ հայ ժողովուրդին քաղաքական անկախութիւնը վտանգուած է, պէտք է փրկել զայն, ինչ ձեւով ալ որ ըլլայ:

Եթէ հայ պօլշեւիկները նախապէս տողորուած ըլլային Հայաստանի քաղաքական անկախութեան այս գերազոյն մտահոգութիւնով՝ եւ ըստ այնմ իրենց բարեկամութիւնը կնքէին ուս պօլշեւիկներուն եւ կամ թաթարներուն հետ, այն ատեն ոչ մէկ տարակարծութիւն պիտի ունենային Հայաստանի օրինաւոր հանրապետական կառավարութեան վարիչներուն հետ, որոնք առանց այլեւայլի պիտի համաձայնէին հայ պօլշեւիկներուն հետ, որպէսզի այս կամ այն ձեւափոխութեան ենթարկուէր Հայաստանի պետական եւ տնտեսական դրութիւնը:

Բայց այդպէս չվարուեցան անոնք, այլ իրենց ազգակիցներուն հետ հաշտուելէ աւելի՝ նախապա-

տիւ սեպեցին արիւնարբու եւ մեր դարաւոր թշնամի թաթարին հետ եւ իրենց սուտերովը եւ զրպարտութիւններով առաւելապէս՝ հայ կառավարութեան դէմ լարուած ոռւսերուն հետ միանալ եւ գալ հալածելու այն կաղձակերպութիւնը՝ որ մեր պետութեան քաղաքական անկախութեան համար տասնեակ տարիներ մարտնչած էր, որ իրենց նման ընկերվարական խոչալներու հաւատացող էր եւ որուն կողմէ իրենց ազգավնաս քայլերուն դէմ ցոյց տրուած ընդդիմութիւնն ալ նոյն այդ հայութեան քաղաքականօրէն անկախութեան գերագոյն մտահոգութենէն էր թելադրուած :

Այդպէս չվարուեցան հայ պօլշեւիկները որովհետեւ զիրենք մտահոգողը հայութեան քաղաքական անկախութիւնը չէր : Աւելին եւս՝ հայ ժողովուրդին քաղաքական անկախութիւնը՝ իրենց համար «պուրժուական հասկացողութիւն նկատուեցաւ եւ աշտարակային պատգամներ որոտացող մուէզզիներն կողմէ յորջորջուեցաւ «թռչնային», «կաքաւային» ազատութիւն : Չէ՞ որ հայութիւնը թէ տնտեսապէս եւ թէ քաղաքականապէս այս կամ այն չափով կապուած էր օտար պետութիւններուն եւ անոնց օժանդակութեամբ էր որ պիտի բարձրանար, ուրեմն եւ հետեւցուցին հայ պօլշեւիկները, հայութեան ունեցածը ազատութիւն չէ այլ «կախում» կամ շատ շատ «կաքաւային» ազատութիւն :

Անոնց խաւարատես աչքերուն համար ճշմարիտ ազատութիւնը միայն Ռուսաստանի մէջ կար, այն Ռուսաստանին որուն պօլշեւիկ պարագլուխները այսօր բարձրադաղակ կը խոստովանին թէ իրենք

չատ աւելի մեծ չափերով, ե՛ւ տնտեսապէս՝ ե՛ւ քաղաքականապէս կախուած են եւ ենթարկուած՝ օտար կապիտալիստական պետութիւններուն, որոնցմէ այժմ ծնկաչոք ողորմութիւն կը մուրան իրենց 38 միլիոն սովահարներուն համար... Հարցընելու է այժմ մուէզզիւնին թէ ուսերուն ազատութիւնը ներկայիս ինչայի՞ն դարձաւ, որովհետեւ ան այժմ կաքաւային ալ չէ, այլ թերեւս «մըջնային» ազատութիւն:

Այդպէս չվարուեցան հայ պօլշեւիկները՝ այլ ուղեցին որ Հայաստանը տնտեսապէս ազատագրեն հայ կապիտալը?? եւ հայ կապիտալիստ դասակարգերը??? տապալեն, մէկ խօսքով, ուղեցին որ քօմիւնիզմը իրականացնեն հայկական աւերակոյտին մէջ:

Ահա Հայաստանը քօմիւնիստականացնելու այդ ազխտաւոր մտածումն էր որ՝ հայ պօլշեւիկները դարձուց այլամերժ, անհանդուրժող և թշնամի իրենց արիւնակից եղբայրներուն հետ: Ո՞վ որ իրենց ըսէր թէ հայ ժողովուրդը համայնացնելիք տնտեսութիւն չունի, ան կապիտալիստ կը դառնար ու հայաժանքի կ'ենթարկուէր, անխնայ, բան տով, ս. քսորով, Օթտբայէկեան սարսափներով:

Ահա այս ազխտաւոր մտածումին հետեւանքովն էր որ, մինչեւ իսկ այն պարագային երբ Հայաստանի նախորդ կառավարութիւնը, հարկեցուցիչ պարագաներու տակ ու միշտ ի շահ հայութեան և անոր անկախութեան պահպանումին յանձնեց կառավարութիւնը հայ պօլշեւիկներուն, վերջիններս փոխանակ իրենց իշխանութիւնը օգտագործելու հա-

յութեան, քաղաքական պետական ազատութիւնը  
ամրապնդելու, թուրքը սահմաններէն վտարելու եւ  
երկրին քայքայուած տնտեսութիւնը փրկելու, ա-  
նոնք հրաւիրեցին հռչակաւոր եղեռնագործ Օթար-  
պէկովը որպէսզի հայերուն մէջէն ոչ պօլշեւիկեան  
տարրերը մաքրազարդէ . . . : Ու բանտերը լեցուե-  
ցան, 1500 սպաները աքսորուեցան, սկսաւ կացի-  
նահարութեան շրջանը, եւ ընկան տարիներով Հա-  
միտին ու Յարին դէմ մաքառած ու ընկերվարու-  
թեան հաւատացող լաւագոյն յեղափոխականները :

Ընկերվարութեան անունը եւ նուիրական ի-  
տէպնները սրբապղծող այդ եղեռնածին մտայնու-  
թիւնն էր դարձեալ որ ըմբոստացուց հայ ժողո-  
վուրդը մէկ անձի նման, որ ձմեռը ցուրտին ու ձիւ-  
նին անօթի, անդէն նախապատիւ սեպեց սարը  
բարձրանալ ու չեմթարկուիլ հայ պօլշեւիկեան  
սարսափներուն :

Այդ մտայնութիւնն էր որ իր ոճրային արդա-  
սիքներով եւ հայ ժողովուրդին զանգուածային  
նահանջովը դէպի Զանգեզուր՝ ուշադրութիւնը  
գրաւեց ուս պօլշեւիկ պարագլուխներուն, մասնա-  
ւորաբար Լէնինի որ, իրողութեան տեղեկանալէ  
յետոյ, տասպալեց հայ պօլշեւիկ դահլիճը, նոր հայ  
պօլշեւիկեան սովիէթ մը ընտրեց, վարչապետու-  
թեամբ Միասնիկեանի, որուն յանձնեց նամակ մը,  
որով բացէն ի բաց կը յանդիմանէ հայ պօլշեւիկ-  
ներուն կատարած խստութիւնները եւ կ'ըսէր .

«Աւելի մեղմութիւն, աւելի գիջողութիւն դէպի  
մտաւորականութիւնը, դէպի մանր պուրժուազին  
եւ յատկապէս դէպի գիւղացիութիւնը» :

Եթէ, ինչպէս սովոր են կրկնելու արտասահմանի նորընծայ պօլշեւիկները, Հայաստանի հայ պօլշեւիկները ոճիրներ չէին գործած իրենց իսկ ազգակիցներուն դէմ, որոնց չկրնալով տոկալ լեռը ապաստանեցաւ ժողովուրդը, հապա թող պատասխանն տան սա հարցին թէ՛ ինչո՞ւ Լէնինի կողմէ տապալուեցաւ անոնց դահլիճը: Թող պատասխանեն՝ ի՞նչ հարկ կար որ Լէնինի պէս բազմազրադու դեկաւար անձը պօլշեւիկեան աշխարհին մէջ, հարկադրուէր իր գրիչը շարժելու, «մեղմութեան» հրաւիրելու համար իր հայ ընկերները, եթէ անոնք հալածանք չէին գործադրած «հայ մտաւորականութեան, արհեստաւորութեան եւ մանաւանդ գիւղացիութեան» դէմ:

Ինչոր այս եղերական դէպքերը անխուսափելի արդիւնքն էին հայ պօլշեւիկներու սնուցած այն մտայնութեան՝ որով պօլշեւիզմը կ'ուզէին ներկայացնել հայ ժողովուրդին համար որպէս տնտեսական անհրաժեշտութիւն եւ ոչ թէ քաղաքական հարկադրութիւն մը:

Իրողութիւնը բացայայտ է: Եթէ հայ պօլշեւիկները զրադուէին հայութեան քաղաքական անկախութեան խնդրովը, շատ ու շատ դրական ծառայութիւններ ունէին մատուցանելի՛ք՝ կրնային թերեւս դուրս ձգել տալ թուրքը մեր սահմաններէն եւ ոուսերուն քարեացակամութեամբ ամբապնդել մեր քաղաքական դիրքը մեր դրացիներուն հանդէպ ու ապա նուիրուիլ ներքին ստեղծագործ աշխատանքի: Իսկ եթէ՛ ինչպէս որ ըրին արդէն, իրենց միակ մտահոգութիւնը դարձնէին հայութեան տըն-

տեսութիւնը քօմիւնիստականացնելու, բնականա-  
 րար որեւէ դրական աշխատանք չունէին կատարե-  
 լիք, որովհետեւ դործ ունէին ժողովուրդի մը հետ՝  
 որմէ մէկ զոյգ եղ ունեցողին պիտի ըսէին՝ դուն  
 կապիտալիստ? Ես, իսկ իրենց ցախաւեր ու ծիծա-  
 ղելի քայլերը չծափահարողները հակապօլշեւիկ  
 պիտի կոչէին ու բանտը պիտի լեցնէին, պիտի ջա-  
 նային բռնի դասակարգեր ստեղծել, ու զանոնք  
 բռնի շերտաւորել, որպէսզի մէկուն ըսէին՝ դուն  
 ֆօմիւնիստ ես, քեզ կը պաշտպանեմ դուն կրնաս  
 թալանի մասնակից ըլլալ, իսկ միւսին՝ դուն կա-  
 պիտալիստ ես, պէտք է թալանուիս ու հալածուիս :  
 Այս արդիւքը անխուսափելի էր կ'ըսեմ, այն պա-  
 հուն իսկ երբ հայ պօլշեւիկները չէին կրնար զանա-  
 զանել դէպի պօլշեւիզմը մօտեցնող մեր հարկեցու-  
 ցիչ պայմանները, որոնք ֆաղափական էին՝ կը  
 բխէին մեր պետութիւնը՝ քաղաքական ազատու-  
 թիւնը պաշտպանելու անհրաժեշտութենէն, եւ ոչ  
 թէ տնտեսական՝ որ արդիւնքը ըլլար զարգացեալ  
 կապիտալիզմին եւ դասակարգային շերտաւորման :

Բարերախտարար Հայաստանի նոր պօլշեւիկ  
 վարչապետ Պ. Միասնիկեան հասկցած կը թուի  
 այս ճշմարտութիւնը եւ համաձայն Լէնինի հրա-  
 հանգներուն սկսած է կ'ըսուի «մեզմ» քաղաքակա-  
 նութեան մը հետեւիլ :

Պ. Միասնիկեանի կարծիքով այլեւս քօմիւ-  
 նիզմին խրտուիլակը պէտք չէ հալածանք ստեղծէ  
 հայ ժողովուրդին մէջ, որովհետեւ «հայ դիւզա-  
 ցիութեան մէջ դեռ եւս շերտաւորում չկայ» եւ կը  
 խոստովանի թէ «Մենք չենք կրնար բռնի շերտաւոր-



բում մտցնել գիւղացիութեան մէջ» . շատ հասկնալի բան է , դասակարգային շերտաւորումը յառաջ կուգայ միմիայն տնտեսական գրութեան զարգացումին շնորհիւ եւ ոչ երբեք սուինով , բռնի , եւ կամ հրամանագրերով :

Պ . Միասնիկեանը մինչեւ իսկ հաճելի սրամբտութեամբ մը Հայաստանի մէջ քօմիւնիզմը ծաղրելով կ'ըսէ . «Քօմիւնիզմը հայ գիւղացիութեան համար կը նշանակէ հող եւ սերմնցու ունեւալ իսկ հայ գործաւորին համար տաֆ կերակուր ուտել եւ կուտ ըլլալ» :

Եթէ այս ձեւով հայ պօլշեւիկները ըմբռնեն Հայաստանի քաղաքական եւ տնտեսական առանձնայատուկ պայմանները , եւ ջանան իրենց հեղինակութիւնը եւ ուսերուն հետ իրենց բարեկամութիւնը օգտագործել ի նպաստ Հայաստանի անկախութեան պահպանման , անոր քայքայուած տնտեսութեան վերաշինութեան ու ո'չ թէ քաղաքական հալածանք սկսին իրենց ազգակիցներուն դէմ , վագեն քօմիւնիզմի ստուերին ետեւէն ու սովահար դարձնեն երկիրը , ահա այն ժամանակ է որ իրենք կը դառնան հայ ժողովուրդին ՃՇՄԱՐԻՏ . ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ , որոնց ամէն հայ պիտի ուզէ աջակցիլ եւ որոնց դէմ ո'չ Չանկեզուրը պիտի ըմբոստանայ ոչ Տաթեւը , որովհետեւ անոնց ուզածը ոչ թէ երկրին իշխանութիւնն է կամ աթոռը , այլ պարզապէս հալածանքի դադարումը , հայութեան անկախութեան պահպանումը՝ ինչ անունի տակ կ'ուզէ ըլլայ , հոգ չէ թէ պօլշեւիկեան մնայ ան :

Հայ ժողովուրդը ոչինչ ունի ոուս ազգին եւ

անոր ստեղծած քաղաքական կամ տնտեսական շար-  
ժումներուն դէմ : Հայը բարեկամ էր ցարին օրուան  
ոռւս ժողովուրդին եւ բարեկամ կը մնայ պօլշեւիզ-  
մի օրուան ժողովուրդին ալ : Պօլշեւիզմի եւ քօմիւ-  
նիզմի դրութիւնը մեզ համար իր էութեամբը հա-  
կառակ է տնտեսական արդի զարգացումին եւ ձա-  
խողութեան պիտի մատնուի ինչպէս որ ձախողած  
է ցայժմ : Բայց այնուամենայնիւ մենք բարի ցան-  
կութեամբ լեցուած մեր ոռւս դրացիներուն հան-  
դէպ անվերապահօրէն կատարեալ յաջողութիւն կը  
մաղթենք իրենց , ու եթէ կրնան իրենց սուինովը  
յեղաշրջել տնտեսական դրութիւնը , թող շարունա-  
կեն փորձել իրենց երկրին մէջ , մենք միայն կըր-  
նանք խնդակցիլ իրենց յաջողութեանը :

Իսկ հայ ժողովուրդին համար պօլշեւիզմը է եւ  
կը մնայ իբր սոսկ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑ , այդ իսկ  
պատճառով , եթէ ոչ ամբողջ հայ ժողովուրդը այլ  
գէթ ընկերվարական Դաշնակցութիւնը սրտի կա-  
տարեալ գոհունակութեամբ կրնայ ըսել՝

Կեցցէ սովիէթական Ռուսաստանը , Եթէ ԱՆ  
ԹՇՆԱՄԻ ԶԷ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ :

## Թէ ԻՆՉՈ՞Ւ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ

### ԲԱՅՑ ՈՉ ՊՕԼՇԵՒԻԿ

Մենք ջանացինք բացատրել գլխաւորաբար թէ՛ ի՞նչ է ընկերվարութիւնը: Այդ բացատրութիւնով մենք միանգամայն պատասխանած եղանք Հ. Յ. Դաշնակցութեան թէ՛ աջակողմեան եւ թէ՛ ձախակողմեան քնադատներուն, որոնցմէ առաջինները կ'ըսէին թէ «Դաշնակցութիւնը ծայրայեղ ընկերվարական ըլլալուն, իսկ երկրորդները թէ՛ նուազ ընկերվարական ըլլալուն եւ պօլշեւիկ չդառնալուն համար ազգը կործանեցաւ»: Մենք հարկադրուեցանք առանձնապէս ծանրանալ ընկերվարութեան էութեան մասին՝ որովհետեւ երկու կարգի քնադատներուն ալ յարձակման կէտը միեւնոյնն է:

Այժմ մեզ կը մնայ համառօտել եւ եզրակացնել թէ՛ Հ. Յ. Դաշնակցութիւնը ընկերվարութիւնը ընդունեց եւ սակայն չհետեւեցաւ ոռւս պօլշեւիկներուն՝ որովհետեւ՝

Ա. — Դաշնակցութիւնը բաղկացնող տարրերը

գիւղացի, գործաւոր, արհեստաւոր, մանր առեւտրական եւ մտաւորական իրենց տնտեսական վիճակին բերումովն իսկ՝ դէմ են կապիտալիստական շահագործման եւ հետեւաբար իրենց համար իբր հեռաւոր իտէալ՝ այն տեսակ վարդապետութիւն մը պիտի ընտրէին որ խոստանար վերջ տալ շահագործումին ու թշուառութեան, իսկ այդ վարդապետութիւնը է եւ կը մնայ միայն ընկերավարութիւնը :

Բ. — Ընկերավարութիւնը սակայն ըլլալով տրնտեսական վարդապետութիւն մը եւ ծնունդը կապիտալիստական կարգերուն՝ իր զարգացումն ու ամբողջական սկզբունքներուն իրականացումը պայմանաւորուած է նոյն այդ կապիտալիստական տնտեսութեան զարգացումով : Որքան որ երկիր մը ետ է մնացեր ճարտարարուեստի զարգացման մէջ, որքան որ զուրկ է կապիտալիստական շահագործման կատարելագործեալ ձեւերէն, այնքան եւ հեռու է ընկերավարութեան մօտենալէ :

Գ. — Հակառակ այս բացայայտ իրողութեան՝ ռուս ընկերավարականները հրապարակ դրին սօլշեւիզմի վարդապետութիւն մը, որ ուրիշ բան չէր՝ բայց թէ՛ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՀԵՌՄԻՆՈՐ ԻՏԷՍԼՆԵՐԸ ԲՈՒՆԻ, ՍՈՒԻՆԻ ՌԻՃՈՎ ԻՐԵՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՓՈՐՉ ՄԸ, որ սակայն կատարելապէս ձախողութեան մատնուեցաւ, որովհետեւ դէմ էր ընկերավարութեան զարգացման օրէնքներուն՝ որոնք իրենց կարգին պայմանաւորուած են տնտեսութեան ու ճարտարարուեստի զարգացումով, որմէ իսպառ զուրկ էր Ռուսաստանը :

Դ. — Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրեւ ընկերվա-

րական կուսակցութիւն մը՝ հետեւեցաւ արեւմտեան ընկերավարականներու օրինակին, եւ ոչ թէ ոուս պօլշեւիկներուն՝ որովհետեւ համոզուած էր թէ՛ ընկերավարութեան հեռաւոր եւ ամբողջական իտէալները կարելի չէ իրականացնել մէկէն, բռնի կերպով, այլ աստիճանաբար՝ համաձայն ամէն մէկ միջավայրի տնտեսական զարգացման եւ առանձնա-յատուկ պայմաններուն :

Ե. — Հ. Յ. Դաշնակցութիւնը մնաց ընկերավարական ու չդարձաւ պօլշեւիկ, որովհետեւ ընկերավարականները ամբողջ աշխարհի մէջ, իրենց ծրագիրը երկու մասի բաժնած են՝ նուազագոյն եւ առաւելագոյն. առաջինով իրենց պայմաններուն եւ տնտեսական զարգացման չափով՝ պահանջներ կը ներկայացնեն կապիտալիստներուն, իսկ երկրորդին միայն աստիճանաբար կ'ուզեն հասնիլ : Մինչ ոուս պօլշեւիկները խորհեցան թէ՛ միանգամէն կարելի է իրականացնել ե՛ւ նուազագոյն ե՛ւ առաւելագոյն պահանջները եւ որոնք սակայն հանդիպեցան կեանքի անողոք զիմադարձութեան եւ սկսան ետ նահանջել նորէն զէպի նախկին նուազագոյն պահանջները :

Զ. — Հ. Յ. Դաշնակցութիւնը չհետեւելով ոուս պօլշեւիկներուն, արեւմտեան ընկերավարականներու նման հաւատացած էր թէ՛ քաղաքական ազատութիւնները՝ առաջին ու գերագոյն պայմանն են, որեւէ ազգի մէջ, տնտեսական դասակարգային փրօփականտ մղելու համար : Այդ իսկ պատճառով, Հ. Յ. Դաշնակցութիւնը պահելով հանդերձ ընկերավարական իտէալները, իրեն գերագոյն մտահոգութիւնը դարձուց՝ նախ՝ ձեռք բերել հայ ժողովուր-

դին համար քաղաքական ազատութիւն մը, եւ հիմնել անկախ պետութիւն մը, որուն սահմաններուն մէջ միայն հայ ժողովուրդն ալ պիտի կարենար նուիրուիլ ստեղծագործ աշխատանքի, տնտեսութեան ու ճարտարարուեստի զարգացման, որը իր կարգին իրեն հետ անխուսափելիօրէն պիտի բերէր զասակարգային պայքարը եւ ընկերվարական բաղձալի գործունէութիւն մը:

Է. — Հ. Յ. Դաշնակցութիւնը ուրեմն, ընկերվարական ըլլալով՝ ոչ միայն չանտեսեց իր ազգային շահերը, այլեւ դարձաւ ախոյեանը անոնց պաշտպանութեան, ինչպէս 30 տարուան իր հայդուկային կռիւներով, նոյնպէս եւ հանրապետական երկուքուկէս տարիներու շրջանին, իր ստեղծագործական ջանքերով, այն խորին համոզումով թէ՛ ընկերվարութեան վարդապետութիւնը ամենեւին դէմ չէ ազգերու անկախութեան գաղափարին, եւ թէ՛ մինչեւ իսկ ընկերվարութիւնն է որ ամենէն աւելի կը ջանայ ազատել ազգերը քաղաքական ստրկութենէ, որպէսզի կարենայ ազատօրէն իր փրօփականտը մղել, քանի որ քաղաքականօրէն հալածուած եւ ստրուկ ոչ մէկ ազգի աշխատաւորութիւնը սիրտ եւ կամ հնարաւորութիւն ունի իր դասակարգային պայքարով զբաղուելու:

Ը. — Հ. Յ. Դաշնակցութիւնը, իրր ընկերվարական՝ Հայաստանի հանրապետութեան շրջանին, մեր պայմաններուն ներածին չափով՝ գործեց նաեւ ընկերվարականօրէն, պետականացնելով հողերը, ինչպէս նաեւ զանազան օրէնքներ քուէարկելով ի նպաստ աշխատաւոր դասակարգին:

Թ.— 2. Յ. Դաշնակցութիւնը համոզուած էր, թէ մեր պայմաններուն տակ, իր կատարած ընկեր-վարական աշխատանքէն աւելին՝ ոչ մէկ կուսակ-ցութիւն կրնար գործել: Թէ Հայաստանի տնտեսա-կան յետամնաց պայմաններուն մէջ՝ ո՛չ թէ պօլշե-ւիզմը, քօմունիզմը, այսինքն ընկերվարական հե-ռաւոր եւ ամբողջական իտէալները, այլ ընկերվա-րական նուազագոյն պահանջներն իսկ դեռ շատ կու-գային: Այդ իսկ պատճառով Դաշնակցութիւնը դէմ կեցաւ եւ բողոքեց անոնց դէմ՝ որ կ'ուզէին պօլշե-ւիզմը հրամցնել հայ ժողովուրդին որպէս տնտե-սական անհրաժեշտութիւն մը:

Ժ.— 2. Յ. Դաշնակցութիւնը համոզուած էր թէ՛ երկիր մը, իր պայմաններուն մէջ քօմիւնիզմը կարենալ իրագործելու համար, առնուազն պէտք է ունենայ՝ սեփական անկախ տնտեսութիւն մը, փար-տարարութեան բարձրագոյն զարգացում մը, շահա-գործուած հանքեր, հաղորդակցութեան կատարե-լագործուած միջոցներ, բազմաթիւ գործարաններ, մեծկակ դրամագլուխ, եւն. եւն., որպէսզի երբ անհատներու ձեռքէն խլուին այդ միջոցները, ա-նոնցմով կարելի ըլլայ հանրութեան համար իրա-կանացնել համայնական տնտեսութիւն մը: Բայց Հայաստան աշխարհը ոչ մէկը ունէր ատոնցմէ, տրուած ըլլալով ողբալի կացութիւնը հայ ժողո-վուրդին՝ որ նախ իբր անհատ եւ կամ իբր դասա-կարգ սեփականազուրկ էր, հետեւաբար եւ անոնց-մէ ի՞նչը պիտի առնուէր եւ համայնացուէր: Արդ քանի որ երկրին մէջ ո՛չ մէկ հարստութիւն կար կու-տակուած եւ ո՛չ մէկ կատարեալ միջոց ունէր հա-

ըրստութիւն ստեղծելու, ենթադրենք հռչակէինք համայնատիրութիւնը, բայց ինչո՞վ պիտի սնուցանէինք ժողովուրդը, ի՞նչ դրամագլխով, ի՞նչ արդիւնարեքութեան միջոցներով, ո՞ր դործարաններու արտադրութիւնով եւ վերջապէս ո՞ր փոխադրութեան միջոցներով, բաւարարութիւն պիտի տայինք մեր քոմիւնիստ դարձած?? համայնքին պէտքերուն:

ԺԱ. — Հ. Յ. Դաշնակցութեան վերոյիշեալ տեսակէտներուն ճշմարտութիւնը չուտով երեւան եկաւ, երբ հայ պօլշեւիկները որոնք թուրքին, թաթարին եւ ուսին օժանդակութեամբ նուաճեցին մեր անկախ հանրապետութիւնը եւ դայն կարմիր պօլշեւիկեան դարձուցին, որպէսզի ֆօմիւնիզմը իրականացնէին Հայաստանի մէջ, — շատ չանցած՝ երբ իրենք ալ ծանօթացան հայ ժողովուրդին առանձնայատուկ պայմաններուն, անոնց յետամնացութեան, եկան խոստովանելու թէ արդարեւ «Հայաստանի մէջ հող չկայ ընկերավարութեան եւ ֆօմիւնիզմի»:

ԺԲ. — Հ. Յ. Դաշնակցութեան պօլշեւիզմի յաջողութեան մասին սնուցած յոռետես կարծիքները իրականացան բուն իսկ Ռուսաստանի ալ վերարեւմամբ, ուր՝ շարժման հռչակաւոր պարազլուխներէն Լէնին առանց քաջուելու խոստովանեցաւ թէ՛ «չկրցանք իրականացնել ֆօմիւնիզմը Ռուսիոյ մէջ, եւ հարկ է վերադառնալ կրկին դէպի մանր պուրժուական տնտեսութիւնը»:

ԺԳ. Իրողութիւնը այսպէս ըլլալով հանդերձ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ մէկ հակառակութիւն



սնուցած է ոուս ժողովուրդին եւ անոր հետեւած պօլշեւիկեան գաղափարին դէմ, եւ բաւականացեր է ըսելով միայն թէ՛ այդ վարդապետութիւնը մեր միջավայրին անհամապատասխան է, մեր քայքայուած տնտեսութիւնը իսպառ պիտի խորտակուի եթէ մենք փորձուինք գայն իրականացնել մեզ մօտ, իսկ եթէ դուք ձեր պայմաններուն համապատասխան կը գտնաք, գացէ՛ք եւ ձեզ համար իրագործեցէք քօմիւնիզմը, մենք միայն յաջողութիւն կը մաղթենք ձեզ:

ԺԴ. — Եւ սակայն Հ. Յ. Դաշնակցութիւնը տեսնալով ոուս պօլշեւիկներուն նուաճողական քաղաքականութիւնը, որով չքաշուեցան հարուածելու մեր երկրին անկախութիւնը, իրենց երկրին շահերուն համար, նկատեց, սկիզբէն իսկ պօլշեւիզմը իբր հայութեան համար քաղաքական վտանգ մը եւ ջանաց ամէն միջոցաւ անոր առաջքը առնել, գոհացնելով ռուսերուն հիմնական պահանջները:

ԺԵ. — Հ. Յ. Դաշնակցութեան զիջողական այդ քաղաքականութիւնը, մեր շահերուն նուազ վնասակար ձեւով կարելի պիտի ըլլար իրականացնել, եթէ երբեք հայ պօլշեւիկները չկատարէին չափազանց տխուր եւ վնասակար դեր մը, որոնք առաջնորդութեան ամէն գնով մեր երկրին մէջ պօլշեւիկեան ուժի մը եւ ֆօմիւնիստական կարգերը հաստատելու մոլութիւնովը, այն իսկ պահուն երբ բուն իսկ ոուս պօլշեւիկները, իրենք այդչափ խստապահանջ չէին եւ աւելի նուազ զիջողութեամբ գոհանալու տրամադիր էին, գլխաւորաբար թուրքերուն հետ յարաբերելու համար՝ ճամբայ մը ունենալու պայմանով:

ԺԶ.— Արդ, ներկայիս, երբ այլևս ոուս պօլ-  
 շեւիկները սկսած են հրաժարիլ թէկուզ  
 ոչ ընդմիջտ իրենց քօմիւնիստական սկըղ-  
 բունքներէն, երբ հայ պօլշեւիկները անճըր-  
 կած մնացեր են ի տես քարուքանդ տնտեսութեան  
 մը Հայաստանի մէջ, եւ իրենք ալ մէկդի դրած են  
 երկիրը համայնացնելու իրենց փափաքը, երբ միւս  
 կողմէ հայ ժողովուրդին որոշ մէկ մասը հայ պօլ-  
 շեւիկեան սարսափներուն պատճառով լեռն է ա-  
 պաստաներ եւ կամ Պարսկաստան, երբ վերջապէս,  
 հայ պօլշեւիկները իրենց այլամերժ, վանողական  
 ընթացքով, Հայաստան աշխարհը դարձուցին խորթ  
 դաւակ մը գաղութներու հայերուն համար, որոնց-  
 մէ ոչ մէկ օգնութիւն կը հասնի, երկրի տառասլած  
 եղբայրակիցներուն, եւ այնքան ատեն որ տակաւին  
 ոուսերը մեր սահմաններուն մօտ են, եւ զօրաւոր՝  
 Հ. Յ. Դաշնակցութիւնը, ոչ մէկ ատեն պահանջ ու-  
 նի կառավարութիւնը իր ձեռքը անցնելու. քող ան  
 մնայ պօլշեւիկեան, եւ սակայն այն գերագոյն պայ-  
 մանով որ հայ պօլշեւիկ կառավարութիւնը յարգէ  
 Հայաստանի անկախութիւնը, ջանայ վայրկեան  
 մը առաջ դուրս վնտել քուրճերը մեր սահմաննե-  
 րէն, ջանայ պատրաստուիլ քրքահայ նահանգներու  
 գրաւման, եւ մանաւանդ, ԴԱԴՐԵՅՆԷ ՀԱԼԱԾԱՆԻՔԸ  
 ՈՉ ՊՕԼՇԵՒԻԿԵԱՆ ՏԱՐԲԵՐՈՒՆ ԴԷՄ :


\* \* \*

Այժմ մեզ համար պարզ է թէ ինչո՞ւ Հ. Յ. Դաշ-  
 նակցութիւնը մնաց անխախտ իր ընկերվարական  
 սկըղբունքներուն վրայ եւ սակայն ինչպէս ամբողջ  
 աշխարհի ընկերվարականները՝ չհետեւեցաւ՝ ըն-

կերվարական հեռաւոր խտէալները այժմէն իսկ ,  
բոնի իրականացնելու պօլշեւիկեան ձախող քաղա-  
քականութեան՝ եւ թէ ինչպէս՝ պօլշեւիզմը ընդու-  
նելով որպէս մեզ համար զուտ քաղաքական վտանգ  
մը , միշտ ալ տրամադիր եղած է հնարաւոր զիջում-  
ներով անոր առաջքը առնելու , եւ վերջապէս թէ  
ինչպէս Դաշնակցութիւնը երբեք աչք չունի ներկա-  
յիս յափշտակելու կառավարութեան ղեկը պօլշե-  
ւիկներէն , որոնք եթէ դադրեցնեն հալածանքը հա-  
կառակորդներուն դէմ եւ յարդեն արիւնով գնուած  
մեր անկախութիւնը կրնան ամէն աջակցութիւն ա-  
կնկալել հայ մեծ կուսակցութենէն : Որովհետեւ Հ .  
Յ . Դաշնակցութեան հիմնական նպատակն է եղած  
ՄԻԱՅԵԱԼ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒ-  
ԹԻՒՆԸ , խնդիր չէ թէ ի՞նչ միջոցաւ եւ կամ որո՞ւ  
միջոցաւ :

(Վ Ե Ր Զ)

[54]



A  $\frac{11}{81184}$

Նոյն հեղինակին կողմէ պատրաստութեան մէջ է  
եւ շուտով պիտի աւարտի

### Տ Ա Ր Ե Գ Ի Ր Ք Մ Ը

Գրական եւ հասարակագիտական

300-350 էջ · 100 պատկերներով

Արժէքաւոր ուսումնասիրական յօդուածներ

Ամերիկահայ կեանքէ :

---

Գրական եւայլն ուսումնասիրական յօդուածներ

պիտի ունենան Ամերիկայի եւ արտա-

սահմանի լաւագոյն գրողները :

---

Մանրամասնութիւնները պիտի ծանուցուին

մամուլով :